 թեան մը ապացոյցը, որ կը գործէ անփոփո-  
 խելի կամօքն Աստուծոյ, սյնպէս որ աշխարհ-  
 ներ ամբապէս հաստատ կը կենան իրենց տե-  
 ղերը, և այդ՝ ո՛չ թէ տեսանելի բաներու  
 միջոցով:

«Ասոնց բոլորը մեռան հաւատքով, առանց  
 ընդունելու խոտուփները. բայց վտաս ըլ-  
 լալով այդ մասին, փարեցան անոնց, յառա-  
 ջացան դէպի անոնք, և ուրիշներու կտակե-  
 ցին իրենց հաւատքին ժառանգութիւնը»:

«Եւ ալ ի՛նչ ըսեմ. վասնզի ժամանակը  
 բաւական չէ որ պատմեմ Սթիվենսի և Մօրսի  
 վրայ, Էյտիսընի և Ռեօնթիկէնի վրայ, Լիթթէրի,  
 Պէլի և Մարթօնի վրայ, որոնք հաւատքի մի-  
 ջոցով երկաթին ծփծփալ տուին ջուրին  
 վրայ, կառքեր լծեցին շոգիին անտեսանելի  
 ուժին, մարդկային ձայնը հազարաւոր մոլոր-  
 ներու հեռաւորութեան մը մէջ լսելի ըրին»:

մարդուն միտքը յարաբերութեան մէջ դրին  
 ծովերու անդիլ կողմը գտնուող ընկեր արա-  
 բածներու հետ, և հրաշքի թեւերուն վրայ  
 բարձրացուցին մարդուն միտքն ու մարմինը  
 ու ամպերու մէջ նաւագնաց ըրին զանոնք:

«Արդ անոնք որ այս բաները ըրին, նախա-  
 պէս տեսիլ քներ տեսան, այսպէս էին հա-  
 ւաքի մարդիկ ու անոնց ամէնքը և անոնց  
 աշխատակիցները, և կամ անոնցմէ առաջ  
 աշխատողները հաւատքով ապրեցան, ու ա-  
 նոնք որ մեռան, հաւատքով մեռան, որպէսզի  
 իրենց յաջորդները իրենց հմուտ թիւնը հիմնեն  
 արդէն եղածին վրայ: Եւ աշխարհ վերջապէս  
 կատարելութեան պիտի հասնի ամէն հաւա-  
 տացեալ մարդոց ձիրքերուն շնորհիւ:

ԳՆԻՄԱՆՈՑ ԿԱՅՍԵՐ ՓԻԼԻՍՈՓԱՏՈՒԹԻՒՆԸ

Հետագան կը քաղենք Գերմանիոյ կայս-  
 րին գլխէն բղխած փիլիսոփայութեանէն, զոր  
 իբրեւ «Կեանքի կանոն» գատաւորած է նոյն  
 ինքն ճշմարիտ և լուսամիտ կենցաղալա-  
 րութեան պոյսման. —

- Տառապանքի մէջ տոկուն եղիր՝
- Անհասանելի իրաց ցանկալ արժէք  
 չունի:

— Օրուան ընծայած պատահում թիւններէն գոհ եղիր. ամէն բանի մէջ լաւը փնտռէ:

— Բնութիւնը և մարդիկ ուսուցմանսիրելով զուարթ եղիր, և զանոնք իրենց խոսութեամբը ըմբռնէ:

— Հազար ու մէկ տաժանելի ժամուց մէջ եթէ ընտիր հատ մը գտնես միտթարէ ինքզինքդ:

— Եթէ շնորհակալութիւն չստանաս ալ՝ մտքիդ ու սրտիդ ազնուագոյնը տուր: Ան որ գործնական կերպով կ'ապացուցանէ զայս, արգարեւ երջանիկ, ազատ ու հպարտ զգալու իրաւոնք ունի: Այնպիսի մէկու մը կեանքը վտեմ է: Կասկածոտ անձը թէ ինքզինքը և թէ ուրիշը հաւատարագէս կը փնտսէ:

— Մեր պարտքն է կարծել թէ ամէն մարդ բարի է ցորչափ ասոր հակառակ ապացոյց մը չունինք. աշխարհս այնչափ մեծ է և մենք ա՛յնչափ փոքր՝ որ ամէն ինչ մեր առանցքին շուրջը չի դառնար:

— Եթէ բան մը կայ որ մեզի փնտսող, զմեզ կը վշտացնէ, ո՞վ գիտէ, թերեւս անհրաժեշտ է արարչագործութեան բարելաւութեան համար:

— Աշխարհային ամէն բանի մէջ, մեռ-

եալ թէ՛ կենդանի, ամենագէտ և ամենազօր Ստեղծողի մը հզօր կամքը կը փայլի. մենք, աննշան մահկանացուներս, այդ դաղանիքը հասկնալու իմացականութիւնը չունինք:

— Ամէն ինչ որ կայ, պիտի ըլլայ աշխարհիս մէջ, և ի՛նչ ալ ըլլայ եղածը, արարած մարդուն միտքը միշտ հաճելի գտնելու է զայն:

ԳՍՅՁԻՐ ՎԻՆՆԻՍ

ԿԵԱՆՔԻՆ ՓԱՅՈՒՔՆ ԿՈՂՄԸ

Հին առասպել մը կը պատմէ թէ ժամանակին թագաւորին մէկը մեղամագձոտութեամբ հիւանդացեր է. բոլոր բժիշկները նայեր և յոյսերին կտրեր են: Վերջապէս շրջիկ ճգնաւոր մը հիւանդ թագաւորին համար դարման մը գտնելու հրաւիրուելով, ըսեր է. —

«Եթէ կեանքէն գոհ ու երջանիկ մարդ մը գտնէք ու անոր շապիկը հանէք ու թագաւորին հագցնէք, թագաւորը կ'ողէկնայ:»

Թագաւորին ծառաները անմիջապէս ճամբայ ելեր և ամէն կողմ՝ գացեր են կեանքէն գոհ ու երջանիկ մարդ մը գտնելու: Հարուստներու տուններուն, աստիճանաւոր ու

տիտղոսաւոր պաշտօնեաներու պալատնե-  
րուն, ազնուականներու բնակարաններուն մէջ  
փնտռեր են, վերջապէս ամէն տեղ ուր որ  
կարծեր են թէ կեանքի փառքը ու երջան-  
կութիւնը գոյութիւն ունի, դիմեր են, սա-  
կայն չեն կրցեր գտնել մէկը որ կեանքէն գոհ  
ու երջանիկ ըլլայ, Ապա սկսեր են հասարակ  
ժողովուրդին ու շինականներուն մէջ փնտ-  
ռել, բայց անօգուտ: Վերջապէս լեռներու  
մէջ գտեր են հովիւ մը որ յայտարարեր է  
թէ ինքը կեանքէն կատարելապէս գոհ ու  
երջանիկ է:


«Է՛յ ուրեմն, հանէ շապիկդ որ թագաւո-  
րին տանինք ու հագցնենք որ աղէկնայ»,  
ըսեր են թագաւորին ծառաները:

«Բայց ես շապիկ չունիմ», ըսեր է հովի-  
ւը, որ իր մերկ մարմննայն վրայ «սպաս» մը  
հագած էր — միակ ունեցածը աշխարհի  
վրայ: Այսպէս, աշխարհի ամենէն գոհ ու  
երջանիկ մարդը շապիկ չունէր:

Հռովմայեցիք պաշարեցին Երուսաղէմը,  
սով մը ահուելի ու ներքին պատերազմ տի-  
րեց քաղաքին մէջ, քաղաքէն փախչողները  
պարխոյններուն առջեւ կը խախչուէին, օրը

500էն աւելի, ամէն օր: Երկրին մէջ 240000,  
և Երուսաղէմի մէջ աւելի քան մէկ միլիոն  
400,000 Հրէաներ կտրան: 400,000 Եգիպտա-  
կան հանքերուն մէջ բռնի կ'աշխատեցուէին:  
Բազումք վայրի գազաններուն առջին նե-  
ուեցան, ժողովուրդը ցրուեցաւ համայն  
աշխարհ:

Մեծն Ֆրէտերիք անգամ մը եկեղեցա-  
կանի մը հարցուց. «Ապացոյց մը ունի՞ք որ  
Սր. Գրոց ըսածները ճշմարիտ են»: Եկեղե-  
ցականը պատասխանեց. «Այո՛, Վեհափառ  
Տէր, Հրէից սոգը Ըսախախչ սպացոյցն է  
սդօր»:



## Մ Ե Ր Վ Ա Ր Ի Չ Ն Ե Ր Ն

Հայ Ազգ. գործոց վարիչներուն կը պակտի  
սովոճուութիւն. իսկոյն կը թուլնան, թախ-  
նելը կը լքեն ու կը հրաժարին գործէ երբ  
տեսնեն որ փոխանակ խրախոյսի և քաջալե-  
րութեան, մանաւանդ գործնական աջակցու-  
թեան, հակակրօութիւն, նախանձ, ատելու-  
թիւն, բամբասանք, զրպարտութիւն և լախ-  
տի հարուածներ կը տեղացնեն իրենց վրայ:


Այս՝ հանրային գործոց վարիչներուն տկարագոյն կողմն է ի վնաս և ի քանգուսն պատուական հաստատութեանց:

Ահնարկ մը նետենք Եւրոպայի ու Ամերիկայի վարիչներուն փորձառութեանը վրայ և պիտի ստիպուինք մենք եւս որդեգրել անոնց սառուցեալ անտարբերութիւնը նոյնպիսի պարագայից մէջ: Դեռ նորերս Պրիան Ծրանայի մէջ մանաբաւուն յարձակումներու կենթարկուի, մահուան կատաղութեամբ կը նախատուի, գործաւորէ մը հրապարակաւ կ'ապտակուի. սակայն Պրիան տեղէն իսկ չշարժիր, պողպատեայ ցիցի նման նա կառչած կը մնայ իր պաշտօնին, խաղաղ, վճռական կորովամտութեամբ կը շարունակէ իր գործը: Աքրուիթ և համախոհներն Անգղիոյ մէջ Լորտերու հզօր գիմադրութեանը կը հանդիպին, կիները վրան կը յարձակին Փարլամենթին մէջ, ընկերին հետ կառքով գացած պահուան վրան կը խուժեն կիները և կը կռուփեն զինքը, յետոյ տանը պատուհանները քորբերով կը փչին: Սակայն Էսքրուիթ, Անգղիոյ նախարարագետը, փոխանակ այլ յայլմէ բլլալու կամ հրաժարելու անվրդով կը կենայ իրեն գործին ու պաշտօնին գլուխը

ու զայն կը վարէ նման անվեհեր ղեկավարին, որ ահռելի փոթորկին իր ղեկին կառչած կը մնայ առանց տեղէն շարժելու:

Ռոզվելթի գլուխը ի՛նչ փորձանքներ բերին, դեռ մտաբեր վրան հոտած հաւկիթ իսկ նետեցին: Ստոլփինի աղջիկը պոմպայով կտոր կտոր բրին, Ծրանց ժողէֆ կոյտեր ծերունազարդ կնոջը մարմինը գանակով խոցեցին ու սպաննեցին. Վիգթորիս բարի թագուհին և որդին Եդուարդ, Վիլհելմ կայսրը, Ռուսիոյ Զարը քանի՞ անգամ մահափորձերու ենթարկուեցան. Ուաշինկիթըն, Կրանթ, Մաքինլի, Թէֆթ և այլն, և այլն ամենաբուռն քննադատութիւններու ենթարկուեցան: Մեծն Լինքըլը վատարար սպաննեցին թատրոնին մէջ: Սակայն Եւրոպայի և Ամերիկայի վարիչներն հրաժարիլ, լքել գործը ու հեռանալ չեն գիտեր, պաղարիւնութեամբ կը շարունակեն իրենց ստանձնած գործը, կիզիչ հեգնութեանց, քննադատութիւններու և երգիծանքներու, ցեխտաղ զրպարտութիւններու, անարգանքներու և հայհոյութեանց տարափներու տակ, կատաղի հակառակութեանց մահաշունչ սպառնալիքներու և յարուցուած բուռն արգելքներու հակառակ:

Այս է ճշմարիտ զինուորի ողին, յաղթանա-  
կեւ է իրենց նպատակը. յառաջ վարելու  
համար իրենց գործը մարտնչել, կուրծք տալ  
է իրենց պարաքը, ուստի արայօժար կը կրեն  
վտանգ, դառնութիւն, խաչ: Ի մի բան միայն  
վտանգն են որ կը լքեն գործ ու պաշտօն երբ  
գոռան փոթորիկներ ու փրփրալից այլքներ  
ծածկեն իրենց նաւերս Օ'ն, քաջ ու արի լեր,  
կուրծք տուր ամէն դիմադրութեանց և  
քուկդ է յաղթանակ:



## Ե Ր Գ Ե Ր ՈՒ ԱՌԱԿՆԵՐ

### ՄՇԱԿԻՆ ՄՍԳԹԱՆՔԸ

Աչքերն աղօս՝ արեւելքին դարձուցած,  
Գլուխը բաց, տրեխն հոնած է անդին.  
Հորիզոնը խորանի պէս կ'առնէ կայծ,  
Ու երկիրքն ալ՝ զերթ կամարը ատճարին:

Արտն է ծլած, ու շողերով ոսկելար՝  
Յոյսի նաբօտ կոպեր է, տես, ամէն իր,  
Մեծ խորանին առջեւ փռուած գորգ դալար,  
Ուր մշակը կ'աղօթէ լուռ, ծնրադիր,

Ոսկի՛ արեւ յոյզն ու հուրը կը քամուին՝  
Թափանցելով հասկերուն մէջ աշն դեզ դեզ,  
Մինչեւ իջնայ օրհնեալ շեղբ մանդաղին,  
Ըլլան կեանքին նուիրական ողջակէզ:

Տէ՛ր, քեզ աւանդ, վաղուան հունձքիս Աջդ  
դէր,  
Ու երբ առտուն դառնամ արտիս ծոցը հեշտ,  
Աւերակ մը կամ՝ ափ մը յարդի մոխիր  
Թողած չըլլայ Քուրդին հուրն, սուրն սն-  
կուշտ:

Իրիկուան երբ դառնամ բոյնս շէն՝ ու վարդ,  
Հոն քեզ պաշտող հինգ զաւակներս իմ  
արդար,  
Ճամբուն ծայրը միշտ ողջունել դան զուարթ,  
Զլա՛ն օր մ'ալ թէ «Քոյրերնիս տարի՛ն  
հա՛յր»:

Երկրպագեց, պագաւ հողը ցօղաթարմ,  
Ու բրինջ կը տեղացնէր հարուածներ.  
Կը կաթկթէր ճակտէն քրտինքն անդադրում,  
Հողի կո՛շտ մ'էր զար փշրելու կը ճգնէր,  
. . . Գանկոսկրի մը մխրճուած էր գործին  
սուր,

Յոշտած էր անտէր դիակ մ'անդադաղ-  
նշխար մ'էր նահատակի՛ ուրկէ լիւր՝  
Կան գաւառի գաշտերուն մէջ կիսաթմաղ:



Զօհե՛ր, հողի պատանքէն ալ զրկուած:  
Հարեւան Հայ մշակ մ'էր սյո հարկաւ,  
Ուր քահանան չէր աղօթած անկասկած,  
Եւ հէք սյրին ս'ւր բլլալը չգիտցաւ:

ԱՇՈՏ

Հացէ զուրկ Հայեր մսմի՛ պէս հալին,  
Գործ մ'է ազգային՝ օգնել սովեային:  
Ազքատը հոգալ՝ գործ յարեպաշխի,  
Որուն ամէն միտք շուտով կը հաշտի:

Մարդկայի՛ն գործ է հիւանդին տալ գեղ,  
Ածուխ, կաթ ու միս, վառել իր կանթեղ,  
Մանաւանդ ա՛ն որ «աղքատ—հիւանդ է»  
Ու գուցէ անդեղ՝ հոգին աւանդէ . . . :

Գթացե՛ք, ո՛վ դուք որ ցաւեր չունիք,  
Եւ սեղանին շուրջ բաղմած երջանիկ  
Կաղանդ կը շինէք, գթացե՛ք հէքին,  
— Աստուած թող օրհնէ զքեզ սրտագին:

ՈՅԱԻ ՈՐԹ

Յամ իջի՛ր՝ Քրիստոս խաչի բարձունքէն,  
Քո տեղն գրաւեց Շահու Որթ՝ ոսկի,  
Նորա մետաղեայ շանթող պատգամէն  
Մարդկային հոգին առաւել յուզուի:

Լուե՛ց, Յիսուս, Քո Աւետարան,  
Սիրո՛յ, գորովի՛ մարդատէր կտակ  
Մարմնի բնազդն է այդ գերիշխան  
Փրկութեան Աստուած Ոսկի Զուարակ:

Նորա առաջի ծխասիրտ կուսան,  
Նմա խոնարհէ թագակիր գազաթ  
Ահիւ ծունր կրկնէ ճոխն ու շինական,  
Բագինն խնկարկէ հանճարեղ ճակատ:

Քրիստոնեայ կրօնի հովիւն անձնուրաց  
Որթին առաւել երկիրպագանէ,  
Քո խաչն չէ ընդ ուսն, Քեղ չէ հետեւած  
Սուտ ու կեղծաւորն մամոնայն պաշտէ:

Անոք որքին հաց ձրի չէ Յիսուս,  
Թշուառին ուտեստ ի գութ չեն բաշխեր,  
Հոգւոյն զգացո՛ւմն, սիրտն, մօր հաւատն  
լլյս

Պահանջեն, Աստուած, իրր նիւթ գրաւել:

Հայ տաճար գիմէ խումբ հէք մշակաց  
Աղօթել, մեղմեղ վիշտեր հրեղէն,  
Փորձիչն մերձենայ փոխ ոսկի և հաց  
Ասէ, Հոռ'մն ծանիր, քեզ տայ սյս ամէն:

Շատեր սուրբ գաղանիք, պատիւն անձին,  
 Հեշտիւ կը ծախեն եղբօր փառքն համակ,  
 Բազումք ճոխ համբաւ, վարկ, ձեռք ընկերին  
 Անձնական շահու մործեն պատարագ:

Խեղճ Յիսո՛ւս կարծես տասն և ինն գարեր  
 Դու և Քո սուրբ կրօն տիրէք աշխարհի.  
 Խաչ — Դրօշ գերու թեան նշան է գարձեր,  
 Աստուած հռչակէր Շա՛հ, Բա՛խտ ու Ո՛սկի:

ՄԻՔԱՅԷԼ ԹԷՐԼԷՄԷՉԵԱՆ

ՉԻՍ ԷՆ ՏԱՐ

Մշակ աղբեր, գաշտէն կուգաս՝  
 Դաշտից խաբար մը ունի՞ս,  
 Ասա՛, Լաս՛, դու չտեսս՞ր  
 Իմ կարօնս, իմ լաճիս:

Մշակ աղբեր, արտէն կուգաս,  
 Թեւ ու թիկունքդ հարթ եղած.  
 Սիրածս կարօն, պաշտածս կարօն  
 Ո՞ր տեղ թողեր ու կուգաս:

Հնձուր հօտաղ, պոյիդ մեռնիմ,  
 Իմ կարօնս ի՞նչ լուր կայ.  
 Ո՞ւր տեղ մնաց է՞ իմ կարօն.  
 Եարա՛ք, արդեօք ո՞ւր տեղ կայ:

Չէյրան կռուկի, ձենիդ զուրպան,  
 Տեսս՞ր արդեօք կարօնս,  
 Սարէն կուգաս, ձորեն կուգաս,  
 Հոն չգասս՞ր կարօնս:

Հայւոր աղբեր, ոտքիդ մատաղ,  
 Ո՞ւր տեղ փնտռեմ իմ կարօն.  
 Ճար մը արա՛, խօսք մը ասա՛,  
 Ասա՛, ո՞ւր կայ իմ կարօն:

Տեսայ քուրիկ, կարծ կարօն,  
 Փռուած մնար անկենդան.  
 Սեւ Նեփրովթի սարի կողքին  
 Ինկած մնար անկենդան:

Ձար Քրդերի հրացանէն  
 Գռնտ կապարը դուրս թռաւ.  
 Կտրիճ կարօն է՞ զնտակեն  
 Արիւն թաթախ վար ինկաւ:

Է՛հ սեգ սարի մէկ լանջին տակ,  
 Փոս մը բացի արցունքի.  
 Կտրիճ կարօն մի քարի տակ  
 Արձունքներովս թաղեցի:

Ա՛խ իմ կարօն, վա՛խ իմ կարօն,  
 Սեւ հողին տակ պառկած կայ:

Է՛՛հ սեւ հողը, է՛հ սեւ տիւշման  
Իրեն ընկեր գրկած կայ:

Է՛հ, սեւ ֆալաք, տիւշման ֆալաք,  
Զա՛րկ սեւ գլխիս զիտ էլ տար,  
Զուլուժ աչխարհ, կամ պաղ ֆալաք.  
Սպիտակ մաղերս հողին տար:

ՀՄԱՅՆԱԿ ԱՄԻՐԵԱՆ

Զանա՛ որ չըլտս կիրքերուդ մոլին  
Հեռի քեզանից գինին ու օղին,  
Վայ կարգա՛ միշտ դու անխելք խմողին.  
— Զփրթի կանթը ականջիդ օղին:

Ծայրը չկա՞յ հաց ու պանիր,  
Պարսպ կեցիր, դուն մի՛ բանիր.  
Հաշի՛ւ գիտցիր, դքեղ ծանիր,  
Վաստակդ այլոց դուն մի՛ տանիր:

Շուսյլ մարդը չունենար տուն,  
Նեղ սիրտ մարդը չունենար քուն.  
Զար սիրտ մարդը չունենար գոյն,  
Շուսյա կինը չունենար բոյն:

Զորս յատկու թիւն, — մեղքէն դողալ,  
Ստակ տալով խաղ չխաղալ:

Երբէք պարտքի մէջ չըղալ,  
Աղէկ ճանչնալ իրեն սխալ:

Տեղին՛ն ըրէ կատակը,  
Ծուռին ցուցուր շիտակը.  
Դեռ չչափած յատակը՝  
Մի՛ սուզեր դուն վտակը:

Երկինքն ի վեր դուն մի՛ թքներ,  
Թուքդ կիյնայ քո ճակատ.  
Քենէ մեծին խօսք մի՛ նետեր  
Խօսք կը բերես քու վրադ:

Թեթև ըրէ՛ քու կերակուր,  
Վրադ գլուխ ալ միշտ մաքուր,  
Զբարկանա՛ս երբէք ի դուր,  
— Տարիքդ հասնի մինչև հարիւր:

Թե ազահն և թէ կծծին ջրդողեալի նը-  
մանին, ս՛րբան ընուն ծարաւնին դարձեալ  
փափաքին:

Հաւերուդ կուտ տուր առատ, կակու-  
լով ձու ամէն, զաւակացդ տուր խրատ որ  
պարտքերնին կատարեն:

Եղիր դու միշտ միամիտ, բայց ոչ տխմար  
ու անմիտ. սահման ունի ամէն բան, չափ  
չգիտցողն է անմիտ:

Հանգիստ ապրիլ ուղողը, աշխատութիւն  
թող սիրէ, մարդասէր եմ ըսողը, թող շինէ  
միշտ բայց չաւրէ:

Կտխապատիւ համարէ, մնալ աղքատ,  
աշխատող, քան անիրաւ վաստակով խիստ  
մեծատուն ու զրկող:

Ստացե՞ր ես լաւ անուն, նայէ որ միշտ  
լաւ մնայ, ձեռք ձգե՞ր ես ճոխութիւն, լաւ  
անտեսէ որ չէրթայ:

Տան հիմերն են տան տիկինք, տան զար-  
դերն են լաւ որդիք, կին թէ եղաւ անառակ,  
տանը մէջ կայ մեծ կրակ:

Այրը կնոջ իշխանն է, թէ դիտցաւ իշխել  
անոր, այրը կնոջ գերին է, եթէ իր անձը տայ  
անոր:

Կնոջ լացին, ծիծաղին բնաւ պէտք չէ  
հաւատալ, անոնց վարպետ շարժմունքին  
չըլլայ խաբուիս պարզաբար:

Ամթխածին բան առես, կը զգուշանայ  
կը լռէ, անառակն թէ խրատես անկէ վատ-  
թարը կ'ընէ:

Խելօքն ունի կարգ կանոն, անխելքին ա-  
մէն օր տօն: Ամէն աղդ ունի կրօն, անզգամն է  
անկրօն:

Անօգուտ է խրատ տալ, անզգամ՝ յու-  
մառեալին: այս նմանի քարոյ տալ խուլ ու  
համը ժողովուրդին:

Պատճառ կերպ կերպ փորձանաց մեր  
յանցանքն է շատ անգամ. բայց բան ու գործ  
ենք արած պատճառ բռնել սատանան:

Մարդս բանիւ, էշը դանիւ խրտխուտուն  
իրենց գործին, յամառ մարդը միայն բանիւ  
չհամոզուիր ճիշդ խօսողին:

Հարուստը մինչև ողորմի, աղքատին բա-  
շը բուսնի. խմորն մինչև պատրաստուի տա-  
պակին մէջ իւղն կայրի:

Գութ ունեցիր, աղքատաց ձեռք կար-  
կառէ խղճալեաց, թէ ճշմարիտ լաւ մարդ  
ես, կարեկից լեր թշուառաց:

Մարդ ժրաջան, գործունեայ, ճարէ զիւր

հացն առօրեայ. իսկ այր յիմար, ծղլ, ապուշ, կարօտ հացի կանուխ, ուշ:

Արհեստ սորվիլ չես ուզեր և փող շահիլ կը ցանկաս, ձիուդ անգործ և անբեռ գարի և խոտ ինչո՞ւ տաս:

Կապիկ կերաւ մտծունը, խեղճ արջին թունջին քսեց, կը պրծի յանձաւորը, իսկ անմեղը կ'ուտէ ծեծ:

Տիկնոջ արածըն փորձանք է աղախինին յանձանք է. տիկինը կարգարանայ, աղախինին պատիժ կայ:

Վաստկածդ լաւ պահէ, օր մը քեզի պէտք կ'ըլլայ. ապագադ ապահովէ, ամառէն ետք ձմեռ գայ:

Ճանճը՝ զոր կրնաս փետուրով մը վանել, դաւազանով կամ բիրով մի՛ հայլածեր. Նոյն պէս այն սիրտը, որ կրնաս երկու անուշ խօսքով շահիլ, կձու և դառն յանդիմանութիւններով մի՛ խոցեր:

Ամենէն օգտակար և շահաւոր զբաղմունք ս'ըն է, հարցուց տղայ մը իւր հօրը՝ «Ուսանիրը պատասխանեց հայրը:

Եթէ զաւկիդ ապագան խորհիլ դուն այսօր անհոգութեամբ զանց ընես, ի շափահասութեան պիտի հարկադրէ քեզ ցաւով և ողբով մտածել:

Կեանքը երկաթ ուղի մ'է, տարիները կաշարաններ են, վերջին կայարանն է մահը. բրժիշկները հնոցպաններն են և քահանաներն ալ գօնախւքթօռները:

Գեղեցիկ մտածում մը փութաւ վայրկեանին արձանագրել, ժամանակ վերջ յիշողութիւնը կը տկարանայ միեւնոյնը՝ իր առջի թափովը վերարտագրելու:

Ապագաման մտածմունքը ուղեղը կը լլատէ, յիշողութիւնը կը բթացնէ, ու միբար կը տկարացնէ:

Ուղղախոհութիւնը՝ հակառակորդներ, ճշմարտախօսութիւնը՝ թշնամիներ կը հա-

նեն նախ դեմք: Այդ առաջիններուն մէջ են ապագայի անկեղծ և ճշմարիտ բարեկամներդ:

—

Եթէ վայելուչ և վճռական բայց վերաւորիչ նամակ մը գրած ես, մինչև յաջորդ օրը պահէ, և յաճախ նամակը իր հասցեին երբէք պիտի չզրկես:

—

«Անեցած բարեկամներդ», կ'ըսէ Շէյքսփիր, «որոնց հաւատարմութիւնը փորձուած է, պողպատէ դամերով հաստատէ հոգիիդ մէջ»:

—

### ՕԳՏԱԿԱՐ ՍԿՁԲՈՒՆՔՆԵՐ

(ՅԲԱՆՔԻՆՆ)

Ծուլութիւնը ժանգի կը նմանի, աւելի շուտ և շատ կը մաշեցնէ՝ քան որչափ աշխատութիւնը չմաշեցնէր:

Եթէ կեանքդ կը սիրես, խնայելով գործածէ ժամանակը, որովհետև ժամանակը կեանքի զգեստն է:

Ծուլութիւնը անչափ դանդաղ կը քայլէ որ աղքատութիւնը շուտ կը հասնի ետեւէն՝

Այն որ միայն յուսով կ'ապրի, անօթութեամբ կը մեռնի:

Առանց նեղութեան շահ չկայ:

Անօթութիւնն՝ աշխատող մարդուն դռնէն ներս կը նայի, բայց չհամարձակիր ներս մտնել:

Եթէ կ'ուզես որ գործերդ կատարուին, դուն ըրէ. եթէ չես ուզեր որ կատարուին ուրիշ մը զրկէ:

Եթէ հաւատարիմ ծառայ մը կ'ուզես ունենալ և կը սիրես, դուն ծառայէ քեզի:

Երկրագործն՝ ոտքի վրայ՝ աւելի մեծ արժէք ունի՝ քան ազնուական մը նստած:

Ջրհորը ցամքելէն վերջն է որ ըստին յարգը կը ճանչնանք:

Դրամին յարգը ճանչնալ կ'ուզե՞ս, փոքրամ առ:

Խոշոր նաւերը կրնան համարձակիլ մեծ ծովերու մէջ ճամբորդել, բայց փոքրերը կը պարտաւորին եղբրքին մօտ գործել:

Հպարտութիւնը իր նախաճաշը կ'ընէ առատութեան հետ, կը ճաշէ աղքատութեան հետ և կ'ընթրէ ամօթին հետ:

Պարտքերն իրենց կռնակին վրայ կը կրեն ստախոտութիւնը:

Աւելի սիրէ՛ պառկիլ՝ առանց ընթրելու,  
բան պարտքով արթննալ:

Գրամ շահելու ամենամեծ գաղտնիքն է,  
նախ՝ միշտ ուղղամիտ և աշխատասէր ըլլալ  
և երկրորդ՝ վաստկածէն գոնէ մէկ տասներորդ  
պակաս ծախսել:

Համոզ բաներ ուտելու վախճանը՝ մու-  
րացկանութիւն է:

Գինետան ճամբուն ծայրը կը սկսի հի-  
ւանդանոցին ճամբան:

Մ Ի Ն Ա Կ

Խնդա՛, աշխարհ խնդայ քեզ հետ,

Բայց եթէ լրա՛ միևնակ կուլաս.

Մարդ խնդալու է հակամետ,

Յոււերն, վշտերն բնաւ չեն պակաս:

Երգէ՛, բլուրք տան պատասխանք,

Հառաջք օդին մէջ կը ցնդին.

Զուարթ ձայնին շատ արձագանգ,

Բայց հոգ, թախիծ միշտ կանտեսուին:

Յնծա՛, մարդիկ միշտ քեզ փնտռեն.

Ողբա՛, ձգեն և կը փոխջին.

Հաճոյք լեցուն խնդրեն ի քէն,

Անժոյժ են քու արտասուքին:

Ուրախ լե՛ր արդ, շա՛տ բարեկամ,

Տխրի՛ր, ամենն ալ կորոնցո՛ւր.

Նեկտար գինիդ խմել կուգան,

Քեզ կը թողուն վշտիդ մութուր:

Տո՛ւր մի խնճոյք, սրահդ լեցուի,

Թէ ծով պահես ոչ ոք տեսոյ.

Յաջող լե՛ր, սո՛ւր, անուշդ փայլի,

Բայց մեռնիլըդ ս՛վ կը հոգայ:

Հաճոյսիլը շաւղաց վերան,

Մարդիկ խմելով միշտ կը ճեմեն.

Բայց մի առ մի միևնակ կերթան,

Յաւոց, վշտաց նեղ կիրճերէն:

Ն Է

Կը սիրեմ՛նեկ թէպէտ ինձմէ,

Խիստ շատ մեծ է, մեծ տարիքով:

Գեղեցկութիւնն գրաւիչ է,

Կրեմ՛ իրեն միշտ անվրդով:

Դարավերջիկ չէ մի աղջիկ,

Բայց աչքերուն ակնոց ունի.

Անոց մէջէն սիրտտարփիկ,

Կը նայի ինձ գերթ գեղուհի:

Խոպոպներուն մէջ ճերմակ կայ,

Երբ կը նայիմ՛ իրեն մօտէն.

Անոնք սիրոյս իրրև վրկայ,

Զիս առաւել իրեն քաշեն:

Թերեւս խորհիք թէ '՛ծեր է նա,

Աւատ դբամն է պիտանի.

Ոսկին է որ սիրել կուտայ",

Բայց նա միայն տուածս ունի

Շատ կը սիրեմ, միշտ կը սիրեմ,

Չունիմ անոր պէս սիրուհի.

Չէք զարմանար երբոր ըսեմ,

Մայրիկս ե նե յոյժ պաշտելի

ՅՈՎՍԷՓ ՀԱՅՎԱԶՆ.

—

### Յ Ի Ս Ո Ւ Ս Ի Չ Ե Ռ Ս Գ Ի Բ Ը

«Եւ մատով գետնին վրայ կը գրէր»

ԱՌԵՍԱՐԱՆ

Կեղծիք, կեղծիք, Հայր, ամեն ինչ կեղծիք.

Անկեղծ հոգի մը չկայ, հատ մ'իսկ չէք

Այլեւս խօսք չունիմ, լռել կը մնայ,

Ամօթէս գետին կը նայիմ հիմայ

Կեղծիք, կեղծիք, Հայր, Օրէնքին տառին,

Երեւոյթին սոսկ սերտիւ կը յառնին,

Հաւատաւորի կեղծ գէմքին ետե՛ւ,

Ի՛նչ աղաոտ սրտեր կան գձուձ ու սեւ

Կեղծիք, կեղծիք, Հայր, ամէն ինչ կեղծիք,

Լքուած ու ինկած այս կինը պռուհիկ,

— Խօսքը մէջերնիս — Գատախաղնեբէն,

Աւելի արդար, անմեղ է արդէն —

Կեղծիք, կեղծիք, Հայր, կեղծիք դժոխածին,

Մի՛նչ այս հէք կինը ՁՈՂՆ ԻՐԵՆՅ ԿԻՐՔԻՆ:

Չէ՛, չէի կարծեր ՄԱՐԳԸ այսքան ՁԱՐ

Պէտք է, Ա՛լ ՄԵՌՆԻԼ, ապրել չեմ կրնար

ԱՅԻՒԼԻՆԷ



### Ը Ն Տ Ա Ն Ե Կ Ա Ն

Լաւ կաթին գլխաւոր նշաններն են. ա-

նոր թեթեւ ինչ դեղինի զարնելը, անթա-

փանցիկ ըլլալը, ահաճելի հոտ չունենալը, ա-

նուշ համը, և եփած տաեռն երեսը հաստիկեկ

մորթ մը կապելը Լաւ ու անարատ կաթը

ջուրին մէջ ինկած կաթիլ մը ջուրին տակ

կիջնէ, առանց ցրուելու:

—

Ամէն հայելի լաւ չցուցնէր, ինչպէս

յայտնի է: Հայելիի մը լաւ թէ գէշ տեսակէ

ըլլալը փորձելու համար պէտք է սպիտակ

թաշկինակ մը բռնել անոր ճիշդ մծարը, եթէ

հայելին մէջ տեսնուած թաշկինակը բնա-

կանին պէս սպիտակ երեւնայ, հայելին լաւ



տեսակէ է: Բայց շատ անգամ՝ նոյն բռնուած թաշկինակին գոյնը գորշի, կարմրորակի կամ դեղնորակի կը զարնէ: Ահա այդպէս ցուցնող հայելիները լաւ տեսակէ չեն:

Քարիւղի լամբարին պատրոյգը փոխելու ատեն պէտք է նոր պատրոյգը կէս ժամ առաջ լաւ մը չորցնել, և գրեթէ չպաղած դնել զայն նոր լեցուած քարիւղին մէջ: Այս ամենապարզ գործողութեամբ, շատ պոյծառ և փոյլուն լոյս մը կ'ունենայ լամբարը:

Գրագարաններուն մէջէն ցեցերն անհետացնելու միջոցն է, պնակի մը մէջ ռուսական, չգտուած բեւեկնախէժ (թէրէպէնթին) լեցնել և մէկ քանի օր դարաններու մէջ դրնել զայն, վրան բաց, Յեցերը կը ջնջուին և բեւեկնախէժի հոտն ալ անմիջապէս կ'անհետանայ, երբ պնակը վերցուի:

Իւզաներկ դռներն ու պատուհանները մաքրելու է, մէկ մաս անուշադր ու 12 մաս պաղ ջուրի խառնուրդով: Տաք ածառաջրով մաքրելը, ինչպէս սովորութիւն է ընել, կը փստէ ներկին:

Չուկ կերուած ասկև գիպուածով կըլլուած փուշը եթէ կարելի չըլլայ անմիջապէս հանել, խեղդուելու աստիճան սաստիկ հազ մը կը պատճառէ ենթակային թէ՛ տոյգ հազը կակղացնելու և թէ փուշն ալ մտտամբ հալեցնելու համար պէտք է աղաթթուի (ասիա միւլըրադիք) լուծոյթէն (14 կաթիլ 50 կրամ ջուրի մէջ) մերթ ընդ մերթ մէկ մէկ ումպ առնել: Եթէ այս դեղը չգտնուի, քացախ խմելու է ումպ ումպ, մերթ ընդ մերթ:

Եթէ կաթին մէջ կտոր մը շաքար գրուի, անկարելի կ'ըլլայ զայն մակարդել: Բնականարար այլեւս կարող չպատրաստուի շաքարոս կաթէն:

Ճմրթկուած զգեստները, մանաւանդ բրդեղէնները շտկելու համար, պէտք չէ արդուկել զանոնք, վասն զի փոյլուն և իւզոտ բիծերու երեւոյթ մը կ'առնեն արդուկուած տեղերը: Այդպիսի զգեստներ արդուկուածի պէս կ'ըլլան և նոյն խիւ տմենէն խիստ ծալքերն ու ճմրթուկները կը հարթուին, եթէ մառունին մէջ առաստաղէն կախուն: Կարելի է մաքուր ու թաց սպունգով մը թե-

Թե կերպով թրջել շատ ճմբձ կուած տեղերը:

Մեծ սխալ մ'է միտք եփելու ատեն նախապէս ջուրի մէջ երկար ատեն թողուլ. կամ մէկ քանի անդամներ ջրով լուալ զայն: Ատով լուացման ջուրին հետ կը կորսուի միսին սնուցիչ հիւթը, որ կայ անոր մակերեսին վրայ: Միսին վրայի աղտեղութիւնները որքել կամ միտք պարզ ջրով անգամ մը լուալը բաւ է: Եթէ միտք գէշ հոտ ունենայ, ինչ որ կը պատահի տաք օրերուն, պէտք է ջրով եփել զայն ու ջուրին մէջ ալ նոր վառուած փայտածուխի կտոր մը դնել: Միսին և ջուրին համն ու հոտը կը բարւոքին:

Ձկան թեփերը դիւրաւ հանելու համար պէտք է քիչ մը ատեն տաք ջուրի մէջ մէկ կողմի վրայ դնել ձուկը և դուրս առնելով հանել թեփերը, միւս կողմին համար ալ նոյնպէս ընելու է: Ձգուշանալու է որ ջուրը եռացած վիճակի մէջ չըլլայ, վասն զի այն ատեն թեփերուն հետ ձուկին մտրթն ալ կ'ելլէ:

Եթէ լամբարը ձեռքէ իյնալով մէջը գտնուած քարիւղը բռնկի կաթ թափելու է

բոցերուն վրայ, որոնք անմիջապէս կը մտրին: Այս պարագային մէջ յանձնարարելի չէ ջուր գործածել, վասն զի ատով բոցերը ա'լ աւելի կը տարածուին:

Կազդուրիչ լուադոյն գեղը որուն պէտք ունի մարդ, ամէն օր ընու թեան տաճարին մէջ մտրմնոյ շարժումներ ընել և հանդարտ բայց խորապէս շնչելն է: Բաց օդին մէջ շարժումը ախորժաղբիւն է նաև: Ամէն օր, նոյն խնդրը նուազ նպատաստոր եղած ատեն, անատուի մէջ կամ դաշտի վրայ հանդարտ շրջադայութիւն մը ամենէն աւելի օգտակար գեղն ու դարմանն է մտրմնոյն համար:

Ուտելու և խմելու մէջ չափաւորութիւնն ու պարզութիւնը առողջ ու երկարակեաց կ'ընեն մարդու: Փոխանակ ոգելից բմպելիի, ջուր, կաթ կամ պտուղ գործածողը իր առողջութեան, աշխատելու կարողութեան և երկարակեցութեան կ'օգնէ:

Սենեակին գորգերը, որչափ ալ լոթվուին և խոզանակուին դարձեալ ժամանակին հետ կը կորսնցնեն իրենց թարմ գոյնը,

վասն զի փոշին և զանազան աղտեղութիւններ անոնց բուրդէ հիւսկէններուն մէջ բըռնուած կը մնան, կարելի է յաջողաբար մաքրել և թարմացնել սա հետեւեալ պարզ միջոցով: Զկախուղացած թթու կաղամբը լաւ մը քամելով (մեծկակ դորդի մը համար կէս քիլո կաղամբ պէտք է) կտրտելու և ափ մը լեցուն կաղամբի կտրուանքով մաս առ մաս շփելու է գորգը: Կաղամբը կը սեւնայ, վասն զի գորգին բարձր աղտեղութիւնները իր վրայ կ'առնէ, բայց գորգին գոյնն ալ կը թարմանայ: Այս գործողութիւնը տարին մէկ կամ, առ առուելն երկու անգամ ընելու է:

Ընդհանրացած գէշ սովորութիւն մ'է դուլլականերուն ձգտիւթէ ծնրակապ գործածելը: Ծնրակապը մեծ ազդեցութիւն ունի արեան շրջանին վրայ, և յայտնի կամ անբըգալի են նոյն իսկ ցաւագին ու անբուժելի հիւանդութիւններ առաջ կրնայ բերել ոտքի և սրունքի վրայ: Գուլլան ձգտիւթէ առածիգ ժապաւէնով կոծակի մը միջոցով գոտին հաստատելու է:

Նորաշէն դարակի մը հոտը անհետացնե-

լու համար 100 տրամի չափ եփած կաթ դընելով մէջը, գոցելու է դարակը, և 11 օր թողելու է այնպէս:

Սենեակի նոր բուռած (պատանա) պատերէն կիրի հոտը անհետացնելու համար պէտք է կրակարանին մէջ փայտածուխի նոր հրահրուած կրակ դնել և դուռը լաւ մը քոցել, կրակին հուրքն անցնելուն պէս, ժամու մը չափ բաց ձգելու է պատուհանները:

Եղանակի փոփոխման ատեն կռնակը սաք պահելը մեծ կարեւորութիւն ունի, մանաւանդ տարիքոտ կամ դիւրազգաց անձանց համար, որովհետեւ ուսին տախտակներուն սակ կը գտնուին թորբերը, կռնակին փչող հովը յաճախ կը մտնէ մարմինը, ուստի կռնակը բաց պատուհանի կամ բաց դրան դէմ դարձուցած նստելու չէ: Յրտաուութեան արամադիր եղող անձեր խոհեմութիւն ըրած կ'ըլլան, եթէ աշնան և ձմրան մէջ Փանելայի կտոր մը դնեն ուսի տախտակներուն միջև: Այս պարզ միջոցաւ ցրտաուութենէ վերծ կը մնայ մարդ յաճախ:

Թաց ու խոնաւ կոշիկները դիւրաւ կը շորման եթէ տաք թեփով լեցուին: Այս պատճառաւ լաւ է թեփով լեցուն աման մը պահել վառարանին մօտ:

ՕՐԻՈՐԴԱՅ ՅԱՏՈՒԿ

ՃԱԲՈՆԱԿԱՆ 15 ՕՐԵՆՔՆԵՐ ՕՐԻՈՐԴԱՅ ՀԱՄԱՐ

1. Գոցուած սենեակի մէջ երիտասարդաց հետ տեսութիւն մի ընէք: Երբորդ անձի մը ներկայութիւնը անհրաժեշտ է:

2. Երիտասարդներուն այցելութիւն մի ընէք:

3. Երիտասարդի մը բնակարանը մի երթաք առանց փորձառու կնոջ մը ընկերութեան:

4. Երիտասարդաց հետ մի թղթակցիք: Երբ պէտք ըլլայ նամակներ յարմար մարդոց հետ ղրկեցէք:

5. Լուսանկար ու ուրիշ առարկաներ մի փոխանակէք երիտասարդաց հետ:

6. Ձեր անկողնարանը կամ հիւանդ պառկած սենեակնիդ այր մարդիկ մի ընդունիք:

7. Արեւմուտքէն ետք եթէ հնար է դուրս մի ելլէք: Երբ անհրաժեշտ է, պէտք է տարեց կնոջ մը հետ ընկերանալ:

8. Մինակ մի ճամբորդէք և պանդոկի մէջ առանձին մի կենաք առանց ընկերուհի մը:

9. Առանձին տուն մի ընակիք: տարեց կին մը թող ընկերանայ ձեզի:

10. Այր մարդոց հետ գուեհիկ խօսակցութիւն մի ունենաք, ձեր խօսքերուն և նրա ու կացին շատ զգոյշ եղէք:

11. Մինչև որ պատշաճօրէն չներկայացուիք այր մարդոց հետ մի խօսիք և անոնց նուէրներն մի ընդունիք:

12. Տարակուսելի կասկածելի տեղերէ և անձերէ միշտ հեռի:

13. Երիտասարդաց հետ պտոյտի մի երթաք ու անոնց հետ խաղ մի խաղաք առանց տարեց մէկու մը ներկայութեան:

14. Հրածեշտ առնելու համար երիտասարդաց մի երթաք ու ճամբորդութեան մէջ անոնց մի ընկերանաք:

15. Այլոց ներկայութեան հանդերձնիդ մի փոխէք: — Ինչ որ ճափոնի օրիորդին համար էական համարուած է կարծեմ Հայ օրիորդին համար ալ խիստ օգտակար կրնայ ըլլալ, ուստի սոյն 15 կանոնները անոնց եւս կը յանձնարարուի:

Այրեւը իրենց մաղերը կրկերէն աւելի յաճախ թրջելու սովորութիւնը ունին, արդուզարդի ատեն մաղերնին ամբողջութեամբ կը լուսնն և գլուխնին երկար ատեն կը պահեն ջուրին տակ: Այս պատճառաւ է որ կրկերուն քով ճաղատութիւնը ցանցաւ է բաղդատմամբ այրերուն, որոնց մէջ ճաղատագլուխներու օրէ օր մեծ համեմատութեան կը հասնի:

Ի՞նչ է ջուրին վնասակար ազդեցութիւնը մաղերուն վրայ: Այս հարցման պատասխանը ինքնին շատ պարզ է: Չուրը մաղերը ուռեցունելու յատկութիւնը ունի, և մտազոգողուններուն նուրը ու երկայն թելերը իրարմէ բաժնելով, կը սպաննէ մազը: Ճարպին անբաւականութիւնն ալ իր կարգին մեծապէս կը նպաստէ մաղերու անկումին: Շատ հաւանական է թէ այսօր շատեր ճաղատ պիտի չըլլային, եթէ երբեք ժամանակին պէտք եղած խնամքը տանէին իրենց մաղերուն, օծելով ճարպային նիւթերով:

Շատեր օծանելիքներու գործածութիւնը անմաքուր ու աւելորդ կը նկատեն, առարկելով թէ օծանելիք իրենց մաղերը աղտոտելէ զատ ուրիշ պաշտօն մը չունի: Կրկերը մաս-

նաւորապէս կը խրոչին օծանելիքէն, կարծելով թէ ատով իրենց մաղերուն նրբութիւնն ու փոփոկութիւնը կը վտանգուի և գոյնը կը խաթարուի: Եւ այս պատճառաւ աւելի նախաձեռար կը համարեն իրենց բնական վիճակին մէջ ձգել մաղերը և սպասել անոնց վազհաս անկումին:

Սեպրաճ կոչուած ճարպոտ ու իւղոտ նիւթը, զոր մաղային դեղձերը կ'արտադրեն, պաշտօն ունին լարծուն ու կակուղ վիճակի մը մէջ պահել մերթը և պաշտպանել զայն քրտինքին կամ ջուրին աւերիչ ազդեցութեան դէմ:

Երբ ճարպին քանակը նուազի, մորթին մակերեւութային խաւերը կը չորնան, և բջիջի չորցած կոյտեր մորթէն անջատուելով, կը կազմեն մաղերուն թեփը:

Եւքիմացիները, որոնք նշանաւոր են իրենց խիտ ու երկայն մաղերով, գլուխնին յաճախ փոկի իւղով օծելու սովորութիւնը ունին:

Հնդկական ովկիանոսի և կարմիր ծովու մէջ մարգարիտի որսորդները ջուրի մէջ ընկղմելէ առաջ, նախապէս իրենց գլուխը կը ճարպոտեն, ջուրին ազդեցութենէն զերծ պահելու համար մաղերը:

ճարպը, սակայն, բացառաբար մտադային դրուածեան համար օգտակար չէ, այլ ուրիշ պարագայներու մէջ ալ կարելոր է իր ներկայութիւնը:

Սեւամորթը իր մարմնոյն մտքութեան բնաւ հոգ չտանիր, որովհետեւ գիտէ թէ մորթոյին ճարպը մարմինը կը պաշտպանէ ցըրտառութեան, ինչպէս նաև մորթի ճածը ստուքներու կամ ձեղքաուստներու գէմ:

Վերոյիշեալ կարճառօտ տեսութեանէն կը հետեւի թէ ճարպը անհրաժեշտ է մորթին և մազերուն բարւոք պահպանումին համար, և առ այս ամենէն անփաստ ու յարմար նկատուած է զուտ կամ անուշահոտ Լազէն, որ բնական արտադրութիւն մ'է, օգին մէջ անփոփոխ, եւ երբէք չապականիր:

ՀԱՐԱՆԱՅ ՏԵՐ ՈՍԿԻ

### ՅԱՂԱԳՍ ԱՄՈՒՄՆՈՒԹԵԱՆ

Մայրե՛ր, ամուսնութեան հարցին մէջ դուք մեծ դեր ունիք իբր ճշմարիտ խորհրդատկան ձեր ամուսնոյն և հոգածու խնամակալ ձեր զուակոյց. զանոնք համոզելու եղանակը աղէկ գիտէք, ուստի լաւ ուշադրութիւն ըրէ՛ք յետագոյ առողջարանական կա-

նոններուն զորս անհրաժեշտ է նկատողութեան առնել երբ կը փոփոքիք ձեր զուակները ամուսնացնել և կ'ուզէք որ անոնք երջանիկ ամուսնութիւն մը կ'ընեն:

1. Աղջկանց ամուսնութեան լաւագոյն շրջանն է 17—27, իսկ երիտասարդներուն համար՝ 24—34 տարեկան հասակ:

2. Հարսին և փեսին տարիքներու տարբերութիւնն ալ 6—10 պէտք է ըլլայ:

3. Տարիքոտներու ամուսնութեան պրտուղները յաճախ ապուշներ կ'ըլլան:

4. Մերձաւոր ազգականութեան կոպ ըլլալու չէ ամուսնութեան մէջ, վասն զի բրժշկականապէս ընդունուած է որ սյդպիլի միութենէ ապուշներ և թոթովախօսներ կըրնան ծնիլ, զոր թերեւս մեր պայերը տեսելով կրօնապէս արգելքի տակ առած են մօտաւոր ազգականներու ամուսնութիւնը:

5. Լաւագոյն է թոքախտաւորներու և իրենց սերունդին հետ խնամութեան կոպ չհաստատել, յաճախակի տեսնուած իրողութիւն մ'է որ սյդպիլիներու մանուկները տկարակազմ, ճղճիմ՝ ըլլալով քիչ տանուան համար միայն չարչարելի կեանք մը կ'ունենան և իրենց ծնողներն ալ հաւանա-

կանաբար երկար չեն կրնար ապրել ու կը մեռնին թոքախտէ:

6. Մտային հիւանդութիւն, լուսնուտութիւն և ջղագարութիւն ունեցողներէ հեռու մնացէք. բժշկական գիտութիւնը այսօր բացարձակապէս ընդունած է թէ՛ այս կարգի ջղային հիւանդութիւններն ժառանգական են և մին միւսին ծնունդ կու տայ, դարմանելի ջղային թեթեւ տկարութիւնները այս դատակարգին չեն պատկանիր:

7. Գինեմոլներու կամ՝ ալքոլամոլներու խումբին ալ չխառնուիք. անոնցմէ ինչպէս նաև վերոյիշեալ ջղայիններէն այլասեր և ջղագար մանուկներ աշխարհ կու գան կամ՝ գինեմոլներ կը ծնին:

8. Այն երիտասարդները որոնք ապրողիտեան տխտերու ենթարկուած են, մինչև որ օրինաւորապէս չդարմանուին և զիրենք դարմանող բժիշկը չարտօնէ, թող ամուսնութեան դադափարին չմօտենան, սակայն ցաւալի իրողութիւնն այն է որ շատ անգամ այս հիւանդութիւնով վարակուած և անկատար դարմանուած անբիղձ երիտասարդներ, հակառակ բժշկական արգելքին, ամուսնութեան կը դիմեն առանց մտածելու թէ՛ ի-

րենց ախտը փոխանցիկ է, կոյս հարսը ապահովապէս կը վարակուի, անսերունդ կրնան մնալ կամ՝ ճշճիմ՝ ու հիւանդոտ արարածներու ծնունդ կու տան: Ինչպէս կարելի է երջանկութիւն սպասել այսօրինակ ամուսնութենէ մը, եթէ նոյն իսկ հարսը զինքը ուրախ ցուցնէ մի՛ հուստաբար, արտաքին ցոյց մ'է և անտարակոյս ներսէն կողքայ և անէծք կը կարդայ իր ծնողաց, անոնց ընտանեկան հարկին տակ թշուառութիւնը և տակուութիւնը բոյն դրած են: Փետան ալ բնականաբար իր առած քայլին սխալը ըմբռնած՝ կը զղջայ բոյց օգուտ չունի, եղածը եղած է, թող բժիշկներուն դիմեն և հիւանդութեան տեսակին համեմատ ամիսներով կամ՝ տարիներով դարմանուին, որպէս զի իրենց խանդարուած առողջութիւնը վերանորոգուի և երջանիկ ըլլան եթէ կրնան ըլլալ:

9. Ըլլայ աղջիկ կամ՝ տղայ մարդ ո՛ր և է պատահական հիւանդութեան ենթարկուած ատեն մինչև ի բժշկութիւն պէտք չէ ամուսնանալ:

10. Խոյլը, սկերային հիւժախտը (քէմիք սըրաճասը) և լիւբիս կոչուած մորթի հիւանդութիւնը թոքախտի միջբոյլին սղղեցու-

Թեան տակ կը ծնին, որով և այդ հիւանդու-  
 Թեան ենթականերէն ալ զգուշացեք: Ո՛վ  
 ծնողներ, կրկին կ'ըսեմ, լաւ ուշագիր եղէք  
 վերջիչեալ բժշկական աստիճանեայ պատ-  
 ուիրակիին և ձեր զաւակները ամուսնացնե-  
 լու համար ըստ այնմ շարժեցէք եթէ կ'ու-  
 ղէք որ անոնք երջանկաբեր տուն մը կազմեն  
 և առողջ սերունդ մը արտադրեն: Հակա-  
 ռակ այս օրէնքներուն շարժող մարդկու-  
 Թիւնը դէպի անդունդ կը քայլէ. օր մը, և ես  
 վստահ եմ թէ այդ օրը շատ հեռու չէ, կա-  
 ռաւարուծեան ըարձը հովանիին տակ բժշ-  
 կական մարմիններ, օրէնսդէտներ և թերեւս  
 կրօնաւորներ իրարու ձեռք երկարած մարդ-  
 կային ցեղը ազնուացնելու և ուժեղ ու քա-  
 ջառողջ ժողովուրդ հասցնելու համար ա-  
 ռողջարանական տեսակետով ամուսնու-  
 Թեան խիստ օրէնքներ պիտի հաստատեն:

Ինչպէս որ և է անհատի մը ամուսնու-  
 Թեան պահուն ամուսնութեան վկայագիր կը  
 պահանջուի ըստ օրինի, այնպէս ալ թէ՛ փե-  
 սացուէն և թէ՛ հարսնցուէն քաջառողջու-  
 Թեան վկայագիր մը պիտի ուզուի, որ Պատ-  
 րիարքարանի մէջ կամ՝ այլուր մասնագէտ  
 բժիշկներէ կազմուած քննիչ ժողովի մը ան-

դամներու կողմանէ վկայուած և վաւերաց-  
 ուած պիտի ըլլայ: Իրաւ է թէ այս պարա-  
 զային վստառողջները կամ հիւանդոտները  
 մերժուելու վախով մէկդի պիտի կենան և  
 տոով ամուսնացողներու թիւը պիտի նուազի  
 ու հետեւագէտ ժողովուրդն ալ թուով  
 աւելի նուազ մարմին մը պիտի կազմէ, ըսյց  
 մենք մեր նպատակին հասած պիտի ըլլանք,  
 այսինքն հիւանդոտներուն սերունդին անդ  
 տան մը վերջ առողջներու և ազնիւներու  
 սերունդ մը պիտի գտնենք, նաև պիտի դայ  
 ժամանակ մը ուր քաջողջ ժողովուրդին  
 թիւը նախկինին հետ բաղդատելով ստուա-  
 բագոյն պիտի տեսնուի, որովհետև ամուսնա-  
 ցողները առողջ տարրերէ կազմուած ըլլա-  
 լուն առատ և առողջ արտադրութիւն մը  
 պիտի ունենան:

Ինչպէս քիչ մը վերը ըրի, հոս կրկին պի-  
 տի ըսեմ, որջամիտ դատարարկութիւնը  
 այս մասին մեծ դեր պիտի խաղայ, ուստի  
 առողջապահութեան չափով դատարարա-  
 կութեան ոյժ տալու աշխատեցէք և մինչև ի  
 կազմութիւն փափաքելի բժշկական քննիչ  
 մասնագէտովին, յարգեցէք բժշկական վե-  
 ըյիչեալ տասնարանեայ պատուէրները,



որպէս զի առողջ սերունդին հիմը դուք դրած ըլլաք:

Յարմար աւելի՞ լավ յղուծեան օրերու և առողջ ծնած մանուկը առողջ պահպանելու օրէնքներուն վրայ կը խօսինք:

ՏՈՒԹ. ՄՈՒԹ. ԱՅԵԱՆ

—

ԱՌՆ ԵՒ ԿՆՈՋ ՏԱՄՆԱԲԱՆԵԱՆԵՐԸ

Կ Ի Ն

1. Անձիդ ու հանդերձներուդ միշտ խնամատ եղիր, պարզ բայց մաքուր ու կոկիկ, ոչ թէ շքեղ ու մեծածախ:

2. Այրիդ բնաւ թափթփած մի ներկայանար, միշտ անանկ հագուէ որ օտարներուն ներկայանալի ըլլատ ու այրդ ամօթ ահար չըլլայ:

3. Մի կարծեր թէ ամուսնացած ըլլալէ ետև ալ արտաբնիդ ուշադրութիւն ընել պէտք չէ:

4. Կիրթ տանտիկին մը նկատէ զքեզ ոչ թէ լուացարարուհի կամ տախտակ սրբոյ:

5. Ունակութիւն ըրէ լաւ ու մաքուր խօսիլ, պոռուժ, դոչուժ, աղաղակ հեռի քեզմէ, ոչ ալ բարկութիւն ու զրգուժ, միշտ զուարթ ու միօրինակ, համբերու-

թեամբ յաղթէ ամէն անհաստի պատահարաց, մարմնացումն եղիր հեղուծեան, զուարթութեան:

6. Եթէ նուրբ կրթութիւն ու դիտական առաւելութիւն ունիս, այրիդ վրայ նուստ աչքով մի նայիր:

7. Այրիդ այնքան ուշագիւր եղիր ինչպէս էիր երբ խօսեցեալ էիք: Նսիս անոր ու ապա քու փափաքներդ գոհացուր: Անոր ներկայութենէն հեռացուր ամէն անհաստի բան, ընտանեկան անախորժ բաներու վրայ անգիտակից պահէ զնա:

8. Անոր սենեակը հանգստաւէտ ըրէ, սիրած կերակուրները սեղան հանէ, ճաշի առան դառնութիւն պատճառող բաներ հեռու պահէ: Փափաքներն կատարէ, ծառայից հանդէպ անոր իշխանութիւնը յարդէ, կարեւոր բաներու մէջ անոր գիմէ: Տղայոց սորվեցուր անոր կամքին հպատակիլ:

9. Քու և անոր մէջ անհամաձայնութիւն չտեսնեն օտարք. գաղտնիք մի ունենար անկէ, ժանտ մի ըլլար, քէն մի ըներ, ներելու միշտ պատրաստ, մինչև իսկ եթէ քուկդ է իրաւունք:

10. Ժամանակ ունեցիր անոր արամադ-

բուժեան, անհամաձայնութիւն և հակառակութիւն դուրս չելլէ, առանց անոր գիտութեան ծախք մի ընէր. երրորդ մի անձ քու և և անոր մէջ չմտնէ, անոր սխալներն ու թերութիւններն ոչ ռքի յայտնէ, նամակներն մի բանար, գրպաններն և թուղթերն մի խուզարկեր, պահէ դաղտնիքներն, թող հպարտ ըլլայ քու և տանդ վրայ:

Ա Յ Ր

1. Կինդ չմոռնաս նկատել նաև քու լաւագոյն կէտք:
2. Բնաւ անտարբեր, խիստ ու կոշտ մի ըլլար անոր:
3. Փափկանկատուութիւնը մի վերաւորէր խօսքով ու գործքով:
4. Տանը բռնակալը մի ըլլար որ դողայ քեզմէ:
5. Գործիդ տառապանքներն ընտանեաց ծոցը մի տանիր:
6. Արտաքինիդ կարեւորութիւն տուր մտքուր և կոկիկ:
7. Ուրախութիւն պատճառէ կնոջդ անոր փոքրիկ հաճոյքները կատարելով:
8. Ամբողջութեանդ տարեդարձը պատ-

ուէ, կնոջդ ծննդեան օրն մի մոռնար, անոր փափաքներն դեռ չյայտնած հասկցիր և կատարէ:

9. Գրամական գործերդ վտահէ կնոջդ, առեւտրական վիճակդ թող գիտնայ, յաջողութիւնդ և հոգերդ, պէտք եղած դրամը ժամանակին տուր, գիտցիր որ ո՛քան նուազ տացուցիչ է կնոջ մը զոյգ մը ձեռնոց դնելու համար աղերսել քեզի. եթէ կինդ կը շահի, մաս մը իր պիտոյից գործածէ:

10. Մի ծաղրէր կնոջդ հակուսներն, անոր կարգադրութիւններն սյուց առջին մի քննադատէր. աղայքդ նաև շափահասները վարժեցուր կնոջդ ակնածանք տալ, յարգէ, պատուէ. ինչպէս օտար կնոջ կ'ընես, ծռէ ու գետնէն առ երբ կինդ բան մը ձգէ, նստած տեղէդ ելիր բարեւելու համար, լաւագոյն տեղը ցոյց տուր, հանդերձները վրան առնելու օգնէ, ծխելու արտօնութիւն ուզէ, ծառայելով ատրէ:

ԱՅՐ ԵՒ ԿԻՆ

1. Կնոջդ հետ խորհրդակցէ, խոնարհէ երբ կինդ փոքր է:
2. Ծառայելով իշխէ, սյրն է թագաւոր կինն է թագ:

3. Այրիք բարկութեամբ խօսածը չըլելու զարկ, խոնարհէ և քարն վրայէդ կ'անցնի, փոթորիկը կ'անցնի ու ներողութիւն կը խնդրէ:

4. Այն կրնէրն որ անհասկանալի են անխելք են:

5. Կուզե՞ս որ այրք տունը մնայ, խոհանոցիդ հոգ տար:

6. Հաւատաւ որ երջանիկ ես ու երջանիկ կ'ըլլաս:

7. Երբորդի մը գանդատիլ՝ սյրին առջին անհաւատարմութեան դռներ կը բանայ:

8. Կրկնեալ ասեղի հարուածներ տւելի ցաւագին են քան բացուած վէրքեր:

9. «Հայրիկը չիմոնայ» շատ տղայոց վատթարանալուն պատճառ է եղած:



## ՄԵՐ ՓՈՔՐԻԿՆԵՐԸ

Ամէն դատարարակ, ամէն մայր մինչև մէկ ատիճան փորձառու են թէ տղաք ահարեկիչ պատմութիւններ լսելով կը վախնան առանձինն անկողին երթալու: Եթէ ստիպեն զանոնք կամ անոնց հետ միասին երթան ննջելու, խեղճ տղաքը դժուրակ ժամեր

կ'անցնեն մութ սենեակին մէջ. վիճակ մը որ անոնց ջիղերուն վրայ խորապէս ներգործելով հանդերձ անոնց մտքին ու մարմնոյն ալ կը վնասէ հաւատարապէս Խոկ այն դատարարակները կամ մայրերը, որոնք տղոց վախը, նոյն իսկ անոնց ընդածին վախը զսպելու համար, մարմնական պատիժ կու տան անոնց կամ մութ սենեակի մէջ կը փակեն զանոնք: այդպիսիները կատարեալ ոճրագործներ կը համարուին:

Տղոց վախին ինչպէս յառաջ գալուն վրայ գաղափար ունենայու համար պէտք է անոնց խոստովանութիւնները լսել: Ընկերութեան զանազան դատարարակներէ առնուած 200 առողջ տղոցմէն 125ին վախկոտութիւնը յառաջ եկած է մայրերու «իբրապիղ» կրթութեան: 75ինը՝ ահարեկիչ տեսարաններէ և պատմութիւններէ և 25ինը՝ ժառանգականութեամբ: Հարցաքննութեանս ատեն տղոց հարցուցած եմ թէ «ինչո՞ւ կը վախնան», և անոնց պատասխաններէն 10 հատը շատ յատկանշական են. գրեթէ տղոց մեծագոյն մասը այդ միեւնոյն պատասխանները տուած են: Այսինքն՝ 1. կը վախնանք վասն զի գիշերը մութ է: 2. Վասն զի որոտո

ման ատեն ստտանան կառքով կը քայլէ ամպերուն վրայէն: 3. Վլասն զի փոքր ենք: 4. Վլասն զի հովը մարդու պէս կը սուլէ: 5. Վլասն զի պահագանը տղաքները կը դողնայ և կ'ուտէ: 6. Վլասն զի եթէ դասերնիս չպատրաստենք՝ ստտանան կու գայ: 7. Վլասն զի չար ոգիները գիշեր ատեն կը շրջադային: 8. Վլասն զի ոտիկանները բանա կը տանին իրենց դգետները մտքուր չպահող տղաքը: 9. Վլասն զի սատանան կ'ուտէ չար տղաքը: 10. Վլասն զի ճատուկ կիները կը խածնեն դասերնին չպատրաստող և անառակ տղաքը:

Տղօց այս պատասխաններէն կ'երեւի թէ բացարձակապէս վախով, նախապաշարումով, սուտով, կեղծիքով և անգթութեամբ կը կրթուին մեր տղաքը:



Տղոց միս կամ ուրիշ գրգռիչ անունդ տալու չէ բնաւ: Յաճախակի միս ուտող տղաք ջղային և գրգռուն կ'ըլլան: Այս պատճառաւ կաթնկեր երախաներուն ալ մսի ջուր տալու չէ երբեք: Բայց սխալ է նաև այն կարծիքը թէ տղօց բնաւ մեղէն տալու չէ: Խառն ուտեստ մը մարդուս ամբողջ կեանքին համար պահանջելի է միշտ: Սակայն

երախաները բնականաբար բացառութիւն կը կազմեն ասկէ, անոնց համար կաթը շատ լաւ անունդ է միշտ:



Տղաք երբևէ գեշ ունակուրիւնը կ'ունենան իրենց ձեռքի մատերուն եղունքները կրծելու: Ասոր առաջքը առնելու համար պէտք է կանոնաւորապէս խնամել եղունքները: Տղաք օրուան մէջ աղտոտ շատ բաներ կը բռնեն, և ատոնցմէ մէյմէկ բան կը փակչի իրենց մատներուն: Հարեւանցի կերպով ձեռք լուսլով, իրր թէ մաքրուած կը համարին, բայց եղունքներուն մէջ պահուածը կը մնայ միշտ: Ընդհանրապէս եղունքին տակ և շուրջի մորթին մէջ կը տեղաւորուի աղաք: Պէտք է մորթը եղունքին արմատէն ետ հրել՝ որպէս զի եղունքին չփակչի եթէ այս խնամքը զանց առնուի, մորթը կը պրկուի, տաքութիւն և անհանգստութիւն և տեսակ մը տահառութիւն կը զգացուի եղունքին տակ: Մեծերը չեն զգար ատնք, բայց տղաքը, որոնց զգացողութիւնը շատ սուր է, շուտ կը զգան զաննք, և առանց պատճառը հարցունելու, ինքնաբերաբար կը կրծեն մատներնուն եղունքները, և, ինչպէս ըսինք, ո-

բովհեանե աղտոտ են ատոնք սովորաբար, կը կըլլեն հոն գտնուած ֆառատուռ մանրէները՝ Մհողքն ալ ապա կը զարմանան թէ ինչո՞ւ համար հիւանդացաւ իր զաւակը, որուն կանակը ատք և փորը կուշտ կը պահէր։ Արդարեւ, միշտ կարելի չէ լուալ աղաքը անկողին մանելէ առաջ, բայց գէմքը և ձեռքերը կարելի է մաքրել։ Աճառոտ լաթով մը պէտք է լաւ մաքրել եղունքին մորթը, նոյն իսկ եղունքի յատուկ խողանակով, որ պէս զի բնաւ աղտ չմնայ հոն։ Ալերջապէս, եթէ եղունքներուն մորթը բացուած և մաքուր ըլլայ, աղաք տհաճութիւն չեն զգար իրենց մասներուն վրայ, և ինքնաբերաբար կը թողուն եղունք կրծելու վատ ունակութիւններն։

**Չգուցացնելու է աղաքը որ եղունքնին չկրծեն.** ոչ միայն գարշելի, այլ առողջութեան համար ալ ֆառատակար է այդ, վասն զի եղունքներուն մէջ ժողվուած մանրէները բերանէն ներս կ'երթան, նաև եղունքը եղջերային այնպիսի մարմին մ'է, որ ստամոքսին մէջ ջհալիր, և հետեւաբար եղունքի կրծուած կտորները աղիքին մէջ գէշ խանգարուքներու պատճառ կ'ըլլան։ Նաև

մատի ծայրերուն զգացողութիւնը տկարանալով, եղունք կրծող աղաք չեն կրնար գրծագրութեան, գեղավարժութեան, և այլ ձեռագործ աշխատութեանց մէջ զարգանալ։ Տղոց այս չար ունակութեան առաջքը ասնելու համար շատեր կը յանձնարարեն դառնահամ հեղուկ մը քսել անոնց մասներուն։ Բայց շատ անգամ ալ խրատելով ու վերոյիշեալ չարիքներուն վրայ խօսելով, կարելի կ'ըլլայ ետ կեցնել աղաքը այդ ունակութեան և Հակառակ պարագային, լաւագոյն միջոցն է բարակ լաթէ ձեռնոցներ գրծել աղուն ձեռքը։

**Պովեսք** աղոց համար կրթիչ միջոց մ'է, բայց խնայողութեամբ գործածելու է։ Յաճախ գործածուած ատեն կը կորսնցնէ իր ոյժն ու արժէքը աղոց առջև։ Ատկէ զատ, եթէ աղան ամէն անգամ իր պարտաւորութիւնը կատարած ատեն գովեստ լտէ, պիտի կարծէ թէ տարօրինակ բան մ'է ըրածը, և պիտի սկսի յոխորտալ և սոնքալ, որուն հետեւանքը սա կ'ըլլայ թէ իր պարտաւորութեանց կատարման մէջ կը թերանայ տակաւ։



# ԳԱԽԱՌԱՅԻ ՀԱՅ ՄԱՅՐԵՐՈՒՆ



## ՄՆՆԴԱԲԵՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԴԱՅԵԱԿ

Տոմար. Յ. Փափազեան, Բարիզ

Մենդարեբուած թիւնը ընտանի կենդանեաց մէջ ամենահազուադէպ պարագաներու տակ միայն մահացուցիչ է, որոնք բնական պարտականութիւններն կատարելու և նմաններ հասցնելու համար անփնաս, առշիկ փռաշիկ կը ծնին: Գիւղացին արշալըյոյն իր կովերուն, սլխարներուն, այծերուն և իր միւս կենդանիներուն մօտիկը ցատկոտող աղւորիկ և սիրուն ձագուկները ուրախութեամբ կը տեսնէ, քաղաքացիին շնիկը և կամ փխիկն է որ առտուն կանուխ ձագուկները խածած ուրախ զուարթ հոս հոն վաղելով անոնց հանդատարան և կամ թշնամիներէն պաշտպանուելու համար ապաստանարան կը փընտռէ: Այսպէս գիւղացին ու քաղաքացին երբ իր շուրջը եզոզ ընտանի անասնոց վրայ

աչք մը նետէ, պիտի տեսնէ անոնց միշտ անվընաս և առանց ուրիշի օգնութեան ծնիլը: Ինչո՞ւ ուրեմն բանաւոր էակին էգին ծննդարեբութիւնը ահ ու սոսկում ազդէ և հարիւրաւոր մայրեր զոհուին այս պատճառաւ: Արդեօք Աստուծոյ Եւայի ուղղած անէ՞ծքն է պատճառը. ո՛չ երբեք, ինչո՞ւ որ Արարիչը — ցաւով ծնիս — ըսած տանն — մեռանիցիս — բառը չգործածելէ աւելի, օրհնեց, ըսելով. — Աճեցէք և բազմացարուք և լցէք գերկիր: Ո՞վ է ուրեմն չարիքին պատճառը. մի զարմանաք երբ դայեակն է ըսեմ, (խօսքս պարտաճանաչին չէ, որ միշտ յարգելի է): Պիտի հաւատաք, այնպէս չէ՞, և ինչպէս կարելի է հաւատալ երբ դայեակը ձեր ճշմամբին մէջ պահապան հրեշտակ մը, բարերար ու ազատիչ ձեռք մ'ի ըստ ձեր կարծեաց. բայց կը ցաւիմ ըսել թէ չարաչար կը սխալիք. եթէ զիտական գիտակով դայեակներուն վրան գլուխը քննէք և կամ անոր քայլերուն հետեւիք պիտի խորշիք ու անէծք կարգալով պիտի տակք այս անգիտակ եղեւնագործը: Խիստ է կարծեմ բառս իր հասցէին, բայց ձեր արդար վճիռը ետքը տալու պայմանաւ, կը խնդրեմ որ համբերութեամբ քիչ մը ինծի հետեւիք:

Գիւղերու, քաղաքներու և մայրաքաղաքներու մէջ դայեակը ամէնուն ծանօթ դէմքն է արհեստին բոլորովին անգիտակ, տգէտ, անուս, շատախօս, շատ գիտեմի հովերով կամ գիւղացիին ըսածին պէս «շատ մը քարերու տակէ ելած, հաստ ու բարակ մաղերէ անցած» երեսունէն եօթանասուն տարեկան, միշտ սյրի, անուշ շեղու և կեղծաւոր կին մ'է ան Գայեակը, ձեռքը պայուսակ մը ունի, որուն մէջ զետեղած է մկրատ, ածելի, նշգրակ, բժշկական մի քանի դործիք, ամէնքն ալ ժանդոտած, ասեղ, դերձան, մտանոց, ակնոց, դեղերու շիշ, փախեր և տուփեր, նազարի պօկնոյ, վախի քարեր, բամբակ և տակաւին շատ մը բաներ Գիւղի դայեակին պայուսակը մէջքի կապած դօտին է շատ անգամ Գայեակը՝ գտնուած տեղին մէջ հիւանդներ կը դարմանէ, վէրքեր կը պատուտէ, պատուստ կ'ընէ, արիւն կ'առնէ, ամուլին դեղ և բազմածինին վիժուժ կը պատրաստէ, Անիկայ տղացիանին և նորածինին շորերը կը լուայ, մեռելներու վրայ փարայով կուլայ, հարսնիքի տուն կերակուր կ'փէ, խրավորզուքիւն և չեմ գիտեր ինչե՛ր ինչե՛ր ընելէն վերջ շատ մը կիներ անդիի աշ-

խարհք կը զրկէ, միշտ վայելելով վստահութիւնն և հաւատարմութիւնը

Օր մը չէք կտակածիր և ձեր միտքէն իսկ չէք անցըներ թէ ան է մեր սիրելիներէ ոմանց մահուան պատճառը Եւ ինչպէս կարելի է կտակածիլ, քանի որ յաջող ծննդաբերութեան 3—4 օր վերջ հիւանդանալով մեռած է դժբախտ մայրը

Գիւղի երիտասարդ բարեկամներէս մին 17 տարեկան առողջ և կոյտառ աղջկան մը հետ ամուսնացաւ քիչ յետոյ կինը յղի մնաց և այնչըջանը առանց հիւանդանալու և կամ քիչ մը անհանգստութեամբ անցուց Եր մը բարեկամս ուրախ զուարթ դալով զաւակ ունենալը, կնոջը առողջութիւնը ու ծննդաբերութեան խիստ դիւրութեամբ տեղի ունենալը պատմեց և վեց օր վերջ բարեկամս յուսահատ ու շուարած կրկին գալով, «Տոբ թոր, վաղէ, կինս կը մեռնի» գոչեց Գացի, ինչ տեսնեմ սակայն, հագեվարք էր կոյտառ ու առողջ հարսը Ուշ մնացած է բան մը չէի կրնար ընել քիչ յետոյ Աստուծոյ մարդը եկաւ սեւ հողին յանձնեց, «հող էիր և ի հող դարձցիս» ըսելով և

Այս սրտաճմիրկ տեսարանէն խիստ յուզ-

ուած, մտհուան պատճառը փնտուելու ելայ.  
 — Գոյեակը հոն գալէն քիչ առաջ, ուրիշ  
 տեղ մը պզտիկ վէրք մը բացած. և յետոյ ե-  
 կած էր առանց մաքրուելու այս գործողու-  
 թիւնը կատարել. Մէկ կողմ՝ կանչելով՝ այս  
 աղջկան սպաննիչը ըլլալը ըստ. ինք բացատ-  
 րութիւն պահանջեց ու ես պէտք եղածէն  
 աւելի խօսեցայ հասկցաւ անխոհեմութեան  
 հետեւանքը՝ և շատ ցաւ զգաց. պատուիրեցի  
 դոյեակութեանէ զատ ուրիշ գործ չընել ու  
 մաքրութեան վերջին ծայր հոգածու ըլլալ.  
 սա՛ թէ և ազէտ, սակայն խղճմտօրէն հետե-  
 ւեցաւ պատուէրներուն և նոյն օրէն յետոյ  
 այս գիւղին մէջ այսպիսի դէպք մը չպատա-  
 հեցաւ, մինչ անկէ առաջ մահը տարին 6—7  
 երբեմն ալ աւելի երկասարդ կեանքեր կը  
 խլէր:

Տարիներ առաջ, երբ Պոլիս սուսանող էր,  
 բնական տանս մէջ կար բարեկեցիկ ու հա-  
 մեստ վարձակալ մը: Փոքրիկ մը ունէին ու  
 կինը յղի էր երկրորդով: Օր մը կնոջ զգա-  
 ցած ցաւերուն վրայ ամուսինը դոյեակը կան-  
 չելու գնաց: Քիչ վերջը 60 տարեկան ֆո-  
 թօղը, սեւեր հագած, պայտասակը ձեռքը  
 խնդում երես կին մը ներս մտաւ. մնալին էր.

հետեւեցայ իրեն, սենեակէն ներս մտածին  
 պէս — «Քա օրդդի, ի՞նչ կը պոռաս, վա՛յ  
 մեղքիս, աս ալ բանս ըլլայ, քիչ մը ակռատ  
 սխմէ, մեղա՛յ, կէնճ ես, տուռ տրացիէն  
 նազար կ'առնես, չար սաաթ բարի սաաթ  
 կայ եավրուս, օղբամաի կուգաս, մեղք ես.  
 հէլէ պառկէ նայիմ» — ըսաւ, ու ինձ դառ-  
 նալով ըսաւ.

— Սա չանթաս տուր, զաւակս Բացաւ  
 տուփը, և քիչ յետոյ կինը քննեց ու ձեռ-  
 քերը լաթի մը սքրելով, — «Անուշիկ եավ-  
 րուս, տահա վախիթ ունիս, ես քովի լօհոսա-  
 յին շերինկան երթամ՝ ընեմ՝ տէ սաաթէ մը  
 հոս կ'ըլլամ. այլըման կէնճը չար սաաթնե-  
 րու դալով իչ աղբըսի տիւշ եղաւ» — ըսաւ  
 ու դնաց:

Ըսած ժամուն եկաւ և առանց լուաց-  
 ուելու կրկին նոյն ձեւով կինը քննեց ու քիչ  
 յետոյ ծննդաբերութեան տեղի ունենալը  
 յայտնեց: Կէս ժամէն ամէն բան յաջողու-  
 թեամբ լինցաւ ու ինք անեցիներուն բիւր  
 օրհնութիւնները շարալը՝ մեկնեցաւ: Ամէն օր  
 առտու իրիկուն կ'երթար կու գար: Երրորդ  
 օրը տղացկանը անհասկիստ մնաց, աճուկները  
 ու փորը կը ցաւէր, կը դողար, բերանը կը



ցամբէր, տաքութիւն և մարմնուք ունէր: Յաջորդ օրը ցաւերը աւելի սասակացած փորը ուռեցաւ:

— Զ՛՛ւր, Զ՛՛ւր կը պոռար, կը փոխէր ու տաքութիւնը աւելի սասակացած էր: Մարդուկը շուարած, — Մոմի՛, հիւանդս աղէկ չեմ տեսներ, բժիշկ բերեմ՝, կ'ըսէր. ու դայեակը — «Քա՛՛ վայ մեղքիս, հազարներ ձեռքէս անցած է, կաթի դող է, պաղի զարպիլ կ'իջնէ. ախտերէն դնա քիչ մը քէթէն թօխումի, 10 փարայի անխօսն, 1 զըշի պէլատօն եաղի՛ ճիվալը ըլլայ, առ պէր, մութլաթա կէնճը հոտ առաւ պաշխա սէպէպ չկար» կը պատասխանէր:

Հիւանդը նոյնը կը մնար սակայն, այնպէս որ մոմսինը ճարահատ վաղեց մասնադէտ բժիշկին, որ գալով պէտք եղածը ըրաւ:

Հիւանդին դարմանի պէտք ունենալը ու շատ ծանր ըլլալը ըսելով, բժիշկ և դայեակ վեց ամիս գացին եկան: Համետտ մարդուկը գործին ահրմայիս ասոնց և դեղագործին տալով, խեղճ մնացած իր սիրելիներուն օրուան չոր հացը կը խորհէր: Խեղճ կ'ինը հաղիւ անկողինէն կըցաւ ելնել, սակայն անունդի պահասութիւնը զինքը օրէ օր տկարացնելով եր-

կու ամիս վերջ ձագուկները ու սիրեցեալ ամուսինը ձգելով գերեզման գնաց հանգչելու, անիծելով պատճառ եղողը:

Բայց ո՞վ էր անիծեալը. երբ ճասը դայեակն էր ըսեմ՝, չէք հաւատար:

Իժուարութեանց պարագային և կամ գործը շուտ լինցնել մեկնելու համար դայեակը պայուսակին մէջ միշտ պատրաստ շաւուրս քօզի անուն փաքէթներուն կը դիմէ: Մննդաբերութեան այսպիսի պարագային այս դեղը, գործողութիւնը դիրացնելէ աւելի շատ անգամ՝ մօր կամ՝ զաւկին մահուան պատճառ կ'ըլլայ. եթէ անոնք ազատին խկ, մայրը քիչ յետոյ կը հիւանդանայ, արգանդի անբուժելի ցաւերու ենթարկուելով շատ երկար կը տառապի և կամ կեանքը մահուամբ կը վերջանայ:

Անխիճճ դայեակներէն շատերը գիտէն այս դեղին ժամանակէն առաջ դործածելով հասուցած չարիքը, սակայն դայեակը առանց խղճի խայթի եղեւնագործի ձեռքերով կ'երկնցնէ զայն տառապեալին ըսելով «Իմէ զաւակս, հիմայ պիտի ազատիս»:

Հոս ալ դայեակը յանցաւոր չէ, ինչու որ իրօք շատ անգամ՝ քիչ յետոյ ըսածը կը

կատարուի. բայց վե՛րջը... այդ՝ իրեն գործը կամ հոգը չէ:

Բայեակը այսպէս ամէն օր տուներ կը կործանէ արհեստին իրեն տուած պատուէրին հրամաններուն չանսարով և կամ զայն չարաչար գործածելով: Ասոնցմէ ոմանք գիտնալով, սոսկալի չարեաց դուռ կը բանան. ուրիշներ ալ չեն գիտեր ի՛նչ կ'ընեն, սրով բոտ իս թէ մին և թէ միւսը եղեռնագործներ են:

Ասկէ 15—20 տարի առաջ Խրանսոյի ամէն կողմը լեցուն էին այսպիսի դայեակներ, այն տտեն ծնողներէն 100ին 20—25ը կը մեռնէր: Ժողովուրդը հասկնալով անոնց փասը, բժիշկներու գիմեց և այսօր 100ին 3ի իջած է միջին հաշուով: Շատ գիւղեր դայեակ չի կայ, և ծննդաբերութիւնները, տեղւոյն կամ մօտակայ բժիշկներուն ձեռամբ կ'ըլլան:

Արդէն մեր սրբեցեալ Վեհապետ Օգոստոսփառ Սուլթանը տեսնելով սիրելի ժողովուրդին անոնց երեսէն կրած փասը, իրաւք ըրած է կարող դայեակ ու բժիշկներ հասցընելով զրկել իր Կայսրութեան ամէն խորշերը: Քիչ ժամանակէն շնորհիւ մեր Վեհափառ Կայսեր ամէն տեղ իր բժիշկը և կամ դայեակը պիտի ունենայ: Ասոնք պիտի հաս-

տատեն ձեզի իրենց գործքով ներկայ դայեակներուն շատերուն հասցէին ուղղած խօքս, և դուք այն տտեն միայն պիտի արթննաք ու «կուշտ ու կուռ» անիծելով — եղեռնագործներ — պիտի պօռաք: Բայց սիրելի քոյրեր, եթէ կը փափաքիք այժմէն անոնց սպիկարութեան զոհ չեղթալ, ծննդաբերութեան չխորշիլ և ձեր նուիրական պարտականութիւնը անվախ ու անկասկած կատարել, հաճեցէք պատուէրներու հետեւիլ: (Տես 1913ի Օրացոյցը):



# Մ Ե Ր Խ Ո Շ Ա Ն Ո Յ Ը



## ՀԱՄԵՂ ԻՆՂ ՊԱՏՐԱՍՏԵՒ

Մտեղէն, գետնախնձոր, խմորեղէն և այս կարգի նիւթերու գործածուած իւղը երբ կարագ ըլլայ շատ սուղի կը նստի. հետեւաբար մենք կրնանք տունէն կարագի նրբութեամբ և անուշահոտ պատրաստել հետեւեալ կերպով.

Որթի երեկամունքին (պէօղբէկ) վրայ գտնուած իւղէն 1 օխա, եզի երեկամունքի վրայ գտնուած իւղէն 1 օխա, խողի մարթա- ճարպ 1 օխա, այս ամէնը աղէկ մը մանրեցէք դանակով, աւելորդ մասերը հանելով և մեծ սանի մը մէջ լեցուցէք, վրան աւելցնելով ջուրի գաւաթ մը կաթ և նոյն չափ ալ օղի՝ Թող եփի այսպէս ժամու մը չափ աղէկ կրա- կի մը վրայ. վար առնելուդ պարզուտէ ան- ցուցէք և իւղամանին մէջ լեցուցէք պաղե- լէն վերջը: Եթէ յաջողիք իւղը ճեփճեքմակ և խիստ անուշահոտ կ'ըլլայ:

**ԹԱՐՄ ՈՍԿԵՆՆՁՈՐԻ ԹԱՅԱՆ (ՍԱԼՅԱ)**

Օխա մը շատ հասուն ոսկեխնձոր (աօմա- թէս) քամեցէք և մաղմաղ կրակի վրայ դրէք որ եփի կամաց կամաց, մինչև որ թանձրանայ, աղեցէք, պղպեղեցէք. նաև աւելցուցէք քիչ մը քացախ և քիչ մ'ալ ձէթ: Այս թացանը խորոված միսի կ'ընկե- րանայ:

**ՎԱՌԵԱԿՆԵՐԸ**

Սանդի մէջ աղէկ մը ձեծեցէք սոխը և մէջը հաւու լեարդի հետ (գարա ճիշէր)

կարագ խառնելով փուռը տուէք ու տապ- կած հաւուն քովը դրէք երբ սեղան բերէք պնակը:

**Հաւուն** միսերը բարակ բարակ ջարդե- ցէք, այդպէս մանրեցէք նաև ճեքմակ սուն- կեր և լեարդ. այս ամէնը խառնեցէք եփ- ուած արէի (էրվիշտէ) հետ, և հալած կա- րագ անցուցէք վրան:

**Խառած հաւուն** փորը ճեղքելով մե- ջը լեցուցէք եփուած ոլուն (պէղէիս) իր թացանովը, նոյնպէս 4 խաշած հաւկիթ մանրելով հաւու միսի պղտիկ կտորուանք- ներու հետ, հաւուն եզերքը լեցուցէք և վայրկեան մը փուռը դրէք:

**Հաւուն** եփուած միսը բարակ բարակ ջարդեցէք, այսպէս ըրէք նախ լեարդը, երի- կամունքը, ուրիշ միս ալ (առջի օրուընէ աւելցած որ և է միս գործերնիդ կը տեսնէ), սոխ, սխտոր, աղաւթեղ, վրան աւելցուցէք աղ, պղպեղ, հաւկիթի դեղնուց մը և կաթի մէջ թաթխուած հաց, շաղեցէք և տապկե- ցէք կարագով:

**ՁԷԹՈՎ ԵՓՈՒԱԾ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ**

Ամենուս ալ ծանօթ է որ ձէթը օգտակար է սննդարար է, վասն զի մէջը կը պարունակէ երեք սննդարար տարրեր, օլիին, սրխարին և մարկարին: Արդ՝ երբ եռայ կամ եփուի՝ սոյն տարրերու կարեւոր միջբոլորները կը ջնջուին, և պէտք եղած սնունդը չտալէ զատ, քանի մը տեսակ հիւանդութեանց ալ կը փնտսէ, ինչպէս աչքի, խոչափողի և արեան բորբոքում ունեցողներուն: Ուստի ասոնց առաջքը առնելու համար՝ շատ աղէկ կըլլայ որ սրտշեալ կերակուրը եփուելուն պէս, անմիջապէս իւրը պէտք եղած չափով լեցուի և կերակուրը կրակէն վար առնուի, փորձեցէք և պիտի տեսնէք թէ աւելի համով պիտի ուտուի:

**ՆԱՐՆՁԻ ՄՐԳԱՆՈՒՇ (ԳՕՓՕԹ)**

Նարինջին մրգանուշը նոր բան մը չէ թէպէտ, բայց կուղեմ նոր կերպ մը ցուցնել իմ ընթերցող հիներուս:

Նարինջները կ'ընտրէք աղէկ տեսակեն, խոշորկէկ և դանտկով բարակ բարակ վրայի կեղեւները կառնէք, պայմանաւ որ կէս կեղեւը վրան մնայ: Պզտիկ վարժութիւն մը

բաւական է այս բանիս համար: Այսպէս զաննք ստեղծելէ վերջ դանակով չորս մասի կը բաժնէք և աղցանի ամանի մը մէջ կը շարէք կարգաւ: Կուտերը պէտք է հանել մեծ զգուշութեամբ: Երբ այսպէս ստիւլած ու շարուած են նարինջները, վրան լեցուցէք վանիլի հոտով շաքարի օշարակ մը, բաւական թանձրկեկ, որպէս զի նարինջին ջուրերուն հետ միանալով ուղուած թանձրութիւնը սունէ ի վերջոյ: Ուզողը կրնայ պզտիկ դաւաթ մը գօնեաք լեցնել օշարակին մէջ:

ՔՐԻՍՏԻՆԷ ՄԷԼԻՔԱՆԸ

**ԳԵՂՋԱԿԱՆ ԱՊՈՒՐ**

1. Երկու երեք հատ պրասի ճերմակ երկու երեք սանթիմէթը լայնութեամբ կլոր կլոր կտրեցէք, և աղէկ մը լուացէք, յետոյ սոխաւացի պէս մտնր մտնր կտրեցէք զանոնք:

2. Մեծ սոխ մը ստեղծեցէք և կտրեցէք նոյնպէս, երկու կարմիր ստեղծիւն ալ ջարդեցէք անոնց վրայ: Այս ամէնը կարմրեցէք քիչ մը կարագով մաղ մաղի վրայ մինչև որ վարդագոյնի պէս ըլլայ:

3. Այն ատեն երկու պզտիկ բողկ և կարսի արմատ մը մտնր մտնր ջարդելով մէջը

նետեցէք և նորէն թող կ'ճրտայ հինգ վայր-  
կեան:

ՌՌՌՍՍԱՍՍԱՍՍ ԿԱՐԿԱՍՍԱՍՍ ՄԸ

Վեց հոգիի համար:

Երկու ապուրի դգալ փոշի շաքար և եր-  
կու ապուրի դգալ որ և է անուշ մը իրար  
խառնեցէք աղէկ մը. չորս հաւկիթի ճերմը-  
կուց աղէկ մը զարկէք և անուշին հետ խառ-  
նեցէք. աս ամէնը կրակի դիմացող և ներկա-  
յանալի ամանի մը մէջ լեցուցէք և տաք տաք  
փուռք տուէք, 10 վայրկեան թող եփի Պէտք  
է այդ ամանով սեղան բերուի, պաղէլէն ետև:

Z A R S U R A N

Վասան. — Աղանատան գետինը ժող-  
ուած միսիր տարածէ. աղանիններն ասոր  
մէջ կը թապլակին, միսիրի փոշիով կը ծած-  
կուին. ոջիլներն ու ճճիներ. կանհետին:

Մարի. — Նասըրի միակ դեղն է ասիտ  
ասէթիք. կտոր մը բամպակով թըջէ նասըրը  
առտու երեկոյ. շաքաթէ մը նասըրը կ'լինոյ.  
վրան պարզ բամպակ կապէ:

Հրանդ. — Մժեղները ջնջել պէտք է. աս-  
տնք արտեր ու հիւանդութիւններ կը պատ-  
ուատան մարդոց մարմնոյն վրայ: Առ միջա-  
տասպան փոշի ու փոքր դգալ մը տաք միսիրի  
վրայ լից ու թիւթսի տուր, դուռ և պա-  
տուհան գոցելով:

Եւնիկէ. — Կտորած ամաններն փակցնե-  
լու պարզ միջոցն է, հաւկիթի ճերմակ ու  
կիր. նախ զարկ հաւկիթի ճերմակը, յետոյ  
կիրը հետք խառնէ:

Պաղտո. — Պիւթագորոս կը յանձնարարէ  
էպէ կէօմէ ճիւր տերեւով աղցան ուտել քեզի  
նման բուռն կիրքերէ անհանգիստին. էն կրա-  
կոտ կիրքերն իսկ կը հանգարտին այս միջոցով:

Սուրէն. — Շտնալեզու կոչուած բոյսէն  
մուկ գանուած տեղերը դիր. բոլոր մուկերը  
կը փախչին:

Գառնիկ. — Առ ֆանէլայի կտորներ,  
թաթիւ պէշդիլնի, քեաֆիրի իւղի կամ թէ  
թըջած ծխախոտի ջուրի մէջ. դիր գրատանդ  
գրքերուն ետին. և մուկեր ու ճճիներ չեն  
մտանար գրքերուդ:

Հոռոր. — Անկողինը այնպէս պէտք է  
պատրաստել որ հոն քնացողին ոտքերը դէպ ի  
հարաւ, ու գլուխը դէպ ի հիւսիս ըլլան:

Սուրբիկ. — Հաւելը շատ կածեն եթէ  
հաւկիթին կեղեւները փոշիացնելով դարեկի  
հետ խառնելով արուի որ ուտեն: Չմարտծ  
կերի փոշին ալ նոյն գործը կը տեսնէ:

Ատրիէն. — Հանդերձներու օձիքը կրնաք  
մտքել չոր լաթով մը քեչ մը ամօնեաք քը-  
սելով:

Գեորգ. — Երեսիդ փշտիկները — սիլիլը  
ճիկները — կանհետին եթէ 30 կրամ ծծումբ,  
լուալէ եաքը և վրան 500 կրամ եռացած ջուր  
լեցնելէ ետե երկու օր թողուս, ու սպա օրը  
քանի մը անգամ այդ ջրով լուացուիս կրնաս  
նաև ծծումբ ուտել:

Լուսի. — Միւր ջարդէ, դիր թիթեղէ  
տուփի մը մէջ, գոցէ տուփը ու դիր եռացող  
ջուրի մէջ մէկ քառարդ ժամ, առատ ու  
լաւագոյն մնի ջուր կուսնեսաս:


Պետրոս. — Հաւկիթը կերի ջուրի մէջ ձգէ,  
հանէ, չորցուր հովին մէջ ու պահէ երկար  
ատեն:

Ագապի. — Միւր մէկ, երկու քաշնոց  
կտորներու բաժնէ, գիր հողէ կամ փայտե  
ամանի մէջ, ծածկէ վրան լաթով, ու ասոր  
վրայ դիր 4.5 սանթիմ բարձր փայտի ածու-  
խի փոշի, էն տաք ատեն կրնաս տտանէն 15 օր  
պահել միւրս:

Երանուհի. — Ին պարզը սա է. հաւկիթ-  
ները ջրով լեցուած ամանի մէջ դիր, ջուրին ե-  
րեսը լողացողներն հոտած են. տակինները առ:



### Կ Ր Թ Ա Կ Ա Ն



Տղայ մը ո՞ր տարեքին մէջ դպրոց ղրկուե-  
լու է: Ընդհանրապէս յայտնուած կարծիքը  
սա՛ էր թէ՛ երբ ընտանեկան պարագաները  
կամ աղին միջավայրը փափաքուած առաւե-  
լութիւնները կը ներկայացնեն՝ աճապարելու  
չէ՛ տունէն հեռացնել զայն: Ասի մանուաւանդ  
դիշերօթիկ վարժարաններու մասին շատ ճըշ-  
մարիտ է, թէ և ցորեկօթիկներու համար ալ  
ըսուած է ան: Ա՛եց տարեկանէն վար մո-  
նուկներու կարգալ գրել սովորեցնելու չէ բը-  
նաւ: Անոնք թող սովրին խաղալու վարժուիլ  
Ասով ըսել կուզուի հարկաւ թէ՛ եթէ մա-  
նուկներ ստիպուած են դպրատուն կամ ման-  
կապարտէզ երթալ՝ անոնց կարգալ գրել  
սովորեցնելէ աւելի կարեւոր պարտականու-  
թիւն մը ունի վարժուհին: Ու այս պարագան  
միտք պահել կրնայ շատ օգտակար բան մը

ըլլալ մեր պղտրկներուն համար եւս, որոնց մասին յաճախ դանդաւտ կը յայտնուի թէ անոնք կը խամբին ծաղկոցներու մէջ: Ու եթէ միայն այս կէտէն օգտուողներ ըլլային յօդուածս կարգացողներուն մէջէն, ա՛յն ատեն պիտի մխիթարուիմ՝ որ բժշկական տարին մեզի ալ օգտակարութեան բաժին մը բերածէ:

ՏՈՒԹ. ՅՈՎՍ. Տ. ՍՏԵՓՍ.ՆԵԱՆ

**Ծերուցագարդ չիլէլ Ռաբրին, Յիսուսի մէկ ժամանակակիցը,** սա կարճ խօսքին մէջ ամբողջած էր դեռահասներուն ուղղած իր յորդորը. — քարի եղիր, ջղա՛ւ: Ի՛նչ բաներ կրնայիք բնել, և ի՛նչ բաներէ կրնայիք հրաժարիլ յաւիտենապէս՝ եթէ ձեր կեանքին նշանաբանն ընտրէիք այդ կարճ խօսքը: Ամէնքս կը հառաչենք բարեսրտութեան և մարդասիրութեան համար, որով հետև ամէնքս ալ հոգեկան տառապանքներ ունինք: Բացէ՛ք աչքերնիդ, մշակեցէ՛ք մարդկային ցաւերը տեսնող փափուկ զգայարանքը, սորվեցէ՛ք սրտին հոգեկան վէրքերուն դպչիլ փափուկ մտաներով: Ինչո՞ւ այսքան քիչեր այս կարգի Աստուածահաճոյ գործերու միջամուխ կ'ըլլան Ասո՛նք աշխարհի մէջ ամէնէն մարդկա-

յին բաներն են: Ինչո՞ւ կը նախընտրենք դառնիլ հակամարդկային գործերով, որ վէրք, շարշարանք և արցունք կը պատճառեն: Բարի եղիր, աղաս:

**Արքուքիան մէջ կարելի եղածին չափ զգուշանալու է խտուածէն:** Տղոց կրթութիւնը անբռնադրօտիկ և հաճոյալիլ եղանակաւ արուելու է: Տղայ մը ուսեցու, հնազանդելու, սորվելու ստիպելը երբէք լաւ հետեւանք մը չունենար: Ուսեցու համար անօթութիւն, սորվելու համար փափաք և հնազանդելու համար սէր ունենալու է տղան. հետեւաբար պէտք է այս երեք ազգականները արթնցնել անոր մէջ, այն բռնութեան, ստիպումի պէտք չմտար:

**ԳԷՇ Վարժապետ մը,** աշխարհիամենէն վնասակար գոյութիւնն է, թերեւս ոճրագործէ մ'ալ աւելի, որ մարդու մը մինակ մարմինին կ'ազառնայ, մինչդեռ տաաջինը, երբ իր կոչումին տէրը չըլլայ, երբ չձանձնայ իր պաշտօնին վեհութիւնն ու սրբութիւնը, կ'ըստաննէ այնքան ուսանողներու մարմինն ալ, միտքն ալ, սիրտն ալ, հոգին ալ, յաւի-

տենական դժբաղդ մը դարձնելով զանոնք կեանքի բովանդակ տեւողութեան մէջ: Ուրեմն, խորհէ որ ժամանակներ յանձնուած են քեզի, զորս պիտի ընդերուզես թանկագին գոհարներով: կեանքեր յանձնուած են քեզի, զորս պիտի դարձնես պատուական տաղձներով, մաքուր շաղախով բաներ, որոնց սխալութեանը գրեթէ անկարելի է որ վերափոխուին:



## ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ



Հաճոյքի աղբիւրները շատ են: Ամեն անհատ հաճոյքի զատ ու որոշ աղբիւրներ ունի: Մարդոց խառնուածքը տարբեր է որովհետեւ, ուստի ճաշակն ալ կը զանազանուի: Ամէն անհատ իր գոյութեանը պէս ուրոյն ու ընտրուիչ ճաշակներ ունի: Այսպէս, հաճոյքի զանազան աղբիւրներ երեւան կուգան: Հաճոյքի աղբիւրները, աւելի որոշ ու ընդհանուր առումով մը երեքի կրնանք բաժնել. — վնասակար, անմեղ և օգտակար:

Վնասակար աղբիւրը շատերու նախ-

ընտրութիւնն է: Ոմանք հաճոյքի աղբիւրը դաւաթէն քաղել կը յուսան, ուրիշներ խաղամոլութեան մէջ կը փնտռեն հաճոյքը: Վաւաշ կեանքի մը ցոփ ու ամօթալի զեղբուութեանցը դաւնութիւններէն հաճոյացողներ քիչ չեն: Հաճոյքը կէր ու խուժի, ափիոնի և կիրքին մէջ փնտռողներն ալ շատ են:

Գանայեան կարասներ են սակայն մարդկային կիրքերը, զանոնք լեցնել, յագեցնել ջանալը անկարելիութիւն և յիմարութիւնն է:

Հետեւաբար այս սխալ աղբիւրներով յագենալ ուղողները երբէք չպիտի կրնան հասնել ակնկալուած արդիւնքին ու պիտի շարունակեն մնալ հոն, ուր սր էին առաջ:

Այդ աղբիւրները աղի ջուր կը հոսին, մարդիկ ո՛րչափ շատ խմեն անոնցմէ, այնչափ կը սաստկանայ պապականին:

Անմեղ հաճոյքները բաղդատաբար քիչ հետեւորդներ ունին: Չեղբուութեան շաւիղը շատ չեն սիրեր մարդիկ, ասոր համար ծայրայեղութեանց կերթան միշտ: Հաճոյքի անմեղ աղբիւրները ինչո՞ւ առատ ջուր չմատակարարեն վայելքին ծորուի անձերուն:

Ընտանեկան խողերը, ընկերական հացկերոյթները, մտերմական ակուսքները գէ՞լ




աւիթներ են: Բայց անդին կայ բարձրագոյն  
 Հաճոյքը, իրական Հաճոյքը: Այդ աղբիւրը  
 զով ու կենարար ջրով կը յագեցնէ հոգիին  
 ծարաւը և կը բարձրացնէ զգացումը: Այս  
 աղբիւրէն շատ աւելի խմողներ կան: Բարձ-  
 րագոյն Հաճոյքը վայելքի բոլոր տարրերն ալ  
 ունի իր մէջ ու միանգամայն շինիչ է: Այն  
 կ'աղնւագնէ սիրտը, կը նորոգէ միտքը և  
 հոգին կը գեղազարդէ: Բարձրագոյն Հաճոյքը  
 թշուառութիւնը կը մեղմէ, անկումը կ'ար-  
 գիլէ և վերելքի պատճառ կըլլայ: Այս աղ-  
 բիւրէն խմել «կենաց ջուրէն» խմել ըսել է:  
 Ընթերցումը բարձրագոյն Հաճոյքի առաջին  
 աղբիւրն է: Ասով միտքը իր գերագոյն թը-  
 ուիչքը կ'առնէ, վասն զի միօրինակութեան  
 ու տաղտուկի շղթաները կը խզէ: Ընթեր-  
 ցումը վշտախոց սիրտը կը բուժէ և մահա-  
 չարուած կուտայ բռնաւոր յուսահատու-  
 թեան:

Ընթերցումը ներկայէն անդին կը փո-  
 խադրէ մարդը և երեւակայութեան ու արա-  
 մաբանութեան ուժեղ թեւերով նոր աշխարհ-  
 ներու մէջ թեւաբկել կուտայ հոգիին:



## ԱՌՈՂԶԱՊԱՀԱԿԱՆ



Տղոց դուռը մասնաւոր խնամոց ենթար-  
 կուելու է. նորածիններուն գլուխը գաղջ  
 ջրով ամէն առաւօտ մաքուր լուսլ շատ օդ-  
 տակար է, բայց լու շորցնելու է գլուխը կե-  
 ղեւները թափել տալու համար շատ դայակ-  
 ներու բրածին պէտ ասնարեւ կամ նմանօրի-  
 նակ կոշտ միջոցներ գործածել միտասկար է:  
 Քիչ մը քաղցրիտ կամ նշախղ կը բաւէ:  
 Մեր մայրերն այնպէս կը մտածեն թէ կեղև-  
 ներուն դպչելու չէ, ըստ որում անոնք ինք-  
 նին կը թափին եղեր. սխալ է ասիկայ: Ինչ  
 որ մազերու վրայ խօսեցանք մօրուքին ալ կը  
 պատահի: Մօրուքը մէկէն ի մէկ ածիլելը  
 վտանգաւոր է, միշտ մաքուր պահելու է և  
 օրը 4-5 անգամ ասնարեւելու է: Ածիլելու ա-  
 տեն ալ զգոյշ ըլլալու է: Առտուները ածիլ-  
 ուիլ ա'լ աւելի աղէկ է, զի այդ պահուն մոր-  
 թը թէ' տաք և թէ միանգամայն փափուկ է:  
 Որչափ կարելի է մեր իսկ ձեռքովը ածիլուե-  
 լու ենք, կամ եռացեալ ջրոյ մէջ ածիլներն  
 լու մը մաքրել տալ և հականերելէ վերջ

ածիլուելու է դուրսը, որովհետեւ այս կերպով միայն ինքզինքնիս շատ մը փոխանձելի տեղերէ մանաւանդ գաղիական ախտերէ զերծ պահած պիտի ըլլանք:

**ՏՈՒՅԹՈՐ ԱՆՆԱՆՈՒՄԻ ՈՐԴԻ**



Մաքուր օդը անհրաժեշտ է արիւն մաքրելու և աննդառութիւնը կանոնաւոր պահելու համար: Ինչ որ է առողջարար անուղիղ ստամոքսին և հրահանդիչ ու զրօնեցուցիչ ընթերցումը մտքին համար, նոյնն է նաև մաքուր օդը թոքերուն համար: Հոտոտելիքի նուրբ զգացողութիւնը չկորսնցնող մէկը սենեակէ մը ներս մտած ատեն կ'ըզայ թէ այդ տեղին մէջ գտնուած օդը մաքուր է թէ այդ պահանած: Այս երկրորդ պարագային անմիջապէս պէտք է պատուհանները բանալ, եթէ անկարելի ըլլայ այս, գէթ դռները:



Առաւօտուն արթննալէ անմիջապէս ետքը դէմքը վիզը ու ձեռքերը պաղ ջրով լուալը, մանաւանդ պաղ սենեակի մէջ յանձնարարելի է անոնց միայն որ զքրտուր կաղմուտք ունին: Այդ պողութիւնը հաճելի ներգործութիւն մը կ'ընէ այդպիսինե-

րու վրայ, ինչ որ ամենեւին չյարմարիբ փափկասուն անձերու: Մարդու մարմինը իր ջերմահասիւն է, որով մարմինը կ'ըզգայ թէ ինչ կը յարմարի և ինչ չյարմարիբ իրեն: Ով որ իր տաք ձեռքը պաղ ջուրի մէջ խօթած ատեն դող կ'ըզգայ, անոր մարմինը կ'աղգարարէ իրեն թէ այդպիսի մէկը չկրնար տոկալ բուռն փոփոխութեան: Եթէ կարելի ըլլայ, նախ տաք կամ քաղց ջրով լուացուելու է, (ինչ որ լաւ կը մաքրէ մարմինը) և ապա պաղ ջուրով, Տաքութեամբ մարմինն ծակախոր բացուելով, պաղ ջուրը ներս կը թափանձէ և կը կաղգուրէ ջիզերը: Տաք ջուրէն ետքը պաղ ջուրով լուացումը թարմ և առողջ երեւոյթ մը և փափկութիւն մը կուտայ մերթին: Հաճելի շրջան մը զբ մարմինը երկիցս կ'ըզգայ այդ միջոցին, սպասեցոյց է ոյդ եղանակաւ լուացուելու օգտակարութեան:



Սոխը անուցիչ յատկութիւն մը ունի, կը գրգռէ մարտողութեան ջիզերը, և շարժում կուտա աղիքներուն, և դիւրութիւն անոնց պարպուելուն: Մասնաւոր գործունէութեան մը կ'ընծայէ նաև մեղի արտահանութեան և ներքին գործարաններու թաղանթ-

ներուն պաշտօնին: Բայց չափազանցութեամբ ուտեին ալ կը վնասէ: Գէր, թղլ ու մեղկ, մողասաւոր (պողարիւն) մարդոց համար օգտակար է և կը յարմարի սոխ ուտելը, քան թէ դիւրագրգիռ, նիհար և տկար անձանց: Սոխը շատ բաներու համար ալ իբր դարման կը գործածուի: Օրինակի համար, հաղի, կուրծքի ցաւի դէմ, մեղուի կամ միջատի խոյթուածքի, քթի արիւնահոսութեան դէմ եւայլն: Արեւելեան երկիրներուն մէջ ալ սոխը դարերէ ի վեր իբր դարման կը գործածուի հերթածափութեան դէմ:

**Ագարէ,** այսինքն գլխու մէկ կողմին ցաւեւէն տառապողները, մանաւանդ կանայք, հեռի մնալու են սուրճէ, թէյէ և ամէն տեսակ ըմպելիներէ: Կանոնաւոր պահելու են իրենց մօրսողութիւնը յարմար ուտելիքներով: Այդպիսիները քիչ միտ ուտելու են, անոնց համար օգտակար են պտուղ, կանանչեղէն, կաթ, բրինձ, քաբաս եւայլն:

**Սակաւարիւն** սղջիկները, որոնք շատ քնանալը կը սիրեն, պետք չէ ստիպել որ ատուն կանուխ արթնան: Մարմնական հանգիստը անհրաժեշտ պէտք մըն է այդպիսի-

ներուն համար: Առատեան խոնուի աշխատանքները շատ կը փնասեն անոնց:

**Ակուայի** սասիկ ցաւի ասէն բամպակի կտոր մը դէկդիւռ s'առնիֆաի մէջ թաթ-խելով, ցաւած ակուայի կողմի ականջը խրցելու է անով: Քիչ ատենէն տեսակ մը տաքութիւն կը զգացուի, և ցաւն ալ տեղի կուտայ:

**Համեմարի** չափազանց գործածութիւնը ատային ստուարութիւն կը պատճառէ լեարդին: Ըտալացի մանագէտ բժիշկ մը հաստատած է թէ՛ լեարդի հիւանդութիւն ունեցողներուն մեծագոյն մասը չափազանց համեմ գործածողներ են: Եւ փորձով ալ ապացուցանելու համար թէ համեմները կը փնասեն լեարդին, տարի մը չափ մէկ քանի շուներու և ճագարներու յօրաւոր և պղզ պեղոտ ուտելիքներ տուած և տեսած է որ անոնց լեարդները մեծցած ու ուռեցած էին:

**Ռերնի** դէշ հոտը, եթէ ակուններէն չէ, այլ ստամոքսէն, չափաւոր քանակութեամբ շաքար ուտելով (օրական 100 - 150 կում)

կ'անհետանայս Այս բանակութեամբ շաբարը  
հականեխիչ ազդեցութիւն ունի:

Ծերերը շուտով պաղ կ'առնեն, ուստի  
պէտք է որ ձմեռը և ցուրտ օրերուն մէջ, տաք  
պահող անկողիններս մէջ պառկին և խիտ  
օդերուն երկարատե պտոյտներէ զգուշանան  
Ծերերուն մորթին ալ պաղ է, վասն զի ծերու-  
թեան մէջ անդառուութեան նուազման պատ-  
ճառաւ մարմինը նուաղ ջերմութիւն կ'ար-  
տադրէ: Մորթին մէջ արեան շրջանը ոգեւո-  
րելու եւ ցրտառութեան դէմ պատասպարելու  
համար յանձնարարելի է մարմնը յատուկ  
չոր ձեռնոցով շփել մարմինը: Զգուշանալու  
է պաղ ջուրով լոգանքէ:

Փորձառութեամբ հաստատուած է որ  
ականջի հիւանդութիւն ունեցողները իրենց  
ականջներուն մէջ տեսակ մը շէն և կամ  
բղղիւն կ'զգան, եթէ ոտքերնին պաղ բլլայ:  
Յորչափ բժշկուած չեն կատարելագոյն պէտք  
է հեռի մնան պաղ լոգանքէ: Ապաքինուածէն  
ետքն ալ պէտք է որ ձեթի մէջ թաթխուած  
բամպակով խցեն ականջին: Գլուխնին լուս-  
ցած կամ ջուրի մէջ խոթած ատեննին:

ԱճճՈՒՐԵԱՆ Դէմ անվրիպելի միջոց  
մ'է հետեւեալը. — բամպակէ գուլպաները  
պէտք է պաղ ջուրի մէջ թրջելէ ետք քամել  
ու հագնիլ, և այդ թաց գուլպանն վրայէն  
բուրդէ չոր գուլպաներ հագնիլ: Այս գործո-  
ղութիւնը պէտք է անկողին մտնելէ առաջ  
ընել: Առտուն հանելու է գուլպաները: Ձրա-  
բուժական այս կօշիկոնները շատ կը գործած-  
ուին այժմ՝ Եւրոպայի մէջ:

Ականջի հիւանդութիւն ունեցողները  
կարելի եղածին չափ զգոյշ բլլալու են ջեր-  
մութեան յանկարծակի փոփոխութեան են-  
թարկուելէ: Օդի սաստիկ փոփոխութիւնն  
ալ շատ կ'ազդէ իրենց վրայ: Այս տեսակ  
հիւանդները լաւ կը լսեն երբ օդը տաք ու  
չոր է, և բնդհակառակն՝ երբ օդը պաղ ու  
խոնաւ է: Հոգ տանելու են որ զգեստնին տաք  
պահող բլլայ:

Հիւանդի սենեակին օդը մաքուր պահելը  
շատ օգտակար է հիւանդին: Սենեակին գէշ  
հոտը անմիջապէս անհետացնելու պարզ մի-  
ջոցն է աման մը տաք ջուրի մէջ դրալ մը  
բեւեկնիլ խէտ (թիրէմէնդին) լեցնել: Գեշ

հոտով ամէն տեսակ առարկայ կամ ճերմակեղէն կարելի է սյուպիսի ջրով լուալ և առք տեղի մէջ չորցնել:

**ԿՈՒՐԾԲԵՐՆԻՑ** տկար և թոքախտի տրամադիր անձերու համար յարմարադոյն սնունդ մ'է կաթը, բայց լաւ կաթը: Եթէ ամբողջ տարին միայն կաթով և կաթնեղէնով անանին, առողջ կը մնան:



## ԱՌՏՆԻՆ ԴԵՂՍՐԱՆ

Քացախը, մանաւանդ լաւ գինիի քացախը գերազանցապէս ազդեցիկ դեղ մ'է: Կը զօրացնէ ջրղեւը, եթէ ջրային ցաւերու ատեն քացախով թրջուած լաթ մը գրուի ցաւած տեղին վրայ: Նոյնպէս եթէ քացախ քաշուի քիթէն: Տապագին ջերմերու ատեն եթէ մարմինը շփուի լաւ քացախով, արդիւնքը շատ գոհացուցիչ կ'ըլլայ: Այս պարագային նախապէս ջրախառն քացախ և ապա զուտ քացախ գործածելու է: Գլխի ջրա-

ին ցաւերու ատեն ալ քունքերուն քացախ քսելը օգտակար է:

**ԿԱՍՏԱՐԻՅԱՎ** առողջ կը համարուի այն անձը որուն քունը կանոնաւոր, հանդարտ ու խոր է, որուն բազկերակը հանդարտ, տեւական ու կանոնաւոր կերպով կը զարնէ, որ քունէն արթննալէն ետքը ինքզինքը կազդուրուած կը զգայ, որուն բնական պէտքերը կանոնաւոր են, որուն քրտինքը միօրինակ, չափաւոր և ոչ-դարչահոտ է, որուն մարմնոյն ջերմութիւնը կանոնաւոր է, և ուրախ զուարթ ու դոհ տրամադրութեան մէջ կը գտնուի:

**ՄԵՐ** խողութեան գործարանն ալ պէտք է որ առարկայ ընենք մեր մեծագոյն հոգածութեան, ինչպէս մեր տեսողութեան գործարանը: Մտաք մը որ լսելու կարողութիւնը չունի, կէս կոյր կը համարուի: Լսողութիւնը առողջ պահելու համար պէտք է զուշանալ անոր փափուկ մասին վստող ամէն բաներէ: Շատ զոյշ ըլլալու է սրածայր առարկաներով ականջները խառնելէ. զուշանալու է որ սուր ու զօրաւոր ձայներ չբախին ականջին: Շատ ցուրտն ալ կը վնասէ

լոտղութեան Լսողութիւննին տկար անձերը սաստիկ ցուրտերուն կրնան քիչ մը բամպակ դնել ականջներնուն մէջ: Ոմանք սովորութիւն ըրած են, գլխէն պաղ առնելով, ահանջի, ակուսյի ցաւերու չենթարկուելու համար, ձմեռը շարունակ բամպակ դնել ականջներուն մէջ, կարծելով թէ բամպակը առաջքը կ'առնէ այդ բաներուն, մինչդեռ ականջին մէջ երկար սատեն բամպակ պահելը կը փափկացնէ լոտղութեան ուղին, որ շատով կը փնտուռի օդի յանկարծական փոփոխումէ: Առողջարանականէն զատ գեղեցկագիտական տեսակէտով ալ փնտասկար է ականջի մէջ շարունակ բամպակ դնելու սովորութիւնը — Ականջին մէջ մտնող օտար մարմինները պէտք է անմիջապէս հանել տալ թծրկի ձեռքով: Ականջին, ինչպէս նաև մարդոցս ամէն գործարաններուն համար, փնտասկար է տաքէն անմիջապէս պաղին անցնելը:

Պաղէն յառաջ եկած ականջի ցաւը կ'անհետանայ եթէ հաւատար չափով առևի-  
 ֆայի և կշիսերիկի խառնուրդի մէջ թաթ-  
 խուած բամպակ դրուի ցաւող ականջին մէջ: Ոտքերը տաք ջրով լուալէ անմիջապէս ետքը

պաղ ջրով լուալ և անմիջապէս չորցնելն ալ օգտակար է:

—

Փոքր մէկ քանի անգամ՝ պաղ ջրով կարկառաւ ընելը և բերանը լուալը, աղոց համար բերնի և ակուսներու մաքրութեան լաւագոյն միջոց մը ըլլալէ զատ, կը պաշտպանէ զանոնք վիզի ու կոկորդի հարբուխներու դէմ, որոնք պաղէն յառաջ կուգան: Ամէն առտու պաղ ջուր քիթը քաշելն ալ կը պաշտպանէ մարդս հարբուխի դէմ:

—

Քերնով՝ նամակադրոշմ՝ կամ խէժոտ ու է թուղթ թրջելը չափազանց վտանգաւոր ունակութիւն մ'է, քանի որ այս տեսակ թուղթերու վրայ քուած և չորցուցուած խէժին պատբաստութիւնը մտքուր բան մը չէ, այլ այդ խէժի խաւերը, թէև չորցած, բայց զանազան ազատութիւններ և հիւանդութիւններ կը կրեն իրենց վրայ, զորս նոյն թուղթերը լցելով թրջողները կ'առնեն և կրնան ծանր հիւանդութեանց ենթարկուիլ: Ակուսները, կամ ոսկորի փոքրիկ կտորները և կամ շատ խորովուած ուտելիքները և այլն լեզուին վրայ փոքր ճեղքեր կը պատճառեն

զորս մարդ չ'զգար, բայց ատոնք միշտ բաց դռուհներ են մարմնոյն թշնամի մանրէկներուն համար, որոնք կրնան այդ ճեղքերէն թաթանցել արեան մէջ: Քանի որ գիտութիւնը հաստատած է թէ մահաբեր հիւանդութեանց հազարաւոր մանրէկներ կրնան բոյն դնել ազտոտ ակուաներու վրայ, և սրովհետեւ խեղճոտ թուղթերու վրայ կրնան գտնուիլ այդպիսի մանրէկներ, պէտք է զգոյշ ըլլալ և բերան չտանիլ այդպիսի թուղթերը: Կոկորդի հիւանդութեանց մեծ մասը թղթագրոյջները բերնով թրջելու հետեւանք է: Յարմար աւիթն է հոս, զգուշութեան հրաւիրել, մանաւանդ, գրոյջմթուղթի հաւաքումով զբաղող տղաքն ու չափահասները, որոնք աւելի եւս ենթակայ են վերոյիշեալ վտանգին:



**Ս. դիֆի** բորբոքում ունեցողներուն ազէկ չեն գար իւղոտ կամ ճարպոտ կերակուրները, մանաւանդ, ինչպէս գիտական նորագոյն փորձերը կը հաստատեն, դժուարահալ ճարպերը, ուրկէ զգուշանալու են այդպիսի հիւանդները: Հաստատուած է որ ձէթը և ձկան իւղը կարագէն աւելի օգտակար են և

խողին ճարպը կոլու ճարպէն կամ դմակէն աւելի դիւրատար է: Բայց իւղոտ կերակուրներէն բոլորովին հեռի մնալն ալ սխալ է. վտան դի այն ատեն մարդ ուժասպառ չմտալու համար այնչափ միտ կամ իր մէջ բնասպիտ ունեցող բաներ ուտելու է, որոնց չեն կրնար տոկալ մարդու մարտողական գործարանները:



**Ոտ** լուալը, այսինքն սաքերը միշտ մաքուր պահելը աւողջութեան պայման է: Լաւ է որ մարդ վարժուի ամէն իրիկուն պաղ ջրով լուալ ոտքերը: Խոկ ոտքերը տաք ջուրի մէջ դնելը (լոգանքը) տարբեր բան է: Տաք ջուրը դէպի ոտքերը կը քաշէ արիւնը. ուստի այս միջոցը կը գործադրուի եթէ գլխու մէջ արեան համախուճութիւն, և հետեւորար գլխու ցաւ, դժուարաշնչութիւն և ոտքի պաղութիւն զգացուի: Ոտքերու պաղութեան ատեն պէտք է (24 ատտիճան աէօմիւր) տաք ջուրի մէջ դնել ոտքերը (Բայց այս պէտք է ճաշէ առաջ տեղի ունենայ և ոչ թէ ետքը): Լաւագոյն է այդ տաք ջուրին մէջ քիչ մը աղ, կամ մոխիր և կամ մանանեխի փոշի դնել: Ոտքերը շատ տաք զգացուած ատեն ալ պաղ ջուրի մէջ դնել օգտակար է, բայց

շատ կարճատե կերպով, և ջուրէն հանելէն ետքն ալ ուժով մը չորցնել ու շփել պէտք է դանտը: Սակաւարիւն և ջղացաւոտ անձինք տաք ջրով սոքի լոգանք ընելու մասին պէտք է որ կանխապէս բժիշկին հաճութիւնն առնեն:



**Կարնիսու** մօր մը կեանքը միշտ հանդիստ ու կանսնաւոր ըլլալու է. դժնդակ աշխատանքը, դիշերային երկար հսկումները, թշուառութիւնը, չարաչար յոգնութիւնը բնակարանի անյարմարութիւնը ինչպէս նաև մորթային անմաքրութիւնը կաթի բնական և միօրինակ արտադրման իրական արգելքներ կը լինին:

Բարոյականապէս ալ մօր մը հոգեկան արտադրութիւնները կը փոփոխեն կաթի քանակն ու սրակը, ինչպէս՝ չափազանց բարկութիւնը, յուզումը, վիշտը, մտահոգութիւնը, երկիւղը, գրգռումը, տակնուվրայութիւն մը կրնայ բերել կաթնային արտադրումին մէջ, ուստի, մէկ բառով, սնուցիչ մայր մը մեծապէս զգուշանալու է ջղային ամէն տեսակ գրգռումներէ:

**Քնանալու** ատեն պէտք չէ ձախ կողմին վրայ պառկել, վասն զի այդ ձևով սրբտին գործունէութիւնը կը փաստուի. բայց կանակի վրայ պառկած ալ քնանալու չէ, սրով հետեւ մարմնոյն այդ դիրքովը ողնաձուձը կը գրգռուի և խռովեալ երազներ, մշտական ջներ, խորգալ յառաջ կուգան. դուրսը բարձր դիրքով դանուած ատեն ալ արեան շրջանը կը դժուարանայ: Լաւագոյն է աջ կողմին վրայ պառկած քնանալ:



**Քթին**, կոկորդին և խւչափողին հարբուխը գլխաւորաբար օգին աղդեցութենէն յառաջ կուգայ, ամբողջ մարմնոյն կամ անոր մէկ մասին ցրտառութեամբը: Մարմնոյն այդ ցրտառութիւնը յառաջ կուգայ օդի հոսանքին մէջ գտնուելով, տաք տեղէ մը պաղ տեղ մը անցնելով, սաքերը խոհառութեան կամ պողի ենթարկուելով, ձմրան մէջ գլխու մտղերը թրջելով կամ շատ կըտրելով: Ասանցմէ զատ կարելի է որ փոշի շրջելով լրբանաթաղանթները գրգռուին և հարբուխ յառաջ բերեն: Զգուշանալու է:



**Խաղողաղարմանումը** յանձնարա-



բելի է ուժաւորման համար անոնց որոնք սակաւարիւն (անէմիք), տկար և հիւանդութենէ նոր ելած են: Բնականաբար խաղողին հետ ուտելու է բնասպիտ ունեցող սննդեղէն մը, ինչպէս միտ, հաւկիթ, և այլն: Իսկ անոնք որ թուլութի (մոյսաբլ) կամ գոլորտամարտութեան ենթակայ են՝ անոնց համար չէ խաղողը: Օրական մէկ լիտրէն սկսելով, տակաւ բարձրանալու է մինչև հինգ լիտրի: Օրական բաժնին կէտը ուտելու է առտուն անօթի փորանց, միւս կէտն ալ օրուան մէջ 2—3 անգամէն: Խաղողի կուտն ու մաշկը միատեղ կլլելու չէ: Խաղողի դարմանումը շորս շարժութ տեսելու է:

**Կարոսադարմանումը պարզ դեղ է** յօդացաւի և այլնի դէմ: Ամէն օր կարոսի երկու մեծ պճեղ եփելով խմելու է անոր հիւլթը, և եթէ կարելի է ուտել նաև պճեղները: Քիչ ատենէն մարդ կը զգայ ատոր արդիւնքը: Տեսնուած են դէպքեր ուր յօդացաւէ տառապող և շարժելու գրեթէ անկարող անձեր կարոս (քերէվիզ) ուտելով առողջացած են կատարելագոյն: Կարոսը վնասակար բան մը չէ, և փորձելն ալ շատ դիւրին:

**Ուրպէս զի մերթը միշտ մաքուր և զունազան վնասակար փոշիներու աղբեցութենէն զերծ մնայ, պէտք է պորաքսախառն ջրով ամէն առտու լուսլ դէմքը և մորմնոյն սովորաբար բաց թողուած մասերը: Պորաքոը կը մաքրէ գիշերը մերթին վրայ հաւաքուած թթուոտ ճարպը և կը զովացնէ մերթը: Մէկ մաս պորաքս և 12 մաս ջուր իրար խառնելով (լու կ'ըլլայ՝ եթէ քիչ մ'ալ վարդեջուր աւելցուի) շիշի մը մէջ պահելու է, ի հարկին գործածելու համար: Պորաքսախառն այս ջրով լուսցուելէ ետքը, 3—4 վայրկեանի չափ սրբելու չէ մերթը: Ապա պէտք է ընել սովորական լուսցումը, առանց աճառի:**

**Ջգայուումին (ընչբըրըք) դէմ պէտք է գաւաթ մը ջուր խմել ումպ ումպ, պայմանաւ սակայն որ երկու ձեռքերով ամրապէս գոցելու է ականջները: Այս պարագային մէջ, բնականաբար, պէտք է որ գաւաթը ուրիշ անձ մը բռնէ:**

**Աւնան և գարնան մէջ յաճախ ստէպ կ'ըլլան յօդային կաթուածի դէպքերը: Ենթական պէտք է անմիջապէս անկողին փո-**

խաղբել, որպէս զի մարմինը և անդամները սեղմնւած չմնան: Եթէ սաքի մեծ մատին յօղը, բռնուած ըլլայ, պէտք է բարձր դիրք մը տալ սաքին, որպէս զի արեան շրջնանք դիւրանայ, եթէ բորբոքած անդամը շատ ատքուծիւն ունենայ, գուշոշուն սիրիսիսի մէջ թաթխուած լաթ մը դնելու է վրան: Եթէ ցաւը անցնի, հիւանդը կրնայ ելլել անկողնէն, քալելով կամ ու է մարզանքով մը շարժման մէջ դնելու համար պրկուած անդամը: Մսեղէն կերակուրէ և ոգելից ըմպելիներէ զգուշանալու է: Ներսէն կամ դուրսէն գործածելու գեղերը բժիշկէն սպասելու է:



**Մրսի** տկարութիւն ունեցողներուն մարմնամարդն է՝ մաքուր ու բաց օդի մէջ շրջագայիլ յամրաբայլ: Ատկէց աւելին վտանգաբեր է:




**ՄԱՐԴՈՒՍ ԷՆ ԱՆՌԵԼԻ ԹՇՆԱՍԻՆ**

Ա՛լ ստուգուած է որ շատ մը տարափոխիկ հիւանդութիւններ, ինչպէս փորհարութիւն, թիֆօ, դօլբրա, և այլն ամէնէն շատ ճանճերու միջոցաւ կը տարածուին: Ճանճին գործը և գոյութեան նպատակը կարծես թէ աղտեղութիւն և հիւանդութիւն տարածել է: Ճանճը կը ծնի աղբի ու ու եւ է նեխութեան և աղտեղութեան մէջ: Իր գոյութիւնը կը պահէ աղտի մէջ: Սպիտակին սաքերը աղտեղութիւնը և հիւանդութեան միջբոսկները շալկած՝ մեր տուներուն, մեր կերած կերակուրներուն, մեր խմած հեղուկներուն ու մեր գործածած պնակներուն մէջ կը լեցնեն:

Անշուշտ ամէնէն առաջին քայլն է ճանճին ծնունդը արգիլել, և այդ կ'ըլլայ մաքրութեամբ: Ճանճը աղբի, անստուաններուն թրիքին, բուստկան կամ կենդանական փրտութիւններու և ամէն տեսակ աղտեղութեան մէջ կը ծնի: Ուստի արտաներութիւնները մաքրել և թելով ծածկուած յատուկ ընդունարաններու մէջ դնել պէտք է մինչև որ վերցուին ու տարուին:

Քաղաքի տուներու աղբի և աւելտուքի թիթեղները միշտ մտքուր պահելու է՝ յաճախ լուսարժ և կամ՝ քարիւղով և ուրիշ դեղերով հակահետխելով: Ամէնէն լաւ հակահետխակները ճարպօլիք ստիտը և կիրի քլորօյտոն են:

Չանալու է որ խոհանոցը, ճաշարանը, մանաւանդ հիւանդի սենեակը՝ ճանճ չմտնէ. նամանաւանդ փոխանցիկ հիւանդութիւն ունեցողներուն սենեակը ճանճ ներս առնելը խիստ վտանգաւոր է: Կերակուրներդ միշտ մաղի (թելի) տակ պահէ, նոյնիսկ պտուղները և բոլոր այն բաները որ առանց եփուելու կ'ուտուին: Սենեակ մը ճանճերէն մտքրելու համար «քարպօլիք ստիտ»ը լաւ միջոց մ'է: Երկաթէ թի մը կամ անոր նման օ եւ է բան լաւ տաքցուցուր ու վրան 20 կաթիլի չափ ճարպօլիք ստիտ» կաթեցուր, անոր գորրըշին ճանճերը կը սպաննէ:



# Բ Ժ Շ Կ Ա Կ Ա Ն

Աչաց շիւութիւնը պարզ միջոցով մը շատ հեղ կը բուժուի: Առողջ աչքը մետաքսէ սև լաթով մը կը կապեն, ու կը թողուն որ միայն շիւ աչքը գործէ, 10—15 օրէն շիւ աչքը կը բուժուի: Կրնայ նաև սև քարթօն մը կապել շիւ աչքին վրայ, մէջտեղը սիսեռի մեծութեամբ ծակ մը բանալով, շիւ աչքը կը ստիպուի այդ ծակէն նայիլ ու կը բուժուի շատ անգամ:



Պաղառուրեան պատճառը ստամոքսի խանգարումն է: Ամբողջ օր ծոմ պահելու է. միայն շատ ջուր խմելու է. պնդութիւն եթէ կայ վերցնելու է պարզ դեղով մը, Անգլ աղ — սիւլֆատ տէ մանիէզի — կամ Հնդիկ իւղ առնելով:



Տասնրիկնգ հոգիէն միայն մին կանոնաւոր աչք ունի, խարտեաշ մաղերով անձինք էն շատ փաստուած աչք ունին:



Հրէից երկրիս էն առողջ ցեղն ըլլալուն պատճառը անոնց ժուժկալը թիւնն է ոգեւից ըմպելիներէ. Հրէից կենաց միջին տեւողութիւնը 49 է մինչ Քրիստոնէիցը 37:

Փորձառութեամբ ստուգուած իրողութիւն մ'է որ մարդոց մեծագոյն մասը չափազանց սնունդ առնելով կը մեռնի, քան քիչ սնունդ առնելով:

Ս. Ուրբէր ոչ բժիշկ և ոչ դեղ կը ճանչընար. «դեղերը շուներուն տալ յարմար է» կ'ըսէր: Բժիշկը, կ'ըսէր նա, մարդ մ'է որ տեսակ տեսակ դեղեր մարդուն մարմնոյն մէջ կը թափէ, առանց մարմնին վրայ տեղեկութիւն ունենալու:

Ք Օ Լ Է Ր Ս.

Քիւնին 10 ցորեն 4 հատ քաշէի մէջ դիր և ժամը 1 քաշէ ա՛ւ, ըստ Տոք. Ըշքրի բուժում ստոյգ:

Ն Ա Խ Ա Ջ Գ Ո Ւ Շ Ա Կ Ա Ն

Արօմաթիք սիւլֆրիք Ասիտի լէմօնաթէն մէկ քետտէ ջուրի մէջ 15 կաթիլ, մերթ ընդ մերթ խմել: Կ'ապահովէ քօլէրայէ:

ՏՈՒՔ. ԸՇԸՐ

ՔՕԼԷՐԱՅԻ ԴԷՄ ԶԳՈՒՇԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Առողջապահական խորհուրդին պաշտօնական հրահանգները.

Քօլէրայէ դերժ մնալու համար ամէնէն անհրաժեշտ միջոցները հետեւեալներն են.

Ա. Ըմպելի ջուրին մաքրութեան չվտաճելով, անպատճառ եռացնել ու պաղելէ ետք խմել:

Բ. Չեռքը, երեսը լուալու և մաքրութեան համար գործածուած ջուրը պէտք է եռացած ըլլայ:

Գ. Չուրի դաւաթ, սուրճի գաւաթ, պնակ, դաւալ, պատառաքաղ և այս տեսակ ամանները պէտք է լուալ եռացած ջուրով:

Դ. Պէտք է վերջին ծայր ուշադրութիւն ընել, որպէս զի ճանճերը չնտին ուտելիքներու և անոնց ամաններու վրայ:

Ե. Երբէք չուտել հում սալաթա և չեռացած բանջարեղէն:

Զ. Պէտք չէ չափազանց բանջարեղէն ուտել, եթէ նոյն խակ եռացած ալ ըլլայ:

Է. Խսակ, փտած և աւրուած պտուղ և սնունդ երբէք պէտք չէ ուտել:

Ը. Որչափ որ կարելի է, պէտք է հոգ

տանիւ որ պտուղները ուտուին եփուելէ և զօմբօսթօ ըլլալէ վերջ:

Թ. Այն պտուղները, որոնք զօմբօսթօ չեն կրնար ըլլալ, ինչպէս խաղողը. պէտք է լաւ մը լուալ և եռացած ջուրին մէջ քանի մը վայրկեան դնել և յետոյ ուտել:

Ժ. Պէտք է զգուշանալ սեխ և ձմերուկ ուտելէ, որովհետև լուծողութիւն կուտան:

ԺԱ. Պէտք է զգուշանալ ստամոքսը աւրող և լուծողութիւն առող կերակուրներէ, ձէթով կերակուրներէ և խմորեղէններէ, օթէկ միսէ և ձուկէ, որսի միսերէ, ապուխտէ, երշիկէ, հոս հոն ծախուած օշորակէ, հասարակ ջուրերով շինուած կաղօղի նման ըմպելիներէ և ուտելիքներէ:

ԺԲ. Կարելի եղածին չափ զգուշանալու է պաղէն և խոնառութենէն:

ԺԳ. Շատ յարմար է բուրդէ թեթև գօտի մը կապել փորի վրայ:

ԺԴ. Պէտք է չափազանց հոգ տանիլ տուներու մաքրութեան: Պէտք է աւելցուքները (չէօփ) դնել լաւ կերպով խցուած ամաններու մէջ: Տուներու ներքին մասերը պէտք է յաճախ կիրով ծեփել: Ճեմիշները պէտք է լուալ և շատ մաքուր պահել և հողէ

ամանի մը մէջ դրուած օխա մը ջուրին մէջ 20 տրամ կեօզ քաշը դնել և յաճախ թափել ճեմիշին մէջ:


ԺԵ. Պէտք է խոհանոցին մէջ մտնել ստանամանով: Պէտք է ստանամանները մաքրել խոհանոցին մէջ և եթէ կարելի է ստանամանով չմտնել տան մէջ:

ԺԶ. Պէտք է զգուշանալ այն ամէն չափազանցութիւններէ, որոնք մարմինն ոյժն ու դիմադրութիւնը կը նուազեցնեն և պէտք է զգուշանալ առողջապահական օրէնքներու դէմ մեղանչելէ:

ԺԷ. Լուծողութեան կամ ստամոքսի անկանոնութեան ենթարկուողները, պէտք է առաջքն առնելու համար անմիջապէս բժիշկի դիմեն և դորժած են բժիշկին յանձնարարած առողջապահական միջոցները:

**Փանջասեղաւորները** պարտին միմիայն կաթով սնանիլ ամբողջ իրենց հիւանդութեան ժամանակամիջոցին, ասոնց աղիքները վէրքերով ծածկուած ըլլալով՝ կաթէն զատ ու է կերակուր կրնայ շատ աղէտալի հետեւանքներ յառաջ բերել, պարզապէս մահուան պատճառ կրնայ ըլլալ, որովհետև


յայտնի է թէ կերակուրներն ստամոքսային մարտողութենէն վերջ (ժանտատենդաւորներու ստամոքսը չկրնար իր գործը լիովին կատարել) կ'անցնին աղիքներու մէջ և ահա կը սկսի այդ երկար խոզովակի կարեւոր աշխատութիւնը, անդադար կծկումներն, որ կրնան այդ վիրաւորեալ աղիքները ծակել ու մահացու փորմասշկատապ յառաջ բերել



**ԿԵԱՆՔԸ ԵՐԿԱՐԵԼՈՒ ՏԱՍՆԱԲԱՆԵԱՅ**

1. Ուտելու, խմելու և ամէն բանի մէջ չափաւոր և ընտրող եղիր. կե՛ր ապրելու չամար:
2. Գիշեր ցորեկ մաքուր օգ շնչէ և արեգակը թող մուտ գտնէ բնակարաններէ ներս: Մարդանք:
3. Մաքրութիւն մարմինի, մտքի, խորհուրդներու և երեւակայութեան, հիւանդութեանց դէմ անոպար է:
4. Հոգ, կերք, մտահոգութիւն, յուզում, վիշտ, արտունջ և բարկութիւն արտաքուէ քեզմէ, զի կեանքը կը կարճցնեն. միշտ զուարթ:

5. Աշխատութիւն, շարժում, կենաց նպատաւոր է. ծուլութիւնը կեանքը կը սպառէ:
6. Կանուխ ելլել, կանուխ պառկել կ'ընէ զմարդ առողջ և երկայնակեաց:
7. Ամուսնութիւնը անհրաժեշտ է երկարակեցութեան, պայմանաւոր կենաց յարմար ընկեր գտնես ժամանակին, ինչպէս ըսու Արարիչը:
8. Արարչիդ վրայ կատարեալ վատահութիւն ունեցիր. աստուածպաշտութիւնը ամէն բանի օգտակար է:
9. Ներկան քուկդ է. ապագան թող դքեզ չխուովէ. հերիք է ամէն օրուան իր նեղութիւնը:
10. Միշտ յիշէ թէ ամէն բան բարի գործակից կ'ըլլան անոնց որ կը սիրեն զԱստուած: Յուսալից եղիր. կրօնքը երկարակեցութեան միջոց մ'է:



## ՅԱՂԱԳՍ ՄԱՀՈՒԱՆ

Կան մարդիկ որ քաջառողջ վիճակի մէջ մահուան մօտ ըլլալնուն նախազգացումն ունին և կը կանխատեսեն. 1717/ն ի Փարիզ, քաջառողջ մարդ մը, կ'ըսէր թէ իր կենաց երեկոն մօտ է. քիչ յետոյ կաթուածահար եղաւ ու մեռաւ:

Պիեղիէ հռչակաւոր բեմասացը երազին մէջ իր մահը այնքան մօտ տեսաւ, որ իսկոյն գերեզմանին շինութեանը ձեռնարկեց. և կը կը ստիպէր գործաւորներն աճապարեւ. և յիշուաւի հաղիւ թէ գերեզմանը աւարած էր, ինք ալ իր մահկանացուն կնքեց:

Հօկարդ նկարիչը «ամէն բանի վախճանը» ներկայացնող պատկեր մը կը ներկայացնէր. բարեկամներէն մին կատակելով ըսաւ. «բայց այն ատեն նկարիչին ալ վախճանը կուգայ», «հարկաւ», պատասխանեց նկարիչը, ու շարունակեց, «որքան շուտ աւարտեմ նկարս այնքան լաւ կ'ըլլայ», Ապա սկսաւ անանկ եռանդով աշխատիլ իբր

թէ պէտք էր նոյն օր աւարտել նկարը: Վերջին անգամ վրձինը շարժած էր նկարին վրայ, կտորեց վրձինը ու ներկին պնակը, և գոչեց. «լմնցաւ». ամիս մը ետքը գերեզման գրուեցաւ առանց նորէն վրձինը ձեռք առած ըլլալու:

Ճոն Հընդըր մեծ վերաբոյժը կ'ըսէ. «Շատ հեղ նախազգացում» կ'ունենանք թէ շուտ պիտի մեռնինք, քանզի կենաց զօրութիւնները տկարացած են ու ջիղերը այս զգացումը կը հաղորդեն ուղեղին: Իրեն ալ այսպէս պատահեցաւ: Հընդըր հիւանդանոցին մէջ ուրիշ բժիշկի մը հետ բանակութիւ մը ունեցած էր. բժիշկը ստախօս էր կոչած զինքը: Հընդըր տուն գնաց յուզեալ և ըսաւ թէ այս իրեն մահուանը պատճառ պիտի ըլլայ և յիշուաւի անշնչացեալ գետինը ինկաւ սրտի պատառումէ:

Փութ Անգղիացի գերասանը իր մեռեալ բարեկամին Ուէսթընի պատկերը տեսաւ. «Խեղճ Ուէսթըն», ըսաւ, խոր հառաչելով, «քիչ ատենէն խեղճ Փութ պիտի ըսեն», ու քանի մը օրէն նախազգացումը տեղի գտաւ:

**Ծրանց Ա.** Թագաւորին մայրը Էլէօնօրա հիւանդ էր, և կը կարճէր թէ դիաւաւոր սասող մը պիտի երեւէր: «Այս աղքատ դասակարգին համար չէ, ինծի համար է այս նշանը, վախճանս մօտ է» կ'ըսէր, ու հրամայեց որ պատուհանը գոցեն որ ինքն ալ մահուան պատրաստութիւն ընէ: Բժիշկները վստահեցուցին զինքը թէ իր վիճակը երբէք երկիւղ չպատճառեր: «Եթէ երկնից այդ նշանը տեսած չըլլայի», պատասխանեց իշխանուհին, «ես ալ քեզի պէս պիտի խորհէի». երեք օր յետոյ մեռաւ այս կինը:



**Կարտիկալ** մը իշխանուհիի մը հետ, իբր կատակ, մայրապետի մը խուցը գացին գիշերով զանի իբր մեռեալ ներկայացնելու համար: «Հիմա կը մեռնի կոր» կ'ըսէին ցած ձայնով, ու յիբաւի խեղճ մայրապետը մեռաւ նոյն պահուն:



**Միջին** դարուն վերջերը Գաղղիոյ մէջ անսովոր բան չէր մտահապարտները բժիշկներուն յանձնել անոնց վրայ փորձեր ընելու համար: Անգամ մ'ալ գլխատման դատապարտեալ աղնուական մը բժիշկներու յանձ-

նեցին: Երեւակայութեան կատարած դերը փորձել ուղեցին անոնք, ուստի ըսին դատապարտեալին թէ ամենաթեթեւ մահուան պիտի հնթարկէին արիւնը հոսել տալով: Գլուխը ծածկեցին, ոտքերը տաք ջուրի մէջ դրին ու սկսան օտքին վրայ ձեռքով ճնշումներ ընել իբր թէ նշտրակով արիւն կ'առնէին: Միեւնոյն ատեն կը պատմէին միմեանց բժիշկները այն ահուելի հետեւանքներն որ արեան հոսելովը յառաջ կուգայ: Փորձը կատարեալ էր, թէև դատապարտեալը կաթիլ մը արիւն իսկ չէր կորսնցուցած, սակայն երբ գլխուն ծածկոցը վերցուցին, անիկա արդէն մեռած դիակ մ'էր:



**Ռիբլիէօ**՝ սպեւտ մը կառավանատն հանեց խոստովանութիւններ ընել տալու համար. սպեւտը աներկիւղ և հաստատ մնաց. սակայն ան մի քանի վայրկեանը, երբ նա գլուխը կոճղին վրայ դրած դահիճին կացինին իյնալուն սպասելով անցուց, զինքը այն սասիճան զգոյսովրկ էր ըրած, որ բառական ժամանակ տեւեց մինչև որ վերականգանացաւ:





# ԳՈՐԾԻ ՄԱՐԴՈՑ

Գործի մարդոց ասանաբանեան:

Հեռու կեցիր այն մարդէն

1. Որ կ'անարգէ իր բարերարը:

2. Որ անհիմն տեղը գէշ արարքներ կը վերագրէ ուրիշին:

3. Որ երբէք լաւ բան մը չունի ու է մէկուն համար:

4. Որ կեանքի վայելքներուն մէջ մինակ կ'ախորժի:

5. Որ իր ընտանիքին գերազանցութիւնովը իր անձը կը բարձրացնէ:

6. Որ կիներու և այրերու պատիւին վրայ անզգուշութիւնով կը խօսի:

7. Որ պարտք կ'ընէ առանց վստահ ըլլալու թէ պիտի կրնայ վճարել:

8. Որ աւելի շահաբեր՝ քան ուղղամբտութիւն պահանջող գործը կ'ընարէ:

9. Որ վստահութիւնը կը մատնէ:

10. Որ կը ստէ ի պահանջել հարկին:

Հեռու կեցիր այսպիսի մարդոցմէ:

ՏՈՒՅԹ. ԷԷՆՐԻ ԱԼՈՒՉ

**Աւելարհի** մեծագոյն մարդիկ ժամանակի ծայրայեղ խնայողութեամբ միայն կրցած են հասնիլ իրենց բարձրութեան: Այն ժամերը, նոյն իսկ բոլորէնբը զորս մենք սովոր ենք իբր անարժէք նետել, ուրիշներ իրենց մեծութեան դրամագլուխ ըրած են:

Կլատութիւն կ'ըսէ. «Հաւատա ինձի երբ քեզի ըսեմ, թէ ժամանակի խնայողութիւնը սպագայ կեանքիդ մէջ՝ քու ամենաբուռն երեւակայութենէդ աւելի մեծ տոկոսով մը շահ պիտի վճարէ քեզի, և թէ ժամանակի վատնումը քու ամենադառն երկիւղէդ աւելի պիտի պղտիկցնէ քու թէ՛ մտաւորական և թէ՛ բարոյական հասակդ:»

Կլատութիւն ամենախոշոր ուղեղի տէր անձ մը, հանճար մ'էր: Այսու ամենայնիւ միշտ դրպանը գիւրք մը կը պտըտցնէր, որպէս զի երբ ու է տտեն մը պարտալ վայրկեան մը դտնէր, կարդար ու սորվէր: Երբ աշխարհի մեծագոյն մտքի տէր եղողը այդպէս կը վարուի ժամանակի հետ, ս'ըջտի աւելի մեղի պէս հասարակ մահկանացուներու անկ է ընել:

Միքայէլ Ֆարատէյ, ոչ միայն Անգլիոյ, այլ ամբողջ աշխարհի մեծագոյն քիմիադէտը, կազմարարի մը քով գործած տտեն

խնայած ժամանակին մէջ փորձեր բնելով էր որ սկսուէր իր բեղմնաւոր կեանքը: Անգամ մը կը գրէր իր մէկ բարեկամին. «Ենչ որ պէտք է ինծի ժամանակն է: Ո՛հ, թէ կարենայի աժտան գնով գնել մեր նորահաս պարուններէն մէկուն վատնած ժամերը, — նոյն իսկ օրերը:»

Գերման գիտնական Ալեքսանդր Հուսօպոլդի ժամերը իր առեւտրով ոչին աստիճան գրաւուած էին որ իր գիտական գործերը կը կատարէր զիշեր ատեն կամ առաւօտուն շատ կանուկ երբ ուրիշներ կը քնանային:

Պրնիզ բանաստեղծը իր ամենէն լուսնաստեղծութիւններէն ոմանք ագարակի մը մէջ գործած ատեն գրեց: Ճան Սթուրթ Միլ, իմաստասէր անտեսագէտը, իր լուսագոյն երկատիրութիւնները գրեց երբ առեւտրական ատն մը մէջ իբրև պաշտօնեայ կը ծառայէր՝ իր խնայած ժամերը միայն իր ընտրած ճիւղին յատկացնելով:

Կիկերոն կ'ըսէր. «Ենչ ժամանակ որ ուրիշները կուտան ներկայացումներու և հանդէսներու, այո՛, մտաւորական ու մարմնական հանգստեան, ես կուտամ՝ փիլիսոփայութեան ուսման:» Լորտ Պէյքըն պետական գործերով խիստ զբաղած ատեն իր խնայած

ժամերուն մէջ գրելով էր որ իր մեծագոյն գիրքը գրեց: Ո՛րչափ ճշմարիտ է իր ըսած խօսքը. «Մարդ մը որ տարիներու հաշուով երիտասարդ է, կրնայ ժամերու հաշուով ծեր ըլլալ եթէ ժամանակ չէ կորսնցուցած: Բանաստեղծ Կէօթէի համար կը պատմուէ թէ երբ մեծ թագաւորի մը հետ կը տեսակցէր, յանկարծ միտքը ընտիր խորհուրդ մը ինկաւ, ուստի ներողութիւն խնդրելով անմիջապէս միւս սենեակը գնաց և միտքը ինկած խորհուրդը գրի առաւ. ահա այսպիսի խնայեալ վայրկեաններով էր որ յօրինեց իր մեծ երկատիրութիւնը, Յասութը: Սըբ Հըմֆրի Տէյլի քիմիագէտը դեղագործի մը ձեռնայարկին մէջ ընկած ատեն իր խնայած բողբոջներու շնորհիւ էր որ իր անուը անմահացուց: Փոփ բանաստեղծը յաճախ զիշերը անկողինէն կ'ելլէր և միտքը երկած ընտիր խորհուրդը գրի կ'առնէր որ չի մոռնայ:»

Սամուէլ Պրճէթ բաղմազաղ Անգլիացի վաճառական մ'էր որ ոչինչէն յառաջ բերած էր իր առեւտրական տունը զոր կը ղեկավարէր ուղղամտութեան, հաւատարմութեան և արդարութեան սկզբունքները:

«Գործեւ, գործեւ, գործեւ»։ այս էր իր նշանաբանը։ Ժամ մը պարսպ չէր անցընէր, բարեք գործելը իր մեծագոյն հաճոյքն էր։ Առաւօտուն խիստ կանուխ կ'ելլէր և մինչև ուշ ատեն կը գործէր։ Իր օրագրութեանց մէկուն մէջ կը գրէ. «Տխուր ու անհաճոյ կիրակի մ'է այսօր, ու զարմանալի ալ չէ, վասն զի ժամը 5½էն ետքն էր երբ արթնցայ»։

Ա Ր Շ Ե Ս Տ Ա Կ Ա Ն

Անուշահոտ օձառ շինելու համար պարզ օձառը պէտք է հալեցնել. օձառը բարակ շերտերու վերածելէ ետև պղինձ կաթսայի մը մէջ լեցնել. թարմ օձառը ջուրի պէտք չունի. խկ չորը քիչ մը ջուր կուզէ հալելու համար։ Երբ օձառը լաւ մը հալած է վրան կ'աւելցնեն պերկամթի, վարդի կամ պատէմի իւղ. յետոյ պատէմի իւղով օձած կաղապարներու մէջ կը լեցնեն որ պաղի։

ՀՈՏԱՒԷՏ ԶՈՒՐ ԳԼԽՈՒ ՀԱՄԱՐ

որ կը մաքրէ, կը զովագնէ ու կը զօրացնէ գլխուն մորթը։

թօմ	100 կրամ
կիրսէրին	20 »
վարդի ջուր	25 »
վարդի իւղ	10 կաթիլ

Խառնէ ու գլխուն մորթը շփէ։

ԿԵՆԱՑ ՄԷՋ ՅԱԶՈՂԵԼՈՒ 15 ԿԱՆՈՆԵՐ

1. Առողջութեանդ պահպանման հոգ տար և խկոյն հրաժարէ զայն խանդարող ամէն մնլութենէ. կիրակին կը նպաստէ առողջութեան։

2. Գործի ընտրութիւն ըրած ատենդ ուշագիւր լըր որ չխալիս. ճաշակիդ ու կարողութեանդ յարմար ըլլայ ընտրած գործդ։

3. Գործդ յառաջ վարելու յարմարագոյն տեղը ընտրէ, դիտելով որ ամէն բոյս միեւնոյն հողին և կլիմային մէջ չբուսնիր և պտուղ չհտար։

4. Խոյս տուր պարտք ընելէ. պարտքը կը նուաստացնէ զմարդ, ազատութիւնը կը խլէ ձեռքէն և ստրուկ կ'ընէ։

5. Գործիդ սկսելէ ետև պարտիս յարատեւել, եթէ վստահ ես որ սկսած գործդ ուղիղ է։

6. Բոլոր ուժդ գործիդ մէջ դիր, զոր ինչ կ'ընես բոլոր ուժովդ ըրէ անձամբդ անձիդ օգնելով։

7. Գործդ դուն կատարէ, ուրիշի մի վստահիր. վստահէ միոյն քու անձնական ջանքերուդ. «ուրիշի ձեռքով օձ բռնէ», կ'ընէ առակը։

8. Լաւագոյն գործիչները, գործաւոր-ները ձեռք բեր, անանկ որ ցմիշտ քովդ պա-  
հես զանանք:

9. «Վերմակիրդ համեմատ երկնցուր  
ոտքերդ» կ'ըսէ առածը, կամ գործէդ դուրս  
և կարողութեանէդ վեր գործի մի ձեռնարկեր  
բնաւ:

10. Գործիդ մէջ կարգապահութիւն  
ունեցիր, ամէն բան իր տեղ, տեղ մը ամէն  
բանի համար, ամէն բան իր ժամանակին, ո-  
րոշ ժամանակ ամէն բանի համար:

11. Ուրիշին երաշխաւոր մի ըլլար ա-  
ռանց նիւթականն ապահովութիւն ստացած  
ըլլալու:

12. Գործդ ազգարարէ հանրութեան  
միայն թէ չըլլայ որ յաճախորդ յուսախար  
ըլլայ:

13. Յաճախորդներուդ հետ միշտ քա-  
ղաքավարութեամբ վարուիլ քեզի օրէնք ու  
կանոն ըրէ:

14. Ուղղամիտ եղիր միշտ. դրամդ ան-  
պատիւ կերպով չահած չըլլաս. խարդախեալ  
ապրանք բնաւ չգտնուի գործատեղիդ:

15. Ընթերցատէր եղիր ինչ գործով ալ  
զբաղիս. կարդա՛ լու լրագիր մը ու օգտակար

գրեանք, մանաւանդ այնպիսի գիրքեր որ քու  
գործիդ զարգացման կը նպաստեն: Ի մասնա-  
ւորի կը յանձնարարուի գիրքերուն գիրքը, Ս.  
Գիրքը. առ անոխալ առաջնորդ է ամէն վի-  
ճակի, հասակի ու տեղի, Յոյց կուտայ բա-  
րին, լաւն, օգտակարը, շահաւորն և կը զգու-  
շացնէ վատէն, յառիէն, ֆրաստակարէն, բաւէ  
որ հետեւինք անոր ձայնին:



### ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ



Մշակ Գեղոյիև

ՋՈՒՐԻՆՆ ՕԳՈՒՏԸ

Մշակ Գեղոն կ'ուղէ հասկնալ ջուրին  
օգուտը երկրագործութեան մէջ: Առանց  
ջուրի չիք երկրագործութիւնն: Բոյսերը մէկ  
քիլոկրամ՝ չոր նիւթ հայլժայլթելու համար,  
երեք քիլոկրամ՝ ջուրի պէտք ունին: Եգիպ-  
տոսի ֆէլլահները, ուր միայն օրհնեալին Նե-  
ղոսի ջրով (Եգիպտոսի մէջ գրեթէ չ'անձրե-  
ւեր) կը մշակեն հողերնին, առած մ'ուռնին

ջուրին վրայ: «Ելլարաք վէլէ շարաք» կ'ըսեն: Այսինքն լաւ է հեղեղ քան երաշտութիւն: Որովհետեւ կ'ըսեն թէ՛ երբ հեղեղ գալու ըլլայ, թէև մեր հունձքը կ'աւերէ, բայց միւս կողմանէ հեղեղին անցնելէն ետքը, արտերուն վրայ առատ խոտ կը բուսնի, որով կրնանք սնուցանել մեր անասունները: Մինչդեռ երաշտութիւնը խոտ, հունձք կը փճացնէ: Մեր երկրին մէջ ալ շատ անգամ երաշտութիւնը կ'աւերէ մեր բերքերը: Ասոր համար պիտի խրատեմ՝ Գեղոս, որ խորունկ հերկէ: Խորունկ հերկուած հողերը աւելի խոնավ կ'ըլլան քան այն հողերը, որնք երեսանց հերկուած են: Խորունկ հերկուած ցորենի դաշտ մը քիչ կը ֆստուի երաշտութենէն: Գերմանացի նշանաւոր հողագէտ՝ Մ. Բեռէլըստ է թէ՛ Գերմանիոյ սպագամն՝ հողը խորունկ մշակելուն մէջն է: Իրացած ըլլանք որ մեր երկրին սպագամն ալ այս կենսական խնդրէն կախում ունի:

**ՅՈՐԵՆՆԵՐՈՒՆ ՔԻՄԻԱԿԱՆ ԱՂԲԸ**

Մշակ Գեղոն կը հարցնէ թէ՛ ի՞նչ է քիմիական աղըր: Իրմիական պարարը՝ անասուններուն աղըրն մէջ գանուող պարարտացու-

ցիչ նիւթերուն խտացումն է: Եւրոպիոյ և Ամերիկայի մէջ շատ կը գործածեն զանոնք: Անգամ մը գուն ալ փորձէ նոյինք: Քաղքիդ երկրագործական պաշտօնեայէն 15 քիլոկրամ՝ Նիթրատ աը Սուտ անուն քիմիական պարարէն ուղէ: Շատ սուղ բան մը չէ՛, 15—20 դրուշ կ'արժէ: Ասիկա փայտի կոճղով մը լաւ մը փշրէ և չոր տեղ մը դիր: Գարնան՝ ձիւնհալէն ետքը և առտուան ցօղն ալ անցնելէն ետքը՝ Ապրիլի սկիզբները՝ կէտը նետէ կանանչ ցորենիդ վրայ և քնացեալ կէտն ալ Մայիսի սկիզբները չէտէ: Ի՞նչ օրէն պիտի տեսնես որ ցորենիդ գորշ կանանչ գոյն մը պիտի առնէ և առատ յարդ պիտի տայ: Եթէ կ'ուղես որ առատ հատ ալ առնես, 20 քիլոկրամ՝ Սուբէրֆօսֆատ բուռած քիմիական աղըրէն գնէ: Ես ալ վերինէն աւելի աժան է: Յօրենդ ցանելու ժամանակ, անհերկ հողին վրայ այս պարարը նետէ և յետոյ ցորենը ցանելով հերկէ: Այս տուած չափերս մէկ տեօնիւմ՝ ցորենի որտի համար են:

**ԹԹԵՆԻՆԵՐՈՒ ԳՈՒՐՈՒՑԱՆԸ**

Գեղոն շատ կը գանգատի ըսելով որ՝ գոշուրսանը՝ Թուրքիոյ մէջ հեռոցետէ կը

ծաւալի և կ'սպառնայ Թուրքիոյ հարստութեան գլխաւոր ազգիւրններէն՝ շերամարածութեան վրայ: Եւ թ'թ ենին՝ Բասթէօուի այդ «թուրքի ծաւը» գուրուսանի ճիրաններուն տակ կը փտտի, կ'երթայ: Եւ դարմանը կը խնդրէ: Յաւալի է ըսել թէ՛ տակաւին դարմանը գտնուած չէ՛ այս անպիտան հիւանդութեան: Գուրուսանը՝ Իտալիոյ մէջ ալ շերամարայծներուն օճախը գուրուսանի կ'ընէ կոր: Այս մասին մի քանի խորհուրդներ: Թ'թատանները խոնաւ հողերու մէջ հաստատելու չէ՛ և կամ խոնաւ հողերու մէջ թ'թատաններու բոլորալիքը և երբեմն մէջտեղէն ալ փոսեր (հէնտէք) բանալով, աւելորդ խոնաւութիւնը չորցնելու է: Այս հիւանդութեան բուժուած ծաւ մը՝ քարանձինայի ենթարկելու է: Այսինքն հիւանդ ծաւին բոլորալիքը չորս կողմէն խորունկեկ փոս մը բանալով, իր միւս ընկերներէն զտելու է և ծաւն ալ տեղւոյն վրայ այրելու և վրան չ'մարած կ'իբլեցնելու է: Գուրուսանը՝ մի քանի տեսակ է: Այնէն վտանգաւորը՝ արմատի գուրուսանն է: Եր շուտով կը ծաւալի թ'թատանի մը մէջ: Այս հիւանդութիւնը սուսկէ մը յառաջ կուգայ կոր. այս անպիտան սուսկը եր-

կայն մաղեր (միսէլիօմ) ունի. այդ մաղմղուկները հողին տակէն քայելով կ'երթան ուրիշ ծաւերու արմատներու վրայ ալ կը հաստատուին և այսպէս կը փճացնեն զանոնք:

Բ Ի Ե Ջ Ի Մ Շ Ա Վ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Մեր Օսմ: Խորհրդարանը՝ բրինձի մշակութեան օրինադիժ մը պատրաստեց և զայն երկրագ. Նախարարութեան յանձնեց, բրինձի մշակութեան զարկ տալու համար: Այսօր քեզի, ջան Գեղօս, գործնական փորրիկ խըրատ մը պիտի տամ: Միշտ նպատակ ունեցիր մաքուր ապրանք հայթայթելու: Աճառականները ձեռքէ ձեռք կը խլեն մաքուր ապրանքները: Երկրագ. գիտութեան ռասպիլրաններէն Մաթիէօ տէ Տօմպասը՝ երկրագործներուն կ'ըսէ թէ՛ միշտ աշխատեցէք աչքերնիդ յառած դէպի հրապարակ (պողար): Մաքուր ապրանք հայթայթելու համար, մաքուր հունտ ցանելու է: Բրինձի մշակութեան մէջ ուշադրութեան առնուելիք առաջին կէտը՝ հունտը մաքրելն է: Ասոր համար հնտացու բրինձը՝ տակաւի մը մէջ դնելու, վրան ջուր լեցնելու և փոյտով մը հունտը աղուօր մը խառնելու է: Ջուրին երեսը ելած պզտիկ կլո-

րիկ հունտերը, որոնց բրինձի կորեակ (բանի-  
քով քրիսակալլի, բրինձ տարբար) սնուելը  
կուտան, խնամով զատելու և փճացնելու է։  
Այս կորեակը որքան որ լաւ զատես, այնքան  
մաքուր և հետեւաբար այնքան յարգի բերք  
կ'ունենաս։



**ԱՅԳԻՆՆԵՐՈՒ ՄԻԼՏԻՈՒ ՀԻՒԱՆԳՈՒԹԻՒՆՆԵՐ**

Անցեալ տարի օգերը անձրեւոտ երթա-  
լուն համար, Թուրքիոյ այգիները հիւճնդցան  
և աւրուեցան։ Այս հիւանդութիւնը միջ-  
օխուն է։ Անգամ մը գալէն ետքը, ալ դար-  
ման չ'ունի։ Կորեւորը՝ պէտք եղած զգուշա-  
կան միջոցները ձեռք առնելով՝ անոր մուտքը  
արգելելու է յայդի։ Ասոր համար ալ ամէն  
տարի հետեւեալ դեղը գործածելու է։ Ինչ-  
պէս որ այգիներուն ամէն տարի ծծումբ  
(քիւքիւրդ) կուտաս, այնպէս ալ ամէն տարի  
կանանչ արջասպ (կէօղ թաշը) տալու ես  
100 լիթրա ջուր առնելով, մէջը երկու քիւք-  
կրամ սիւլֆաթ օր իւրով (կէօղ թաշը) հա-  
լեցնելու է։ Միւս կողմանէ ալ մէկ քիւք-  
կրամ չ'մարած լաւ կիր առնելով՝ հինգ  
լիթրա ջուրին մէջ հալեցնելու է։ Յետոյ այս  
պէս գոյացած կրաջուրը, կամաց կամաց կ'եօզ

քաշչի ջուրին վրայ թափելու և լաւ մը  
խառնելու է։ Յետոյ այս լուծաջուրը՝ Ձարձա-  
րիչ գործիքներու մէջ (Բիւլվէրիգաթէօր)  
դնելով այգիներուն վրայ սրկելու է։ Սրկե-  
լու թուականին գալով՝ անգամ մը Մայիսի  
վերջերը, երկրորդ անգամ՝ Յուլիսի սկիզբ-  
ները և երրորդ անգամ ալ Օգոստոսի սկիզբ-  
ներն է։ Սրկուամը՝ իրիկուան դէմ՝ տեղի ու-  
նենալու է։ Սրկելէ ետքը՝ եթէ անձրև գալու  
ըլլայ, օգուտ չ'ունի, կրկին սրկելու է։ Սա  
ալ ըսեմ թէ՛ կ'եօզ քաշչն՝ փայտէ տակառ-  
ներու մէջ պատրաստէ։ Թիթեղէ ամաններու  
մէջ մի դներ, կը մուշեցնէ զանոնք։ Եթէ  
դրածներս լաւ չհասկցար, կրնաս քաղքիդ  
Երկրագ. պաշտօնեային դիմել և չ'հասկցածդ  
հարցնել։ Երկրագ. պաշտօնեաներ ունի, որոնք  
պարտաւոր են երկրագործին պահանջներուն  
գոհացում տալ։



**ԱՐՈՒ ԱՆԱՍՈՒՆՆԵՐՈՒՆ ՊԷՏՔ ԵՂԱՍ  
Է Գ Ն Ր Ը**

Արու ձիւ մը համար՝ 50—60 էդ պէտք  
է։ Արու եղի մը համար՝ 50 կով, արու ոչխա-  
րի մը համար՝ 80—100 էդ, արու սյծի մը

Համար՝ 100—120 էք, արու խողի մը Համար՝ 40—45 էք, արու էշի մը Համար՝ 80 90 էք, արու նապաստակի մը Համար՝ 40 էք, արու արաղաղի մը Համար՝ 40 հաւ, արու հնդկահաւի մը Համար՝ 20 էք, արու սագի մը Համար՝ 6 էք և արու բաղի մը Համար 6 էք:

**ԼԱՒԱԳՈՅՆ ԱԾԱՆ ՀԱՒԸ**

Հաւերու մէջ սղխտակ լիկօրն տեսակն է որ ամէնէն շատ հաւկիթ կ'ածէ: Տարին 250 հատ կ'ածէ: Այս տեսակին հաւկիթները թուխտի համար՝ տեղւոյդ Երկրագ. պաշտօնեայէն պահանջէ:

**ԱՆԱՍՈՒՆՆԵՐՈՒ ՄԱՔՐՈՂԱԿԱՆԸ**

Երբոր անասուններդ խորթակով չեն ուտեր և պնդութիւն կ'ունենան, այնժամանակ իրենց մաքրողական տալու է: Լաւագոյն մաքրողականը՝ սուլֆար օր սուրճն է: Բոլոր դեղագործներուն քով կը գտնուի և օխան 4—5 զըշ. կ'արժէ: Զիռւն՝ կէս քիլոյէն մինչև մէկ քիլո, եղան՝ 250—300 կրամ, ոչխարին՝ 100—150 կրամ, խողին՝ 80—100 կրամ և շուկին 10—80 կրամ տալու է: Այս դեղը շիշ մը ջուրի մէջ հալեցնելու և անասունին

գլուխը վեր բռնելով, բերնին մէջ թափելու է և ուշագրութիւն ընելու է որ կէսը բերնէն դուրս չլազէ: Խմցնելէն ետքը, անասունը ջրելու և ժամու մը չափ պտտցնելու է:

**ԿԱԹԻՆ ՍԵՐ ԶԱՏՈՂ ՄԵՔԵՆԱՅ**

Կաթէն սերը զատելով՝ կարագ պտարատելու յատկացուած մեքենաներու ամենէն լաւը Ալֆա-Լալով ըսուածն է: Միտքդ պահէ, երբ պէտք ունենաս, տեղւոյդ Երկրագ. պաշտօնեայէն պահանջէ: Անիկա անմիջապէս բերել կուտայ:

**ՅՈՐԵՆԻ ՁՏԻՉ ՄԵՔԵՆԱՆ**

Յորենդ՝ ցանկէ առաջ, զայն զտիչ մեքենայէն (Թրիտօր, դալլուր մաքրիտար) անցնել տուր: Խոշոր հատիկները՝ առատ արդիւնք կուտան: Եթէ բնկեր դիւղացիներդ կրնաս համոզել, դիւղիդ համար հատ մը դնէ այս մեքենայէն: Ամենէն լաւը՝ Մարոյին մեքենան է:

**ՍԵՊՈՒՀ ՍՏԵՓԱՆԵԱՆ**





# Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն



## Յ Ո Ւ Ս Ա Հ Ա Տ Ն Ե Ր Ո Ւ Ն

Աշնան երեկոյ մ'էր 1845ին երբ բարեպաշտ, Ժրտջան ոստայնանկը իր անակը վերադարձաւ Կինը ու զաւակները կը սպասէին անոր գալստեան և սիրալիր ողջոյններուն Լռութեամբ սեղանին վրայ դրաւ հայրը իր շարաթական վարձքը միեւնոյն ատեն ծածուկ հառաչելով՝

Բայց ի'նչ կայ, այր, դոչեց կինը ահաբեկած, տխուր և մոտտանջ կ'երեւիս:

Պատճառ կայ անշուշտ, պատասխանեց այրը, գործարանատէրը այսօր ինձի և գործաւորաց ստուար խումբի մը ծանոյց թէ ալ գործ չունի մեզի համար:

Հնա՞ր է այդ, դոչեց կինը, դեռ 15 օր չկայ երբ քեզ կը գովէր ու միւս գործաւորներուն լաւ օրինակ կը ներկայացնէր և հիմա գործէ՞ կը ձգէ քեզ. ահա այս է եղբր 25 տարուան հաւատարիմ՝ աշխատութեանդ վարձքը Այս է:

Մի մեղանչեր, ընդմիջեց այրը, ես ալ չեմ հասկնար, թաւար է ինձ այս ընթացքը գործարանատէրին: Գործէ ձգուածներուն անուաները երբ կը յայտարարէին ինքզինքիս կ'ըսէի, դուն անշուշտ ցանկին մէջ չես. գործարանատէրը քեզ միշտ միւսներէն նտխապափու կը համարէր: Մէյ մ'ալ յանկարծ իմ անունս կը լսեմ: Ինքզինքս դատծիս պէս տիրոջս կը դիմեմ, կ'ըսեմ թէ ամենայն հաւատարմութեամբ այնքան երկար տարիներ իրեն ծառայած եմ հաւատարմորար ու ինք միշտ գոհ էր իմ աշխատութենէս, հարցուցի թէ ինչո՞ւ զիս կ'արձակէ պաշտօնէս, մինչդեռ ուրիշները կը պահէ որ քիչ ատենէ ի վեր իր ծառայութեանը մէջ են: Տէրս տարօրինակ ակնարկ մը ըրաւ, ու պաղ կերպով ըսաւ. «Քեզի համար գործ չկայ, առ դրամը, այլեւս զիրար չենք տեսներ»: Զայս որ լսեց կինը սկսաւ բարձրաձայն արտասուել չտփահաս տղաքները շրջապատեցին հայրը լալով ու փոքրերը անոնց հետեւեցան առանց դիտնալու պատճառը: Հայրն ալ հաղիւ կըրնար ինքզինք զսպել. ի վերջոյ ըսաւ. Այդպէս մի ողբաք իբր թէ երկինքը Աստուած չըլլար: Դեռ երէկ կարգացինք «Զեր Հայրը ձեզի

պէտք եղածը գիտէ. դեռ դուք իրմէ չիբնդ-  
րածս Մատթ. 9. 8. Ուստի մեր վստահու-  
թիւնը պէտք չէ վերցնենք Աստուծոյ վրայէն.  
ընդհակառակն անոր օգնութիւնը խնդրենք:  
Վստահ եմ որ այս ներդրութենէ ալ բարիք  
պիտի ծնի մեզի համար:

Հետեւեալ օրն Կիրակի ըլլալով թշուառ-  
ընտանիքին մխիթարութիւն և սփոփանք բե-  
րաւ: Երկուշաբթի առտու կանուխ հայրը  
դնաց գործ փնտռելու, սակայն ի զոր և  
արամած առն վերագարձաւ: Բոլոր շաբաթը  
այնպէս անցաւ առանց ամենափոքր յոյսի  
գործ գտնելու, թէ և դուռ չմնաց որ չզարնէ:  
Օր մը ռոտայնանկին կինը նախաճաշին ապուրը  
սեղանին վրայ դրաւ երկու կոոր հաց ի միա-  
սին, և ըստ յուզումով. այս վերջին հացն է  
տանը մէջ. գորոցը փարա մը չկայ, խոհանոցը  
ալիւրի հեաքը չէ մնացած, եթէ նախաճաշէն  
բան մը չաւելնայ կէս օրուան ու իրիկուան  
համար բան մը չունինք:

Երեք մեծ աղաքները շատ յուզուեցան  
զայս լսելով և չէին ուզեր ուտել: Սակայն  
հայրը ըստ. Մի վախնաք, աղաքս, կերէք:  
Տէրօջը ողորմութիւնը դէռ չէ վախճանած,  
ամէն առաւօտ նոր է անոր գթութիւն, մեծ

անոր հաւատարմութիւնս Բոլորն ալ սեղան  
նստան, կերան ու կշտացան: Հայրը օրհնու-  
թեան աղօթքը ըսելէ ետեւ առաւ գլխարկը և  
դուրս ելաւ: Այս առաւօտ գործարանատէր  
մը զիս տեսնել ուզած է ըստ նա. ձեզի լաւ  
լուր մը կը բերեմ անշուշտ:

Կինը Աստուծոյ աղաչեց որ իր ամուսի-  
նին ճամբաները օրհնէ ուսկսաւ սենեակը մտք-  
րել: Յանկարծ լուեց որ բան մը ինկաւ սեն-  
եակին տախտակամածին վրայ: Երբ փնտռեց,  
տեսաւ որ սատկած ագռաւ մը գետին էր ին-  
կած, նոյն պահուն ծանօթ սրիկայ մանչ մը  
պատուհանին առջեւէն կը վազէր գոչելով.  
Ահա լաւ ուտելիք մը:

Այս անհամ կատակը արդէն վշտացեալ  
կնոջ սիրալ այնպէս յուզեց որ աչքերէն ար-  
ցունքի հեղեղներ սկսան հոսել, երբ նոյն պա-  
հուն իր այրը ներս մտաւ: Տես, ըստ կինը,  
փողոցի սրիկաներուն ալ ծաղրի ու կատակի  
առարկայ եղանք, այս նախատինքը սիրտս կը  
վերաւորէ:

Ոստայնանկը մեռած ագռաւը գետնէն  
վերցուց: Անշուշտ, ըստ, այս խեղճ թռչունն  
ալ անօթութենէ մեռած ըլլալու է, բայց  
ոչ. սամմոքսը լեցուն և քարի նման կարծր է,  
բայց ի՞նչ է այս: Շուտ մը գրպանէն հանեց

զմելին ու կարեց ագռաւին վերջը, դեղին շրջ-  
 թայ մը և ապակիի նման փայլուն բան մը  
 երեւան եկաւ, կինը ջուր բերաւ, թռչունը  
 մաքրեցին, և ի մեծ զարմացում սակի շղթա-  
 յին ծայրը ագամանդ մը երեւան եկաւ:  
 Փռաք Աստուծոյ որ այս թռչունը մեր սեն-  
 եակը նետեր են, գոչեց ոստայնանկը. ուր որ  
 այս գոհարը գողցուած է, պէտք է այժմ մեծ  
 վիշտ տիրէ. բայց նաև հոն առատ հաց գըտ-  
 նուելու է, Գուցէ այս գոհարին գտնուելովը  
 մի քանի օր հաց բռնենանք: Թռչունը ու  
 շղթան առնելով սակերիչին վազեց, որ նայի  
 թէ անոր տէրը կրնա՞յ գտնուիլ:

Սակերիչը շղթան ու գոհարը քննելէ ետև  
 գոչեց, այս զարդը ձեր գործարանատէրին  
 աղջկանն է, և իմ շինածս. տեսնշանս. իր 15  
 օր առաջ տէրը եկաւ և ըսաւ թէ այս զարդը  
 սնհասկնայի կերպով կորսուեր է. շուտ տա-  
 րէք անոր ձեր գտածը, մեծ ուրախութիւն  
 պիտի պատճառէք:

Ոստայնակը կը վազէր գործարանատէ-  
 րին. աղջիկը անպատում ուրախութիւն ու-  
 նեցաւ կորսուած գանձը նորէն ձեռք անցընե-  
 լով: Հայրը խկոյն կանչել տուաւ, ոստայ-  
 նանկը մի տա մի պատմեց եղելութիւնը:

Դուն խեղճ ագռաւ, ըսաւ աղջիկը, դուն միշտ  
 «գող, գող» կը պօռայիր և ինքդ գող ես  
 եղեր:

Գործարանատէրը ձեռքը բռնեց ոստայ-  
 նանկին և յուզեալ ձայնով ըսաւ. Ներեցէք  
 ինձ, սիրելի բարեկամ, անիրաւութիւն ըրի  
 ձեզի, կասկածելով որ զարդը դուք իւրա-  
 ցուցած էք, միայն դուք իմ աղջկանս դրան  
 առջեւէն անցեր էք այդ թանկագին զարդը  
 կորսուած օրը: Այս օրուքնէ սկսեալ իմ գոր-  
 ծիս մէջ էք ցկեանս և կրկնապատիկ տարե-  
 թոշակով:

Ոստայնակը չէր կրնար բառ գտնել  
 յայտնելու իր շնորհակալութիւնը. առն վա-  
 ղեց այր ու կին և զաւակունք ծունր դրին  
 փռաք տալու Աստուծոյ որ հրաշքներ կը գոր-  
 ծէ և նետուած թռչունի մը միջոցաւ իրեն  
 գործ կը պարգեւէ և իրեն բարի անունը նորէն  
 կը վերագարծնէ:



## Ա Յ Լ Ե Ի Ա Յ Լ Ք

Հուլիսի 14-ին Պրաքենպերկ 146 տարեկան եղած է: 111 տարեկան եղած ատեն ամուսնացեր է և 130 տարեկան եղած ատեն գիւղացի աղջկան մը սիրահարեր է:

Փոլոնիոյ վլատիսլավ թագաւորը 90 տարեկան եղած ատեն որդի մը ունեցաւ:

Պրանքով կը պատմէ այրի կնոջ մը վրայ որ 76 տարեկան եղած ատեն նորէն ամուսնացաւ և 100 տարեկան եղաւ ու իր գեղեցկութիւնը միշտ կը պահէր:

Վալէնթինուս կոմսուհին 70ը անցնելէն ետև նոյնպէս գրաւիչ և գեղանի էր ինչպէս 30 տարեկան եղած ատեն, ու դրաւեց թագաւորի մը սիրտը:

Ասիսարհիս էն մեծ ճաշարանը Նիւ Եորքի մէջ է, 6000 հիւրեր կրնայ ընդունիլ ու ամէն կերպով գոհացնել:

Սպանիոյ մէջ արեգակը տարին 3000 ժամ կը ծագի: Անգլիոյ մէջ միայն 1400 ժամ:

Ռուսիոյ մէջ 1000էն 11ը կը մեռնին: Եւրոպայի մէջ, ուրեմն, մահն էն առատ հունձքը հոն կ'ընէ:

Ազուար, արծիւք և կարպը 100ական տարի կ'ապրին, սագը 50, սոխակը 18, թուրթուկը 60, սիրամարդը 24, աղաւնին 20:

Չափաւոր հով մը ժամը 8 քիլոմէթր կը քայլէ. զօրաւոր հովը 48-72, փոթորիկը 130-160, աշխարհս իր առանցքին վրայ 1600, երկիրս արեւուն շուրջը ժամը 105,600 քիլոմէթր: Չայնը օդին մէջ մէկ վայրկեանի մէջ 300 մէթրօ, ջուրին մէջ 730 մէթրօ, և հեռագրի պողպատ թելին միջոցով ձայնը երկվարկեանի մը մէջ 5220 մէթրօ, էլեքտրական հոսանքը երկվայրկեանի մը մէջ 36,000 քիլոմէթր, իսկ լոյսը մէկ վայրկեանի մէջ 300,000 քիլոմէթրօ:

Ֆլուրան մարդկային կենաց տեւողը-

Թիւերը ստ'պէս կը դասակարգէ. — Մանկու-  
թիւն 1-10 տարի, պատանեկուժիւն 11-20,  
երիտասարդուժեան առաջին շրջան 21-30,  
երկրորդ շրջան 31-40, չափահասուժեան ա-  
ռաջին շրջան 41-55, երկրորդ շրջան 56-70,  
ծերուժեան առաջին շրջան 71-95, երկրորդ  
շրջան 96էն մինչև մահ:

Կուսղալ Վուզա Շուէտի հզօր թա-  
ղաւորը 62 տարեկան էր երբ իր երկրորդ կինը  
կորսնցուց, անկէ ետեւ 20 տարեկան Գաթա-  
րինէ Սթէնպօրթի հետ երջանիկ ամուսնուժիւն  
մը կնքեց:

Թովաս Փառ Անգղիացին որ 100ը ան-  
ցած մեռաւ (ոմանք 152 տարեկան էր կ'ըսեն)  
80 տարեկան ըլլալէն ետև երկու որդի ունե-  
ցաւ. 105 տարեկան եղած ատեն պատժուե-  
ցաւ ամուսնուժեանէ: դուրս զաւակ մը ունե-  
ցած ըլլալուն համար:

Մուկերուն բողկերակը ա'յնքան արագ  
կը զարնէ որ անհնար է համբել առանց գոր-  
ծիքի. ստով ստուգուեցաւ որ 670 անգամ  
կը զարնէ մէկ վայրկեանի մէջ: Նապաստակը

200, շունը 90, առողջ չափահաս մարդ մը  
70, ձին 40, փիղը 30:

Յրկրիս ընկերներէն 1,000,000 մար-  
դոց 60ը կոյր են:

Ձինու մեծ պարիսպը Գրիստոսէ 204  
տարի առաջ աւարտեցաւ, 2800 մէթր եր-  
կայն է, 6 մէթրօ բարձր, յատակը 7<sup>1</sup>/<sub>2</sub> մէթր  
լայն, գագաթը 4<sup>1</sup>/<sub>2</sub> մէթր հաստ:

Թոմսախսը սովորաբար 25-30րդ տարի-  
քին մէջ կը սկսի:

Պարսից պատերազմին ժամանակ ըլլօր  
Յոյները երկայն մտղ ունէին որ գլխուն քա-  
ղաթը գնդատեղով մը կը հաստատուէր:

Աղի ջուրը հրդեհը աւելի շուտ և ստոյգ  
կը մարէ, քան անուշ ջուրը:

Ասլանսեան ովկիանոսին մէկ ծայրէն  
միւսը ընդծովեայ թելի միջոցաւ հեռագիր մը  
երեք վայրկեանէն կը հասնի:

Ասարմիր ազակին բոյսերը շուտ կը հաս-  
ցընէ, իսկ կապոյտը անոնց հասնելուն արգելք  
կ'ըլլայ:

Վիէննայի մէջ դինկոյէ շինուած դա-  
դաղներուն գործածութիւնը կ'ընդհանրա-  
նայ, սակայն ամէնէն սուղերը պղինձէ շին-  
ուածներն են. ստոնց իւրաքանչիւրը հինգ  
հարիւր անգլիական ոսկիի կը շինուի: Վեր-  
ջերս Ռուս արշիգութի մը համար կէսը անա-  
գապղինձէ ու կէսը պղինձէ շինուած դագաղ  
մը 1000 ոսկի արժեք է:

Աւստրիաի ամէնէն մեծ կառախումբը  
Գերմանիոյ կոյսեր յատուկ կառախումբն է,  
որ 200,000 անգլիական ոսկի արժած է. երեք  
տարիէն շինուած է: Այդ կառախումբը ցաս-  
ուերկու ընդարձակ սրահներու բաժնուած է:

Առաջին թղթատարատունը հաստատ-  
ուած է 1464ին:

Փաղիկներուն մէջ քրիզանթէմն է որ  
կտրուելէ ետքը ամէնէն շատ կը դիմանայ:

Մէկ լիպրա կշուող եփած միսի սննդա-  
կան ոյժը հաւասար է 26 լիպրա հացի սննդա-  
կան ուժին:

Օճառի փրփուրներուն պղպջակները  
այնքան բարակ են որ անոնց 50,000,000 էթէ  
միացուն, հաղիւ մէկ մասնաշափ թանձրու-  
թիւն մը կը կազմեն:

Անգլիոյ պանքան 14 միլիոն անգլիա-  
կան ոսկիի պանքոտմն շրջաբերութեան հա-  
նելու արտօնուած է:

Ֆրանսայ ծխախոտի վաճառումէն  
տարեկան 14 միլիոն ոսկի հասոյթ կը ստանայ:  
Այդ հասոյթը 1814ին 560,000 ոսկի էր:

Ատաուները ջուրէն չեն ախորժիր,  
պատճառը այն է թէ անոնց մորթը իւղոտ չէ:  
Ջուրը շուտով կը թրջէ կատուներուն մոր-  
թերը, սակայն դժուարաւ կը չորնայ:

Հագար գրկաչափ խորունկ գտնուող  
ծովին ջուրը գէրօէն վեր 4-5 ատաիճան տա-  
քութիւն ունի և միշտ այդ վիճակին կը մնայ,  
արտաքին պատճառներէ ընտւ չաղդուիր:

**Արլանքիկի** մէջ 154 տարեկան մարդ մը մեռած է ձոն էլըզով անուշով. 94 զաւակ ու թու թողած է: Հայրը 106 տարեկան մեռեր է, մեծ հայրը՝ 105 և մեծ մայրն ալ 102:

**Յամաքի** վրայ հաստատուած հեռա-  
ձայնի թեւերը ձայնը մէկ երկվայրկեանի մէջ 16,000 մղոն տեղ կը փոխադրեն և ծովայիններն ալ 6,020:

**Շոնի** խոշոր ծառ մը կրնայ 7,000 հոգի պատասպարել անձրեւէն և արեւէն:

**Հնդկաստանի** մէջ 25,000,000 սյրի կիներ կան:

**Չինու** բմբիչները բազի միտով կը սնանին, ըսելով որ ամէնէն սննդաբարն է:

**Ադուէսը** կրնայ մարդու հոտը քառորդ մղոն հեռաւորութենէ առնել, եթէ հովին ուղղութիւնը նպաստաւոր ըլլայ:

**Նորագոյն** քննութիւններէ կը հետեւի թէ մարդկային ցեղերու մէջ ուղեղի ծան-

րութիւնը կը զանազանի: Անգլիական լրագիր մը կ'ըսէ թէ Սկովտիացին ունի 50 ունկի ուղեղ, Գերմանացին 49,6, Անգլիացին՝ 49,5, Ֆրանսացին՝ 47,9, Զուլուցին՝ 47,5, Չինացին՝ 47,2, Իտալացին՝ 46,9, Հնդկը՝ 45,4, Չինկեանէն՝ 44,8, Եսքիմացին՝ 43,9 ունկի: Տարակոյս չկայ թէ այս թիւերը կը ներկայեն տարբեր ազգերու անհատից ուղեղներու ծանրութեան միջին թիւը: Հայոց կամ Թուրքիոյ սյլ ազգաց ուղեղներու ծանրութիւնը յիշուած չէ: Բոլոր ցեղերուն մէջ, արանց ուղեղը 10 առ հարիւր աւելի ծանր է քան կանանցը: Երկու սեռերու մէջ եւս ուղեղը կ'աճի մինչ քառասուն տարի, կայուն կը մնայ քառասունի և յիսունի միջև, և յիսունէն վերջ ամէն տարի ունկի մը կը կորսնցնէ իր ծանրութենէն: Կապիկներու ամէնէն զարգացեալ տեսակին ուղեղի ծանրութիւնը 16 ունկի է: Գոնուեցան ապուշներ, որոնց ուղեղը կը կըշուէր 22<sup>1</sup>/<sub>2</sub>, 49<sup>1</sup>/<sub>4</sub>, 45 և մինչև իսկ 13 ունկի:



## Զ ՈՒ Ա Ր Ճ Ա Լ Ի Ք

Ուաճիցկոն քիչ մը անհամբերութեամբ նայեցաւ ժամացոյցին և մէկ երկուրոպէ սպասելէ ետքը զօրքերուն հրամայեց ճամբայ ելնել: Քիչ յետոյ հրամանատարը, ձին սրբնթաց վազցնելով, եկաւ և սկսաւ ներում խնդրել ուշանալուն համար: Ուաշինկթոն ժպտելով պատասխանեց. «Մեր սովորութիւնն է ոչ թէ հրամանատարին այլ ժամանակին գալուն սպասել:»

Հարաւային Թրանսայի գաւառական պզտիկ թերթ մը՝ փոթորիկին պատճառած վնասներուն վրայ գրելով կ'աւելցնէ. «Կայծակը սպաննեց բազմաթիւ կենդանիներ և էշ մը:»

### ՈՐՈՐՊՈՒՅԵՆԷՎ ԿԵՐԱԳԱՐՃԻՆ.

— Բան մը սպաննեցի՞ք...

— Ա, յո՛... ժամանակը սպաննեցի:

Տղայ մը գերեզմանոցը կ'երթայ իր հօրը հետ. տապանաքարերուն վրայի գովասանքները կարդալէ ետև, Բայց, հայրիկ, կը գոչէ, չար մարդիկ ո՞ւր են թաղուած:

Մարդուն մէկը իր մէկ հիւրը կը պտտցնէ պարտեզին մէջ.

— Տեսէ՞ք, կ'ըսէ, ինչ սքանչելի արեւածաղիկներ ունիմ:

Հիւրը՝ թեւին բոլոր ուժովը ճակատին քրտինքը սրբելով՝ կը պատասխանէ.

— Ա, յո՛, բայց գէշ չպիտի բլլար եթէ քիչ մ'ալ շուքածաղիկ անկէլք:

Գիւղացի բժիշկ մը մէջքի ցաւէ տառապող շինական պառաւ մը դարմանելու կանչուելով, խորանի մը համար գեղազիր մը գրեց սնոր և ըսաւ. «Ասիկա ցաւած տեղին վրայ գի՛ր:» Չորս օրէն, դարձեալ այցելեց հիւանդին, և ուրախացաւ տեսնելով որ խեղճ պառաւին ցաւերն անցած էին: «Տեսէ՞ք, ո՛րչափ օգտակար եղաւ խորանը,» ըսաւ: «Խորանը», հարցուց պառաւը զարմանօք, և դուրս հանեց իւզոտած թուղթի կտոր մը, «ահա ձեր գրած այս թուղթն էր որ դրի



ցաւած տեղին վրայ) Պառաւը սխալ հասկըցած էր բժշկին պատուէրը, բայց իր մէջքին ցաւերն ալ անցած էին: Այս անվիական անէքոտը երկու բան կը սարվեցնէ մեզի, նախ՝ ամուր հաւատքին ներգործութիւնը, երկրորդ՝ բժժանքի և յուսուածքի գաղտնիքին լուծումը: Այդ թուղթն ինչո՛ւ համար բժշկեց պառաւին մէջքի ցաւը, — վասն զի կինը ամուր հաւատք ունէր: Իրաւ է թէ կտրուած ձեռք մը կամ սրունք մը հաւատքով իրենց տեղերը չեն փակչիր, բայց գիտութիւնը հասաւտած է որ հիւանդութեանց 100ին 75ը կ'աղէկնան, կը բժշկուին կամ գէթ կ'ամոքին հաւատքով: Եւ եթէ հիւանդը, թէև ինքզինքը խաբելով, կը հաւատայ թէ առողջ է, այդ ալ բան մ'է վերջապէս, բսեւ է թէ ինքն իրեն համար առողջ է:

**ՋՈՒԱՐՃԱԼԻ ՄԱՆՐԱԴԷՊ ՄԸ**

Ֆրանսացի քաղաքապետ մը կատարեց իրեն ներկայացած զոյգի մը քաղաքային ամուսնութիւնը, կարգաց օրէնքին հատուածները, և հանդիսաւոր շեշտով մը ըսաւ՝ «Միացած էք»: Ամուլը, քաղաքապետին այս հանդիսաւոր խօսքերէն ետք մեկնեցաւ, ծնո-

ղացը և վիաներուն հետ: Բայց հաղիւ թէ անոնք դուրս ելիւր էին երբ քարտուղարներէն մէկը մտեցաւ քաղաքապետին, և ըսաւ անոր. «Հիմա ձեր կատարած ամուսնութիւնը չեղեալ է: Ամուսնացեալներուն ըսիք. Միացած էք, բայց մոռցաք աւելցնելու օրինական բացատրութիւնը. Յանուն Օրինացի»:

«Վա՛յ», աղաղակեց քաղաքապետը, բայց յանկարծ ներշնչում մը ունեցաւ և շուտով պատուհանին քով վաղելով, պոռաց ամուսնական թափորին ետեւէն. «Հէ՛յ, ինձի նայեցէք, գիտցէք որ Յանուն Օրինաց միացած էք»:

**ՔԷՆԴՐՈՐԸՐԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ  
ԺԱՄԱՆԱԿԱՆ ԿԵՐԱՅ ԾԵԾԸ**

Հալըսդանի գլխաւոր ժողովրդապետ կամ առաջնորդ Վէր. Պէրի կանոնիկոսն անցեալները իր խօսած ճառին մէջ զուարճայի ափսոսանքով ետմը մը յիշեց թէ ինք ժամանակաւ ծեծած էր Անգլիական Եկեղեցիին Գահերէց Արքեպիսկոպոսը: Պատմեց թէ նոյն դպրոցին մէջ կ'ոսնէր Մր. Բէնսոլ Տեվիտարնի հետ մէկտեղ, Իր հայրը երեւց երկուքին վարժապետն էր: Ապագայ

Արքեպիսկոպոսը խոստմնայից աղայ մը չէր  
 և իր արտակարգ աներեսութեամբ միայն  
 համբաւաւոր էր գպրոցին մէջ: Ինք վերջին  
 ծայր համբերող էր, բայց անգամ մը Տէ-  
 վիտաբն տ'յն աստիճան զայրացուց զինք որ  
 ա՛լ չհամբերելով աղէկ մը ծեծեց զայն: Ա-  
 սոր վրայ Տէվիտաբն գտնագատեցաւ, և զինք  
 պատժել տուաւ, և ատով ալ չգոհանալով,  
 դնաց իր ծնողաց գտնագատեցաւ, որով իր  
 հայրն և Պէրի վարժապետն իրարու հետ  
 գժտեցան: Հետեւապէս, իրենց փոխադարձ  
 յիշատակներն հաճելի չէին այնքան: Բայց  
 Կանանիկոս Պէրի համոզուած էր որ իր տուած  
 ծեծը շատ մեծ օգուտ ունեցաւ սպագայ  
 Արքեպիսկոպոսին համար. որովհետեւ, այն  
 օրուրնէ սկսեալ, բնութիւնը փոխուեցաւ,  
 իր վարմունքին մէջ զգուշաւոր և խոհեմ ե-  
 դաւ, և իր մեծերուն յարգանք տածել սոր-  
 վեցաւ, ինչ որ ոչ սակաւ նպատեց իր յա-  
 աւաջագիմութեան և բարձրացման Արքեպիս-  
 կոպոսական աստիճանի:

**Հարսնախօսութիւնը** Թիպէթի մէջ  
 շատ պարզ և շատ համառօտ է: Եթէ երի-  
 տասարդի մը աւաջարկը ընդունուի աղջկան

հօրմէն, երկու ընտանիքներ կը միանան, և  
 մէկ քանի նախնական ձեւակերպութիւններէ  
 ետքը, մանչն ու աղջիկը փոխադարձաբար  
 քառակուսի ձեւով մէկ կտոր կարագ կը  
 փակցնեն իրարու ճակտին և կ'ըլլան այր ու  
 կին: Ընտանիքի մը աղջիկներուն երեցագոյնին  
 հետ ամուսնացողը, անոր միւս քոյրերն ալ  
 կը սակարկէ. երկրորդ աղջկան հետ ամուս-  
 նացողը կրտսեր քոյրերուն ալ ամուսին կ'ըլ-  
 Լայ՞

**Նիւ-Եօրք** վերջերս անթե մարդ մը  
 Բալիֆօռնիս Քիլալ մտաւ և աջ ոտքով ա-  
 տրճանակ մը բռնած, 100 տալար պահանջեց  
 հոն խաղացողներէն, և ա՛յնքան սպառնացաւ  
 որ վերջապէս այդ պահանջած գումարն  
 յանձնուեցաւ իրեն: Յաջորդ օրը ոստիկանք  
 այս մարդուն բնակարանը մտան, շուտով  
 ձերբակալեցին զինքը. աւաղակն ինքզինք կը  
 պաշտպանէր աջ ոտքով տարճանակ մը և  
 ձախ ոտքով ալ ածելի մը բռնած և նստած  
 էր պատին կռթմնած բաղկաթուսի մը մէջ:




# ՄՐՑԱՆԱԿԱՒՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ

1912



1. Այս 6 եռանկյուններէն 7 հաս շինել առանց լուցկի աւելցնելու:
2. Այս 6 եռանկյուններէն վերցուր 3 լուցկի և նորէն 6 եռանկրւն պիտի մնան:
3. Այս 6 եռանկրւններէն 8 եռանկրւն կազմել միայն 4 լուցկի աւելցնելով:
4. Ինն լուցկի գործածելով հինգ քառակուսի կազմել:



5. Այս ձեւէն չորս լուցկի հեռացուր և պիտի մնան հինգ հաւասար քառակուսիներ:

6. Տասնեւմէկ լուցկի գործածելով 40 քառակուսի շինել:



7. Այս ձեւէն հինգ հաւասար մեծութեամբ եռանկրւն կազմել:



8. Այս 12 լուցկիներէն պատուանշան մը կազմել:



9. Այս 3 քառակուսիներուն 12 լուցկիներէն 4ը ուրիշ դիրքով դրուելով 4 քառակուսի կազմելու է:

10. 1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12  
| | | | | | | | | | | |

Այս 12 լուցկիներն 4 խումբի բաժնել, իւրաքանչիւր խումբ 3ական լուցկի պարուկելով: Բայց կեցի՛ր, այնքան դիւրին չկարծես, լուցկիներն պիտի մնան վերի դիրքով ու

ամէն անգամ առնուած լուցկին 3 լուցկիի վրայէ անցնելով պիտի առնուի, թէ ձախէ աջ և աջէ ձախ շարժելով:

Սոյն 10 խնդիրները լուծողներուն մէջէն վիճակը կ'որոշէ հինգ հօգի որք կ'ստանան մեր հրատարակութիւններէն 10 օսկի-նոց գրեանք:

Ա.	Մրցանակ	Հինդ	սակինոց գրեանք
Բ.	»	Երկուք ու կէս	»
Գ.	»	Մէկ ու կէս	»
Դ.	»	Երեք քառորդ	»
Ե.	»	Մէկ քառորդ	»

Պայմանագրով մինչև Մայիս 1, ըստ Եւրոպացւոց:

Օրացոյցին մէջի «Մրցման տամբ» և 2 զրուշնոց նամակի փուլը — ոչ ուրիշ փուլ — եթէ նամակին չընկերանայ, նկատողութեան չառնուիր խրկուած լուծումը:


Օրացոյցին 1911ի խնդիրներուն պատասխանները լուծողներուն մէջէն քուէն կամ վիճակը հետեւեալ անձանց յատկացուց Մրցանակները. —

Ա.	Մրցնկ.	Արշակ Ն. Գապպէնճեան, Ուրֆա
Բ.	»	Կրպ. Պ. Չամբէրթէճեան, Ազիզիյէ
Գ.	»	Աստ. Յարութիւնեան, Պոսթօն
Դ.	»	Արշակ Հիւրմիւղեան, Կեսարիա
Ե.	»	Սէլպի Աղասիեան, Սապանճա

# Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն




**Պատ. Արտաէս Պոյսնեան, Ծնեալ 1880ին ի Հաճըն, ուր «Ադադէմիս» կոչուած վարժարանի ընթացքը աւարտելէ ետև, Թարսուսի Գօլէճը մտաւ: 1901ին ընթացաւարտ ըլլալով՝ Հաճընի մէջ 2 տարի ուսուցչութիւն ըրաւ: Տարի մը Թարսուսի և տարի մ'ալ Գօզուլուգի մէջ իբր ուսուցիչ-քարոզիչ պաշտօնավարելէ ետև Մարաշի Աստուածաբանական վարժարանը մտաւ և ընթացաւարտ ըլլալէ ետև Հաճընի «Հօմ» վարժարանի և Մարաշի Աղջկանց Գօլէճի ընթացաւարտ Օր. Թուրֆանտայի հետ ամուսնանալով Չար հրաւիրուեցաւ եկեղեցիին քարոզչութեան պաշտօնով: Կիլիկիոյ Միութեան տարեկան ժողովին ներկայ գտնուելու համար Ատանա գացած ատեն Սաղ Կէչիտի մէջ 72 ընկեր և ընկերուհիներով նահատակուելով 29 տարեկան հասակին մէջ Հայ Մարտիրոսաց ստուար խումբին միացաւ: Յիշատակն արդարոց օրհնեալ եղիցի:**



ՊԱՏ. ԱՐՏԱՇԷՍ ՊՕՅԱՃԵԱՆ  
Նանասակ Ասանայի

Վեր. Դայիոս Գեմալեան, Ծնու  
1853 Սեպտ. 11ին ի Նիկոմիդիայ Մեռու 1899  
Օգոստ. 22ին ի Պոսթըն, Ամերիկայ:

Իր ծնողքը Նիկոմիդիոյ առաջին Բողոքականներէն էին և իր ծննդեհէն ի վեր նուերած էին զինք Տէրօջը գործին: Տասներկու տարեկան հասակին մէջ իր մէջ ալ արթընցաւ փոփաք քարոզչութիւնն ընտրել իրրև իր կենաց գործը, և ամէն ջանք և զոհողութիւն ի գործ դնելով կանուխ հասակի մէջ մտաւ Մարդուանի Ճեմարանը Ուսումնական և Աստուածաբանական ընթացքը կատարելու: Պաշտօնավարած է 15 տարի Թիւրքիոյ մէջ մինչև 1891, որ ատեն ընտանեօք գաղթեց յԱմերիկայ: Հոն Պողոսի նման իր արհեստը գործելով կը քարոզէր Հայ գաղթականութեան մէջ երբոր պատեհութիւն ներկայանար: Կանոնաւոր կերպով քարոզեց Պոսթընի մէջ տարի մը առանց վարձատրութեան, և ի վերջոյ Հովիւ ձեռնագրուելով Ուսարրի Հայ Աւետարանական եկեղեցւոյ, պաշտօնավարեց անդ 2 տարի: 16 տարեկան կանուխ հասակին մէջ իր վրոյ եկաւ որտի հիւանդութեան տառապալից Խաբը որ վերջ տուաւ իր արկրաւոր կենաց:



ՎԵՐ. ԳԱՅԻՈՍ ԲԷՄԱԼԵԱՆ

Իր կենաց վերջին տարիներուն մէջ մխիթարութիւն ունեցաւ լսելու բազում անձերէ, իր գործած այլևայլ դաշտերուն մէջ, թէ ի թուրքիայ և թէ յԱմերիկայ, որ իր գործունէութեանց միջոցաւ դարձի գալու առաջնորդուած էին և կը գրէին իրենց երախտազիտական զգացումները արտայայտելու:

Տիպար հայր մըն էր ընտանեկան յարկին մէջ, օգնող և բարեկամ խեղճերու և կարօտեալներու, ուղղափառ քրիստոնիսյ մը, որ մինչև վերջը հաստատ պահեց իր մանկութեան ընդունած և կենացը մէջ քարոզած հաւատքը որ իր մահուան ատենն ալ, իրեն նեցուկ և մխիթարութիւն ըլլալով, ձորէն անդին անշուշտ փոխուեցաւ յաւիտենական և երջանիկ սեւտըրեան:

ՎԵՐ. Հըրպրըր Մ. Ա. ԼԷՆ, Ծնեալ ի Նարբերդ, 8 Մարտ 1865, 1880ին Ամերիկա կ'անցնի և 8 տարուան Ուսանողական շրջան մը բարեխաղ յետոյ ընթացաւ արա կ'ելլէ Պոսթըրնի Ուիլերմն Գօլէճէն: Ծննդավայրը վերադառնալով 2 տարի յետոյ վերադին Ամերիկա կ'ուղղուորի և 3 տարի ետքը իբր Աստուածաբանութեան շրջանաւարտ և միսիօնոր



Վ.ԵՐ. ՀԵՐՊԵՐԹ Մ. ԱԼԷՆ

նախ Խարբերդ և ապա Վան կը պաշտօնա-  
վարէ: Գրեթէ բոլոր Փոքր Ասիա շրջադայելէ  
ետև նորէն Ամերիկա կը գտանայ, «Վոչնակ»  
շարաթաթերթը կը սկսի հրատարակել որ 3  
տարի կը շարունակէ, և յետոյ Պօլիս խրկուե-  
լով Պարտիզակի Բարձր. Վարժարանին անօ-  
րէնութիւնը կ'ստանձնէ մինչև 1907, անկէ  
մինչև 1914 օԱւետարեր» շարաթաթերթին  
անօրէնութիւնը և խմբագրութիւնը կ'ստանձ-  
նէ և կը վախճանի 1914 Յունուար 12/25ին:

**Վ.ԵՐ. Գաւիթ Փախոյեան,** Ծնած է  
ի Վան. 15 տարեկան եղած ատեն Ամերիկ-  
եան դպրոցն յաճախած է 12 տարի, 7 տարի  
նոյն դպրոցին ուսուցիչն ըլլալով: 1895ին Ա-  
մերիկա կ'անցնի գրպանը 25 սէնթ ունենա-  
լով և Լոս Անճեյէսի «Հարաւային Բայիֆօր-  
նիոյ Համալսարանը» 7 տարի մնալէ ետև  
«Պսակաւար Փիլիսոփայութեան և Տէր Ար-  
ուեստից» կրկին արհիւմներ ստանալով կ'ելլէ:  
1904ին Թուրքիա եկաւ Ռուսաստանի և Պարս-  
կաստանի ճամբով. Պաթուսի մէջ իր «Մեծ  
յեղափոխական» կը բանտարկուի և 50-60  
ոսկի արժողութեամբ դբբերն վրայ տալէ  
ետև՝ հրաշքով կ'ազատի և Ռւսիա քաղաքը



ՎԵՐ. ԴԱԻԹ Յ. ՓԱԵՉՈՅԱՆ

երթալով մինչև 1905 քարոզիչ կ'ըլլայ Հայոց Հոն կ'ընդունի հրաւեր Վանէ, Ռուս և Անգլ. հիւպատոսներ երաշխաւորեցին որ սիւզդեր շահած չէ. այսպէս 1905-1910 Վանոյ մէջ քարոզչութեան հետեւեցաւ Նոյն տարին Խարբերդի Մէլիբէ թաղին Աւետ. եկեղեցին հրաւիրեց զինքը. 2 տարուան համար հոն հաստատուած է:

**Ա.Թ. Տ. Արմենակ Գինյ. Տոնարոսեան,** Ծնած է 1860ին Ակնայ Մաշկեր գիւղին մէջ, մկրտութեան տնունը Յովհաննէս. նախնական ուսումը իր ծննդավայրին մէջ ստացած է. շրջանաւարտ ըլլալէն յետոյ մտտակայ քաղաքներու և գիւղերու մէջ ուսուցչութեամբ պաշտօնավարած է: Իբր քսան տարեկան հասակին մէջ նոր ամուսնանալով իր երկրէն գաղթած և Հալէպ (Բերիա) վաճառականի մը քով գրադրութիւն ըրած է, ուրկէ յԱնտիոք հրաւիրուելով ուսուցչութեան պաշտօնին գլուխը ամենայն սիրով անցնելով Ժողովրդեան խիստ սիրելի դասնալուսն համար, հոն — Անտիոք — 1893ին Գահանայ ձեռնադրուելով Հայ սուրբ եկեղեցւոյն անձնուէր հովիւր եղած է, վարելով





ԱՐԺ. Տ. ԱՐՄԵՆԱԿ ՔԷՅ. ՏՈՆԱԹՈՍԵԱՆ  
Նահասակուած 1909, Ապրիլ 7 (Հ. Տ.) Աւետեաց տօնի

նախկին տարիները ուսուցչութեան պաշտօնը  
և վերջին տարիները Առաջնորդական տեղա-  
պահութիւնը միանգամայն:

Երջանկայիշատակ Տ. Հայրը Անտիոքի  
Զարդի տառն — 1909 Ապրիլ 7 (Հ. Տ.) Ա-  
ւետեաց տօնին օրը — իր սիրելի եկեղեցւոյն  
մէջ զոհուած է, նոյն պահուն իր մանչ զու-  
ւակին ալ տնչնչացած կուրծքին վրայ զոհ-  
ուելը ընդունելով: Ունէր շատ մը երկեր  
— լատի եմ հանդուցեալէն ոչ թէ ականա-  
տես եղած. (Անտիոքի, Նորաշէն եկեղեցւոյն  
գեղեցիկ արձանագրութիւնները իր ձեռքով  
փորագրուած են.) — որոնք հին ութիմի ա-  
տեն պահուած կը մնար, դեռ լոյս չ'տեսած  
թալանուելով ոչնչացած են ըտրրովին: Ան-  
տարակոյս նա տնմահ հոգիներու կարգը դատ-  
ուած է:

«Նահատակաց յիշատակը օրհնեալ ըլլայ  
յաւիտեան.

Եւ արժանի անոնց հոգին երկնից սուրբ  
արքայութեանս  
Վ. Վ.

Սարգիս Մ. Գաւապեան, 1848ին  
ծնած է Խարբերդի մէջ: Մահուութիւնն ու



ՍԱՐԳԻՍ Մ. ԳԱՍՅՊԵԱՆ


պատանեկութիւնը անցուցած է Ակնայ և շրջակայից մէջ, նախ՝ իբր ուսանող տեղւոյն Նարեկեան վարժարանին՝ և յետոյ՝ ուսուցիչ, որ տառն չէ դադրած ուսանիլ մասնաւորաց քով, ինչպէս Խարբերդի մէջ Թուրք հօճայէ մը Թուրքերէն, Մարտիրոս պատուելի Ուզունեանէ Հայերէն, Յունարէն և Իտալերէն: Մայրը դերձակի մը քով կը դնէ զայն, սակայն տեսնելով անոր ուսման անյադ տենչը դարձեալ կը թողու, որ ան ուսանի հետզհետէ Տէր Ղազարոսեան Մօլլա Յակոբի և Կառու վարական պաշտօնեայ Նալպանտ Զատե Մուսթաֆայէֆ ի քով՝ մինչև 16 տարեկանը: Հակառակ ամենահարուստ գերդաստանի մը պատկանելուն՝ 17 տարեկանէն ինքզինքը կը նուիրէ ուսուցչական ասպարէզին, զոր կը վարէ 43 երկար տարիներ խիստ օգտակարապէս և խղճմտօրէն: Ու կը պաշտօնավարէ Ակնայ, Մուշեղկայի, Պուղայ, Պանարմոյի, Պալլքեսիրի, Ռօտտութօյի, Պրուսայի, Էրզրու-մի և վերջապէս Պարտիզակի Բ. վարժարանի մէջ, ուր 17 տարի կը պաշտօնավարէ մինչև իր մահը, 1907:

Իրըջհեղինակ իր գրքերը ունի՝ որոնցմէ կ'ոպրին «Տաղաչափութիւնն ու Դպրոցավա-

բուժիչներն)։ Ունի՝ թանկագին անտիպ երկեր,  
որոնք շուտով լքյա պիտի տեսնեն «Հին և  
նոր Բիււրակնի» իր բարոյական գրութիւննե-  
րով և բանաստեղծութիւններով աշխատակ-  
ցած է։ Իր տաղերէն «Սէր»ը անմահ է։

**Պատ. Գանիէլ Իսխանեան,** Ծնեալ  
ի Կեսարիա 1823ին. հարուստ ծնողաց զաւակ.  
պատանեկութեան մէջ որը մնալով դերձա-  
կութեան կը հետեւի։

Արեւելեան Որբանոցի Տնօրէնին հան-  
դուցեալ հայրը, Պատ. Պաղտատար Հիւսեան,  
Աւետարանչի պաշտօնով Կեսարիա կը գը-  
նըուէր. պատանի Գանիէլ նախ քահանայի  
մը գիմելով Ս. Գիւրք մը խնդրէ, մէկ ոսկի  
խոստանալով. փոփաքին չհասնելով կը գի-  
մէ Աւետարանչին, և հաս մը գնելով կսկսի  
լափելով կարգալ։ Օր մը նորէն կերթոյ  
Պատ. Հիւսեանի և կը հարցնէ՝ թէ գրքին  
խօսքերն ճշմարի՞տ են։ Այո, տղաս, կը պա-  
տասխանէ նա, կատարեալ ճշմարտութիւն  
են անոնք, միայն թէ պէտք է շատ զգոյշ  
ըլլաս, քանզի այդ գիրք կարգացողները խը-  
տիւ կը հալածուին։ Գանիէլ չանաւով այս  
հայրական խրատին, կսկսի տարածել լքյաը



ՊԱՏ. ԳԱՆԻԷԼ ԻՇԽԱՆԵԱՆ

զոր ինք ստացած է Ս. Գրոց ընթերցումէն, կղերական իշխանութիւն կը կանչէ Գանիէլը ու կը բանտարկէ զնա. հոն, բանտին մէջ ալ Գանիէլ կը քարոզէ Աստուծոյ թօքքը: Թուրք բանտապետը կ'ըսէ. «Գանիէլ, օղլում, պու թարիզ էյի տիր. պուսուն գոյրուզընը պրագմա»: Բանտապետը կ'արտօնէ որ ազատ շրջի Գանիէլ, և կը խրատէ զինքը բանտարկել տուողին ձեւքը համբուրել որ արձակուի բանտէն, եթէ ոչ 150 «տէյնէք» պիտի տրուի իրեն յաջորդ օր և պիտի մեռնի: 36 օրուան բանտարկութենէ ետև կ'արձակուի Գանիէլ, քաղաքէն հեռանալու պայմանաւ. վեց ամիսէն օր մը գաղտնի կը մտնէ քաղաքը, հոն կը գտնէ Պատ Սիմոն Իսախանը և Պատ: Տէր Սահակեանը, անոնց կ'ընկերանայ և Հայաստան կը պտըտի: 1854ին Մարզուանի, 1855ին Եւգոկիտայի Ամերիկ. դպրոցներն յաճախելէ ետև 1857ին Եօղկաթի քարոզիչ կ'ըլլայ: 1860ին Տօգ. Համլինի Պէպէքի ճեմարանը կը մտնէ. 1860ին կ'ամուսնանայ և 40 տարի զանազան տեղեր պաշտօնավարելէ ետև 1901ին Ամերիկա կը մեկնի, իր զաւակաց քով. 40 տարի անոնց մօտ ապրելէ ետև 1910 Մայիս 4ին հոն ի Տէր կը ննջէ:

**Տէր Արիսակէս Եպիսկ. Վանգե-  
եան,** Ծնեալ ի Պրուսա, 1847 Օգ. 7, և մկրտեալ Յարութիւն անունով: Աշակերտած է Պրուսայի Ս. Գէորգեան Ազգ. Վարժարանը և յամառ և ուշիմ ուսանող մը ըլլալով 18 տարեկան հասակին մէջ նոյն վարժարանի մէջ 2 տարի օգնական ուսուցիչ է եղած, Գէորգ Կաթողիկոսի Պրուսայի Առաջնորդ եղած ատենը: Բարձուղիմէսս վարդապետ Առաջնորդ ընտրուելով 1866ին Յարութիւնը իր փոքրուորը կ'ընէ, և անոր հետ 1868ին Էջմիածին կ'երթայ, ուր Եպիսկոպոս ձեռնադրուելով վերադարձին Յարութիւնը նախ Աւագ սարկաւագ և 1869ին վարդապետ կը ձեռնադրէ: Արիստակէս անունով, միեւնոյն ատեն Առաջնորդական փոխանորդի պաշտօնն ալ կ'ընդունի, զոր կը վարէ մինչև 1891 կատարեալ յաջողակութեամբ: Քաջ Հայագէտ ու Թրքագէտ քիչ մ'ալ Ֆրանսերէնի տեղեակ և ի բնէ վարժ բեմքասաց մ'ըլլով, թէ ի Պրուսա և թէ ի Թեմօրէս քարոզները ուշի ուշով և առանց ձանձրոյթի կ'ունկընդրէին: Բարձուղիմէսս Սրբազանի հրատարակելով և Պոլիս հաստատուելովը Արիստակէս վարդապետ անոր ընկերացաւ և մինչև



Տ ԱՐԻՍԱԱԿԷՍ ԵՊԻՍԿՎՈՆՔԵԱՆ

1899 ԵՔՆԻ ԳՊՐՈՒԻ ՈՒ ԿԷՏԻԿ ՓՈՂԱՅԻ քա-  
րոզիչ եղաւ: Ապա Ամասիա-Մարզուանի Ա-  
ռաջնորդական Տեղապահ ընտրուելով (1900)  
1902ին Մայիս 12ին Եպիսկոպոս ձեռնադ-  
րուեցաւ լուսահայի Խրիմեան Հայրիկէն:  
Նոյն ատենները Արիստակէս Արքայանի ըն-  
թացք Համրիտի հաճելի չըթուելով Երջարզի  
հրամանաւ Պոլիս փոխադրուելով մինչև 1906  
Կէտիկ Փոչայի քարոզչութեան պաշտօնը  
վարեց. մեծ դժուարութեամբ յաջողեցաւ  
շահիլ Կոստալարութեան վստահութիւնը  
և Ռոտտոթոյի Առաջ. Տեղապահ ըլլաւ  
1907ին. 1908ին հրաժարելով Պոլիս եկաւ ուր  
նաև վախճանեցաւ 1909ին և մեծահանդէս  
յուզարկաւորութեամբ Շիրշի Աղգ. գերեզ-  
մանատունը թողուեցաւ:

Խաչիկ Վարդանեան, Մ. Ազիզի կու-  
սակալութեան Կարմիր գիւղէն, ծնած է 1877  
Հոկ. 28ին: Աղքատ որմնագիր հօր մը զաւակ:  
Իր հայրը շատ վառվառն ու նախանձոտ  
Վրիստոնեայ մ'էր բառին լեցուն առումովը:  
Ինքը իրը Ասրիկաւագ նոյն գիւղի Աւետ.  
եկեղեցւոյն բաւական մը երկար տարիներ մեծ  
ու օգտաշատ ծառայութիւններ մատուցած  
է: Ծնողքը 11 հաստ հողահատոր զաւակներ  
սեւ հողին յանձնելէ վերջ, ց'ուխտեն ղինքն



ՊԱՏ ԽԱՉԻԿ ՎԱՐԳԱՆԱՆ

ալ կենդանւոյն իրրև Սամուէլ մը Տերօջը ծառայութեանը նուիրել: Ուստի գեղջկական անշուք դպրոցի մը մէջ պարզ կրթութիւն մը տալէ յետոյ, բարձրագոյն վարժարան մը զրկելու գաղափարը կը յղանան իրենց մէջ: Ուստի 1891ին Եփրատ գօլլէճ զրկուեցան իւրթական անձուկ պարագաններու տակ իր արգականներէն մէկուն աջակցութեամբը:

Դպրոցէն ելլելէն վերջ (Եփ. գօլլէճէն շրջանաւարտ եղած չէ, այլ գօլլէճի «Սփէշը» կարգէն), մէկ քանի տարիներ ուսուցչական պաշտօնով զբաղած է: 1902ին Խարբերդի Աստուածաբանական դպրոցը մտաւ և երկու տարուան դասընթացքի մը հետեւելով, երբ շրջանաւարտ եղաւ, գնաց Հապուսի գիւղը և հոն երկու տարի պաշտօնավարեց իրրև քարոզիչ-ուսուցիչ: 1903ի վերջը եկաւ Բալու և ահա ասով լման 7 տարի է որ Բալուի Հայ Աւետարանական Իկեղեցւոյն մէջ կը պաշտօնավարէ իրրև քարոզիչ:

### Տ. ԱՐԱՒԵՆ ՎՐԴԱՅ. ԵԱՐԱՐՔԻՆԵԱՆ,

Ծնած է Այնթապու մէջ, հոն նախնական դպրոցները աւարտելէն յետոյ, տեղւոյն Կ. Թ. Գօլլէճէն և Մարաշի Աստուածաբանական վարժարանէն արտօնուած է: Քաջ գիտէր Հայերէն, Տաճկերէն և Անգղիերէն: Այնթա-



Տ. ԱՐՄԷՆ ՎՐԴԱՏ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵՅԱՆ

պու 1895ի Հայկական ջարդէն յետոյ քահանայացած է անուըն անփոփոք մնալով. բանի մը տարի հոն պաշտօնավարած է միանգամայն որբանոցի քարտուղարութիւն ալ ստանձնելով. յետոյ Հայէպ հրաւիրուած է ուր իր կենսակիցը՝ երկուհին կորսնցընելու դժբաղդութիւնը կ'ունենայ, ուրկէ քննիչի պաշտօն ալ վարած է Իսկէնտերուն, Բէյլան և Քէսասպ, Ազգային Եկեղեց. գործերու համար Կիլիկիոյ Կաթողիկոսին քանիցս հրաւերին վրայ 1909, Մեծ պահոց մէջ վարդապետական վեղար զգենլով սիրոյսօժար կամօք ստանձնած է Անտիոքի վիճակին Առաջնորդութիւնը. դեռ առաջին անգամ իր թէմը այցելութեան ելած էր Վարդապետական առաջին պատարագը Քէսասպ մատուցած է. թեմական այցելութեան Անտիոք վերադարձած էր, ի Սիս մույրավանքը գումարուելիք հանրական ժողովին ներկայ գտնուելու համար. ահա 1906 Ապրիլ 7/20 Աւետեաց տօնին Հայկական ջարդին զոհ կ'երթայ. իր բն սղակէզ մօրուքը նախ բռնկցնելով և Երջանկայիշատակ հովուէն շատ բան կը յուսացուէր, Անտիոքի լքեալ վիճակը բարւոքելու համար Ինչպէս Վարդանանց խմբին Արսէնը, ինքն ալ նոր Վարդանանցի կ'ընկերանայ օրհնեալ Ըլլայ իր յիշատակը... ամէն Վ. Վ.



ՊԱՏ. Մ. Զ. ՇԱՄԻԿՅԱՆ (Հանգուցեալ)  
Քարոզիչ Պրուսայի Աւես. ժողովրդին

Պատ. Յովար Ս. Արապեան, Ծնեալ  
ի Պարտիզակ 1868 Օգ. 28ին, ուր իր նախնա-  
կան կրթութիւն ստանալէ յետոյ տեղւոյն  
Բարձրագոյն վարժարանը կը մտնէ: Նա էր  
լուրջ, անկեղծ, համակիր և զուարթ, ուս-  
ման ծարաւի, յարատեւող ու կարգապահ  
ուսանող, ուստի իր ընկերներէն առհասարակ  
կը յարգուէի իւր «մեծ եղբայր»: Ընթացա-  
ւարտ եղաւ 1889ին ու «Ծաղկոց»ին ուսուցիչ  
կարգուեցաւ, նոյն պաշտօնով Ռոտտլիոյ  
փոխադրուեցաւ 1892ին և մինչև 1896ին վա-  
րեց իր պաշտօնի Պարտիզակի Բարձր. վար-  
ժարանի մէջ կարճ ժամանակ պաշտօնավա-  
րելէ ետքը 1807ին Տարսօնի գօլէճը պաշտօնի  
կը կոչուի: Տարի մը ետք Նիկոմիդիայի մէջ  
մէկ տարի կը գործէ իւր ուսուցիչ-քարոզիչ  
Աւետ. Ժողովրդական Յետոյ 4 տասուան գոր-  
ծունէութիւն մը կ'ունենայ Պարտիզակի  
Բարձր. վարժարանին մէջ: Տարի մ'ալ Ռո-  
պէրթ գօլէճի մէջ գործակատարի պաշտօն  
վարելէ զինի 1903ին Մարսուանի Աստուա-  
ծաբանական ճեմարանը, ուր 3 տարի յաջող  
ընթացք մը վարելէ ետքը վկայական ի ձեռին  
կը դառնայ Պարտիզակի Քանի մը ամիսէն  
Պատ. Յովար Պրուսայի Աւետ. բեմին կը հրա-





ՊԱՏ. ՅՈՒՆԱՅ Ս. ԱՐԱՊԵԱՆ

ւիրուի. նախ ինք առանձին գալով կը մնայ  
քանի մը ամիս և ապա ծննդավայրը վերա-  
դառնալով կ'ամուսնանայ Օր. Ռերեկայ Տէր  
Ստեփանեանի հետ ու կը վերադառնայ  
Պրուսայ, ուր նորագոյն քարոզիչը խանդա-  
վառ ընդունելութիւն կը գտնէ: Կարճ միջո-  
ցի մէջ Պատ Յովար գրաւեց ժողովրդեան  
համակրութիւնը. քարոզներն սիրուած էին.  
հեղ և խաղաղասէր ընութեամբը սկսած էր  
փափաքելի ուղղութիւն մը առլ, երբ նոյն  
խոյն սյդ նպատակաւ եղած ջանքերու առթիւ  
և միսինարին և ժողովրդեան մէջ հաշտու-  
թիւն գոյացնելու համար գիշեր ցերեկ հոս  
հոն վաղել ստիպեալ ըլլալով, աղէտալի  
պաղաւտութիւն մը կ'ունենայ ու կ'իյնայ ան-  
կողին, Տօգ. Տէր Ստեփանեան կը փութայ իր  
քեռայրին քով, հիւանդը կ'ապաքինի և իր  
ծննդավայրը կը գառնայ կատարելագէս ա-  
ռողջանալու համար, բայց աւս'ղ նա իր հո-  
գին աւանդեց Փետր. 14ին 1908, իր պաշտած  
և ծառայած Երկնաւոր Հօրը ձեռքը:



# Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ Ն Ե Ր

Օրացոյցիս մէկ էջին վրայ եղած ծանուցմանց համար պէտք է վճարել՝ մէկ Օսմ. ոսկի և մէկ Մէճիտ. Յիշելով որ Հանրագիտական Օրացոյցը գրեթէ ամէն Հայ գտնուող տեղ ընդունելութիւն գտած է: Կ'արժէ գործի տէրերու հրատարակել տալ իրենց ծանուցումներն Օրացոյցիս միջոցով, վճարելով սոյն ջնջին գումարն: Գիմեւ Մատթէոսեան Տպարան, Կ. Պոլիս:

## ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՐԲԱՆՈՑԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

Կը շարունակէ ինչպէս ցարդ նաև յայտմ. հետէ ընդունիլ ամէն տեսակ ապուրանքներ և գոհացուցիչ կերպով հայթայթել Հայրենեաց և Արտասահմանի մեր բարեկամներէն մեզմէ խնդրուած իրեղէններն, ընդ որս ընտիր Շերամի Հունա, որ, եթէ ըստ որդեգրեալ օրինաց Շերամաբուծական վարժարանի, նայուելու ըլլան, տուփին առնուազն 50 քիլօ բերք կ'արտագրէ: Գպրոցական պիտոյք, Պրուսայի յատուկ ապրանքներ, բաղնիքի խավուններ, մետաքսեղէն ալլազան նիւթեր, դիւրամատչելի դնով կը խրկուին խնդրողներու: ՄԻՇՏՏԻԿԱՆԻՍԻԿ:

### ՆՈՒԻՐԱՑՈՄՍ

### ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՐԲԱՆՈՑԻՆ

Ստորագրեալս սիրապօստ կը նուիրեմ ի նպաստ Արեւելեան Ռեքամոյին ..... դահեկան եւ կը խրկեմ (ներկայ նամակագրութիւնով), ( Մանսպոսթով):

Նուիրատու .....

Բնակավայր .....

Թուական .....

1912

### ԱՐԵՆԵՂԵԱՆ ՈՐԲԱՆԳ

Պ Ր Ո Ւ Ս Ա

Հաստատութիւնս կը բոլորէ ներկայ տարւոյ Յունիս 1/14ին իր 38րդ տարեշրջանը: Բարերար անձանց յօժարակամ սիրոյ նուէրները և Օրացոյցիս ու մեր ուրիշ հրատարակութեանց, ինչպէս նաև շերամարուծութեան և տարեկան Պագարի հասոյթներն են միակ միջոց մեր տարեկան ծախսուց բարձման:

Առանց դաւանական խտրութեան, կ'ընդունուին որք և կարօտ Հայ աղջիկներ, որոնց կը տրուին ծնողական ամէն խնամք, բնտանեկան կրթութիւն ու դործնական պարզ դաստիարակութիւն մը:

Կը խնդրուի Օրացոյցիս իւրաքանչիւր ընթերցողէ տարին անգամ մը վճարել շնչին դումար մը ու գնել Օրացոյց մը, և այսպէս նպաստել սոյն բարեգործական մեծ ձեռնարկին: Ինչպէս նաև ԿՏԱ.Կող, քանի որ Հաստատութեանս շէնքերը յազգի եղած են:

Կը խնդրենք նաև գնել մեր միւս հրատարակութիւններէն, որոնց հասոյթը Որբանոցիս յատկացուած է:

Մ Ր Յ Մ Ա Ն Տ Ո Ւ Ս Ա

Հ Ա Ն Ր Ա Վ Ի Տ Ա Կ Ա Ն Օ Ր Ա Յ Ո Յ Յ Ի

1 9 1 2

Անուն

Բնակատեղի

\* \* Որբանոցիս տարեկան Պազարը տեղի կ'ունենայ Համբարձման օրը, Մայիս 16/3ին, Եջ. օր: Եյն օրը Հաստատութեանս սրահին մէջ խռեով կը բաժնուին որբերու ձեռագործները և բարեբարներէ նուիրուած զանազան օգտակար իրեղէնները:

Կը խնդրուի այս տեսակ իրեղէններ մինչև 2ասիկ զրկել Որբանոցիս Տնօրէնութեան կամ Տնար Գարբիէ Ե. Գարբիէլեանի, Թիւ 5, Պայպը Հասուս, Կ. Պոլիս, որպէս զի կարող ըլլանք զանոնք շահագործել Համբարձման օրը:

\* \* Որբանոցս ունի նաև իր տրամադրութեան տակ 500 տուփ ամենաընտիր շերամի հունձ, զոր կը վաճառէ ի նպաստ Հաստատութեանս Պայմաններու համար պէտք է գիմել Որբանոցիս Տնօրէնութեան մինչև Յունիւ 1/14:

Կը խնդրուի որամը մանսա-Բոսքով, իսկ իրեղեկները Բոյի-Բոսքով զրկել:

Կը խնդրուի Պասուաժան ընթերցողէն մեկ ծանօթ համոզել որ հաս մը Օրացոյց գրե :





## ՄՕՏԱԻՈՐԱԳՈՅՆ ԱՊԱԳԱՆ

ՊԻՏԻ ԺՊՏԻ ՄԻՄԱՅՆ ԱՆԳԼԻԱԳԷՏԻՆ

Քանի որ անգլիախօս դրամատէրներ մօտերս պիտի սկսին հսկայ ձեռնարկութիւններու մեր երկրին մէջ, թէ՛ ծովու և թէ՛ ցամաքի վրայ, ՅԱՅՆԺԱՄ ՊԻՏԻ ՓՆՏՈՒՈՒԻՆ ԱՆԳԼԻԱԳԷՏ ՀԱՅԵՐ: Հայ երիտասարդը պարտի առիթէն օգուտ քաղել, եթէ ոչ պիտի ողբայ ի զուր: Հրեան, Յոյն և Պուլկարն ոգի ի բռին կը ջանան Անգլիերէն լեզուն իւրացնել: Հայն անտարրեր կեցած է դեռ: ԱՆԳԼԻԻՆ ԸՆԶՈՒԻՆ ՈՍԿԵՂԷՆ ԲԱՆԱԼԻՆ, գին 12 դրուշ, իր տեսակին մէջ ՄԻԱԿՆ է, որ մի քանի ամսուան յարատև և կանոնաւոր ուսումնասիրութեամբ ԱՆԳԼԻԱԳԷՏԻ ՄԸ ԿԸ ՎԵՐԱԾԷ ՈՒՍԱՆՈՂԸ:

UNIVERSITY OF TORONTO LIBRARY



059

2-17

2013

« Ազգային գրադարան



NL0032167

5245

